

ՀԷՆՐԻ ՎԱՐՆԸՄ

ՆԿԱՐԱԳԻՐ

ԿԸՄ

ԿՆԸՆԻՔԻ ՈՒՂԵՑՈՅՑԸ

*Հայաստանի* ՅՈՒՂ. Յ. ՍԼՐԳԻՍԵԸՆ

ՀԷՆՐԻ ՎԱՐՆԸՄ

ՆԿԱՐԱԳԻՐ ԿԸՄ ԿԵՆՏՐՈՆԻ ՈՒՂԵՑՈՅՑԸ

 OHAN PRESS

ՕՆԸՆ ՀՐԵՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ

**ՆԿԱՐԱԳԻՐ**

**ԿԱՄ**

**ԿԵԼՆԻՔԻ ՈՒՂԵՑՈՅՑԸ**



ՀԷՆՐԻ ՎԱՐՆԸՄ

---

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

Կ Ա Մ

Կ Ե Ա Ն Թ Ի ՈՒ Ղ Ե Յ Ո Յ Յ Ը

Հայաստանի ՅՈՒՆԵՍԿՈՒՄԻ ՄԱՐԳԻՍԵԱՆ

Եդիթ Քալի

1938

OTHER BOOKS BY OHAN PRESS

---

Carvings from an Heirloom: Oral History Poems • 1983  
They Called Me Mustafa: Memoir of an Immigrant • 1992  
From Kessab to Watertown: A Modern Saga • 1996  
At Quarter Past Reality: New and Selected Poems • 1998  
They Called Me Mustafa: Memoir of an Immigrant  
(Second Edition) • 1999  
«Վարժապետի Խելք» — Յօդուածներ Յ. Յ. Սարգիսեանի գրչէն  
հրատարակուած հայ մամուլի մէջ, 1935-1961 • 2000  
Տարիներու Հաւաքածոյ — Հայ մամուլի մէջ տպուած եւ  
անտիպ գրութիւններ • 2002

Օհան Հրատարակչատունը հիմնուած է 1983ին, Ուոքըրթաունի մէջ (Մեքսիկոյէ), Հելին Փիլիպոսեանի կողմէ, գործակցութեամբ Յակոբ Սարգիսեանի: Իբր անձնական ձեռնարկ՝ Հրատարակչատունը կը հրատարակէ միայն հիմնադիր ամուլին գիրքերը:  
Հրատարակչատունը անուանուած է Յակոբ Սարգիսեանի հօր եւ այս գիրքի թարգմանիչ Յովհաննէս Յ. Սարգիսեանի անունով:

*Manufactured in the United States of America*

Design and typography by Hagop Sarkissian

November, 2003

HENRY VARNUM

Character  
OR  
The Guide to Life

*Translated, with additional material, by*  
HOVHANNES H. SARKISSIAN



OHAN PRESS

171 Maplewood Street

Watertown, MA 02472-1324

U.S.A.

(617) 926-2602    [hsarkiss@comcast.net](mailto:hsarkiss@comcast.net)

<http://home.comcast.net/~hsarkiss/>

Արարեստեան

202

Բարեկամներ Պատանդներու

« ՍՄԲԱՏ ՂԱԶԻԼԵԱՆ Ի  
ՏԻՊՐԱՆ ՄՕՂԻԿԵԱՆ Ի

« ՊՍ ԲԱՆԻ ԳՐԻԻ ԿԵՐԵ ԻՆՏԵՆՏԻՎՆԵՐ,  
« Պատանդները յայտնու ինքնաբերական

Զ. Զ. Ա.

## ԹՆԵՐԳՄԱՆՆԶԻՆ ՅԱՌԱՋԱՆԲԱՆԸ

Մարդուն ֆակտագիրը իր նկարագիրեն կախում ունի: Կեանքի պայքարին մեջ կը յաջողի այն մարդը՝ որ ազնիւ, աշխատասէր, պարկեշտ եւ վստահելի մէկն է. իսկ այն մարդը՝ որ ծոյլ, արքեցոյ, խաբեբայ, շռայլ ու անպարկեշտ մէկն է, չի կրնար յաջողիլ բնականաբար: Ասիկա կը նշանակէ թէ նկարագի՛րն է որ կը վնոէ մարդուն յաջողութիւնը կամ ձախողութիւնը, երջանկութիւնը կամ ապերջանկութիւնը:

Ասկէ կը հետեւի թէ ռեւէ մարդու համար նկարագրի կազմութեանն աւելի կարեւոր ու կենսական գործ չկայ եւ չի կրնար ըլլայ, քանի որ իր ամբողջ ապագայ կեանքը կախում ունի իր նկարագրի տեսակէն: Ոեւէ մէկը չի կրնար անհոգ գտնուիլ այս մասին, առանց իր ապագան վտանգելու:

Նկարագրի հիմը ընտանիքին մէջ կը դրուի, ու դպրոցը կը շարունակէ ընտանիքին գործը: Այս երկու հաստատութիւններն են՝ որ կը վնոեն ազգի մը ֆակտագիրը: Մարդկութեան ներկան ու ապագան կախում ունին հոն տրուող դաստիարակութեան տեսակէն:

Ցաւալի է ըսել որ մեր կրթական մտայնութիւնը ժամանակավրէպ մըն է: Մեր կրթական ծրագիրները դաստիարակութեան հին իտէալներու եւ չափանիշներու վրայ հիմնուած են, այն է միտքը լեցնել նոյն պաշարով: Բաւական է որ աշակերտ մը ստանայ բարձր նիշեր եւ փայլուն վկայական. այդպիսին կը ծափահարուի մեր մէջ եւ տիպար աշակերտ կը համարուի: Ըսել է թէ մեր կրթական ծրագիրները մանուկին *միտքը* նկատի կ'առնեն աւելի քան թէ *նկարագիրը*: Մենք մտքի հիացողներ ենք աւելի քան թէ նկարագրի:

Ժամանակն է որ դարմանենք այս սխալը:

Ժամանակն է որ ըմբռնենք թէ *մտքով* զարգացած մէկը՝ եթէ լաւ *նկարագիր* չունենայ, վնասակար կ'ըլլայ աւելի իր համայնքին քան թէ օգտակար: Թողո՛ւնք այլեւս լատինական կրթութեան այս մտայնութիւնը եւ դառնանք անկլօ-սաքսոն մտայնութեան, եւ անկլօ-սաքսոն ժողովուրդներու պէս՝ ֆիզիքական ու մտաւորական կրթութեան չափ, եթէ ոչ աւելի, ոյժ տանք բարոյական կրթութեան եւ նկարագրի կազմութեան:

Այս մարզին մէջ օգտակար ըլլալու փափաքով է որ լոյս կ'ընծայենք այս գիրքը: Այս գրքին բնագիրը անգլիերէն է, գրուած



Ամերիկայի մէջ եւ ամերիկեան միջավայրին համար: Գիրքը մեր միջավայրին յարմարցնելու համար յարմար դատեցինք գայն *հայացնել* քան թէ տառապէս թարգմանել: Գիրքը համաօտեցինք ընտրելով անոր մէջէն լաւագոյն նիւթերը, գոր դասաւորեցինք այբուրենական կարգով, թէեւ բնագիրը տարբեր դասաւորում ունի: Յարմար դատեցինք նաեւ անլցնել առածներ եւ ընտիր ասացուածքներ՝ որ ծանօթ են մեր մէջ:

Գիրքը գոհար մտածումներու ընտիր հաւաքածոյ մըն է, փունջ մը խորհողներու եւ իմաստուններու մտածումներէն, որոնք կեանքի փիլիսոփայութեան բիւրեղներ են: Առածներն ու կտրուկ խօսքերը անլի ազդեցիկ են քան երկար խրատները: Արդարեւ, հին Աթէնքի երիտասարդներուն Սոկրատի տուած խրատները մոռցուած են, բայց իրեն վերագրուած «Ծանի՛ր գէեզ» կտրուկ խօսքը մինչեւ այսօր կը մնայ:

Այս գիրքը կրնայ դպրոցներու մէջ գործածուիլ որպէս բարոյագիտութեան դասագիրք, եւ ընտանիքներու մէջ՝ որպէս առաջնորդ բարոյական կրթութեան: Ան կրնայ օգտակար ըլլալ թէ՛ երիտասարդներու եւ թէ՛ չափահասներու. ան կը պարունակէ ամէն տարիքի յարմար նիւթեր:

Հեղինակին հետ մենք ալ կը հաւատանք՝ թէ այն որ մտա-  
նութեամբ կը կարդայ այս գիրքը եւ *հաւատարիմ* կը մնայ անոր ուղղութեան, անկարելի է որ գէշ մարդ ըլլայ, թէեւ կրնայ մեծ մարդ չըլլալ:

Յ. Յ. Ս.

# ՀԵՂԻՆԸԿԻՆ ՆԵՐԱՇՈՒԹԻՒՆԸ (ԸՄՓՈՓՈՒԸՄ)

Բարեկամ մը ինձի դիտել տուաւ թէ ինքը չի կրնար իր գաւակները հանրային վարժարան դրկել «գործարանի մանուկներու պատնառաւ»: Ինչո՞ւ համար սակայն գործարանի մանուկները յարմար ընկերներ չըլլան ուրիշ մանուկներու: Պատնառը այն է որ շատ ծնողներ՝ մանաւանդ բանուոր դասակարգէն՝ կը թերանան իրենց գաւակներուն բարոյական կրթութիւն տալու: Ուսեալ դասակարգէն ոմանք իրենց գաւակներուն կ'ուսուցանեն նշմարտութիւնը, բայց պարկեշտութեան մասին երբեք չեն խորհիր: Ոմանք ալ պարկեշտութիւնը կը սորվեցնեն, սակայն կը մոռնան քաղաքավարութիւնը: Այսպէս, յանախ կը պատահի որ մանուկները արհամարհեն իրենց ընկերներուն բարոյական այն գիծերը, գոր իրենց ծնողքը թերացած են իրենց ուսուցանելու:

Մտածեցի որ համաշխարհային հաւանութեան արժանացած բարոյական նշմարտութեանց դասագիրք մը կրնայ մեծ ծառայութիւն մատուցանել ծնողներու, ուսուցիչներու եւ աշակերտներու: Մտածումս գործի վերածեցի յօրինելով այս գիրքը, որուն պարունակութիւնը հաւաքուած է զանազան գիրքերէ, գոր առիթը ունեցած եմ կարդալու պարապոյ ժամերուս: Այնպէս կը կարծեմ որ հաւաքած եմ լաւագոյն մտածումները լաւագոյն մարդոց որ երբեք ապրած ըլլան:

Բոլոր ընկերային օրէնքները բազմաթիւ սերունդներու իմաստութեան եւ փորձառութեան արդիւնքն են: Ես հաւաքած եմ միայն այն նշմարտութիւնները, որ ընդհանուրին հաւանութեան արժանացած են: Նպատակս *իմքնատարութիւն* չէ եղած, այլ *գործնականութիւն* եւ *օգտակարութիւն*:

Այս նպատակին ծառայող ուրիշ գիրքերու հանդիպած եմ, սակայն բոլորն ալ գրուած են ուսեալ ու զարգացեալ մտքերու համար, որով անյարմար են մատաղ սերունդին գործածութեան:

Ասիկա առաջին գիրքն է, որքան որ տեղեակ եմ, որ կը փորձէ լեցնել բարոյական կրթութեան գրքի մը պակասը, յարմար թէ՛ մատաղ սերունդին եւ թէ՛ չափահասներու: Ձեռնարկս յաջողած պիտի նկատեմ, եթէ այս գիրքը՝ իր բոլոր թերութիւններով՝

կարենայ լաւագոյն կեանքի մը առաջնորդել ընթերցողներէն  
ն'ել մէկը:

Ու ն'ել ընթերցող՝ որ հաւատարմօրէն կը հետեւի այս գրքի  
ուղղութեան, անկարելի է որ գէշ մարդ ըլլայ, թէեւ կրնայ մեծ  
մարդ չըլլալ:

Հ. Վ.

## ՑՆՆԿ ՆԻԺՈՑ

1. Աստուած . . . 1	31. Ժամանակ . . . 34
2. Առողջություն . . . 2	32. Ժառանգություն . . . 35
3. Աշխատություն . . . 4	33. Ժուժկալություն . . . 36
4. Ամուսնություն . . . 5	34. Իմաստություն . . . 37
5. Առաքինություն . . . 6	35. Ինքնավստահություն . . . 38
6. Անկեղծություն . . . 7	36. Լաւագոյնդ ըրէ . . . 39
7. Ազատություն . . . 8	37. Լռություն . . . 40
8. Արդարություն . . . 9	38. Խաղաղություն . . . 41
9. Առիթ . . . 11	39. Խիղճ . . . 43
10. Այսօր . . . 11	40. Խնայողություն . . . 44
11. Ազահություն . . . 12	41. Խոհեմություն . . . 45
12. Ամմահություն . . . 13	42. Խորհրդածություն . . . 46
13. Բախտ . . . 14	43. Խրատ . . . 47
14. Բանականություն . . . 16	44. Ծնողք . . . 48
15. Բարեկամություն . . . 17	45. Ծուլություն . . . 49
16. Բարկություն . . . 18	46. Կամք . . . 50
17. Բնություն . . . 19	47. Կանոնաւորություն . . . 50
18. Գեղեցկություն . . . 20	48. Կեանք . . . 51
19. Գույթ . . . 21	49. Կեղծաւորություն . . . 53
20. Դաստիարակություն . . . 22	50. Կենցաղագիտություն . . . 54
21. Դժուարություն . . . 23	51. Կին . . . 55
22. Դրամ . . . 24	52. Կոչում . . . 57
23. Եսասիրություն . . . 26	53. Կրօնք . . . 58
24. Երկչոտություն . . . 26	54. Հագուստ . . . 59
25. Երջանկություն . . . 27	55. Համբաւ . . . 61
26. Չոհողություն . . . 29	56. Համբերություն . . . 61
27. Չուարթություն . . . 30	57. Հայրենասիրություն . . . 62
28. Ընթերցանություն . . . 31	58. Հանգիստ . . . 64
29. Ընկերակցություն . . . 32	59. Հաւատք . . . 65
30. Ընտանիք . . . 33	60. Հիացում . . . 66

61. Հնագանդություն . . . 67	82. Պատերազմ . . . 90
62. Հպարտություն . . . 68	83. Պատրաստություն . . . 91
63. Ըշմարտություն . . . 69	84. Պարզություն . . . 92
64. Մանկություն . . . 70	85. Պարկեշտություն . . . 93
65. Մարդ . . . 71	86. Պարտականություն . . . 94
66. Մեծություն . . . 73	87. Պարտք . . . 95
67. Միջավայր . . . 74	88. Պզտիկ բաներ . . . 96
68. Մտածում . . . 75	89. Պետքը . . . 97
69. Մրցում . . . 76	90. Սեր . . . 98
70. Յաջողություն . . . 77	91. Վիշտ . . . 100
71. Յառաջդիմություն . . . 78	92. Վիատություն . . . 101
72. Յարատեություն . . . 80	93. Տգիտություն . . . 102
73. Յետաձգում . . . 81	94. Փառասիրություն . . . 103
74. Յոյս . . . 81	95. Փորձառություն . . . 105
75. Նախանձ . . . 83	96. Փորձություն . . . 105
76. Նախատեսություն . . . 83	97. Զաղաքավարություն . . . 106
77. Ներում . . . 84	98. Զաջություն . . . 107
78. Նկարագիր . . . 85	99. Ըննադատություն . . . 109
79. Նպատակ . . . 86	100. Օրինակ . . . 110
80. Ունակություն . . . 87	
81. Ուսում . . . 88	

## ԿԵՆՍԱԸԳՐԱԿԸՆ ԿԸՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Հակառակ բազմաթիւ փորձերու, անկարելի եղաւ ունէ տեղեկութիւն ձեռք ձգել սոյն գրքի հեղինակ Հէնրի Վարներմի մասին:

\* \* \*

Յովհաննէս Յովսէփ Սարգիսեան ծնած է 1890ին, Քէսապ, Սուրիա, Հաթուրեան ընտանիքին մէջ:

Նախնական ուսումը ստացած է իր ծննդավայրին մէջ, ապա անցած է Այնթապի Վարդանեան վարժարանը: Հիւանդութեան պատճառով երկու տարի ետք վերադարձած է իր ծննդավայրը, ուրկէ միսիոնարուհի Միս Զեմպրզի կարգադրութեամբ դրկուած է Տարսնի Սէյմք Փօլ ամերիկեան գոլէնը:

Արձանագրութեան պահուն իր մականունը Հաթուրեանէ փոխուած է Սարգիսեանի, իր մեծ հօրը անունով:

Առաջին Աշխարհամարտը ընդհատած է իր ուսումը: Զինուորագրուելով Օսմանեան բանակին, պատերազմի տարիները անցուցած է Տարսնեան լեռներուն մէջ նամբաներ նորոգող վաշտի մը մէջ:

Պատերազմէն ետք տարի մը եւս ուսանելով, 1920ին վկայուած է Տարսնի գոլէնէն, Պսակաւոր Արուեստից տիտղոսով:

Քանի մը տարի ուսուցչական պաշտօններ վարելէ ետք, մտած է Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական Ճեմարանը, նախ Աթէնք, ապա Պէյրութ, ուրկէ շրջանաւարտ եղած է 1933ին:

Ապա մինչեւ իր հանգստեան կոչուիլը վարած է ուսուցչական եւ այլ պաշտօններ:

Յ. Յ. Սարգիսեան եղած է մոլի ընթերցող մը: Անոր նախասիրած նիւթերը եղած են պատմութիւն, կրօնք եւ ընկերային գիտութիւններ:

Աշխատակցած է բազմաթիւ հայ թերթերու, ինչպէս «Զարթօնք», «Ազդակ», «Առաւօտ», «Այգ», «Զանաւեր» եւ



1937

«Պատանեկան Արձագանգ» (Պէյրուք), «Պայֆար», «Նոր Օր» եւ «Հայաստանի Կոչնակ» (Միացեալ Նահանգներ):

Սոյն յօդուածներու հաւաքածոն, 521 էջերով, հրատարակուեցաւ 2000ին, Օհան Հրատարակչատան կողմէ:

Իր հեղինակած «Կրօնք եւ անոր դերը» գիրքը լոյս տեսաւ 1990ին, Պէյրուքի մէջ:

Ամուսնացած է Հայկուհի Թալուֆնեանի հետ, 1926ին: Ունեցած են վեց զաւակներ:

# ՆԱԸՐԱԳԻՐ

ԿԱՄ

## ԿԵԼՆԻՔԻ ՈՒՂԵՑՈՅՑԸ

---

### 1. ԱՍՏՈՒԱԾ

- Աստուած բոլոր բաներուն Առաջին Պատճառն է:
- Աստուած ստեղծած է ամբողջ տիեզերքը, եւ ինքը կը կառավարէ զայն:
- Աստուած կատարեալ է, անիկա ճշմարտութեան Աստուածն է, ճշմարիտ եւ արդար:
- Աստուած կենդանիներուն Աստուածն է, ո՛չ թէ մեռեալներուն:
- Աստուած մարդուն տեսանելի չէ, բայց իր ներկայութիւնը լիովին յայտնուած է անոր բանականութեան:
- Գոհացէ՛ք Տերոջմէն, վասնզի անիկա բարի է, եւ անոր ողորմութիւնը՝ յաւիտեան:
- Դուն քու Տեր Աստուածդ պիտի պաշտես, եւ զայն միայն պիտի պաշտես:
- Պաշտամունքի բոլոր վայրերը զԱստուած պաշտելու հրաւերներ են: Անոնց հանդէպ խոր յարգանք տածելու եւ, պաշտամունքներուն մասնակցիս կամ ոչ:
- Եկեղեցի յաճախելը եւ կրօնական պաշտամունքներու մասնակցիլը մեծապէս կը նպաստեն բարոյական նկարագրի կազմութեան:
- Ամէն գործ՝ որ կը թեթեւցնէ ո՛րեւէ ապրող արարածի վիշտն ու տառապանքը, զԱստուած օրհնելու գործ մըն է:
- Հաւատա՛ այն Աստուծոյ, որ քու մէջդ դրած է պարտականութեան օրէնքը, յառաջդիմութեան օրէնքը, եւ ուրիշներու ծառայելու օրէնքը:
- Եօթներորդ օրը քու Տեր Աստուծոյդ հանգստեան օրն է, այդ օրը ո՛րեւէ գործ ընելու չես:
- Այն որ կը սիրէ զԱստուած, կը սիրէ նաեւ իր դրացին:
- Լաւագոյնդ տալու եւ անոր՝ որ իր լաւագոյնը կուտայ քեզի:



15. Պահե՛ք Աստուծոյ պատուիրանքները իր սիրոյն համար, ո՛չ թէ վախի կամ վարձատրութեան համար:

16. Աստուած սուրբ է. մտքով, խօսքով եւ գործով մաքուր ըլլալ, կը նշանակէ ծառայել անոր՝ որ սրբութիւն է եւ կեանք:

17. Աստուծոյ հնազանդիլը բարոյականութիւն է, իսկ չհնազանդիլը՝ անբարոյականութիւն:

18. Բարոյական օրէնքներու անտեսումը ո՛րեւէ մէկուն կողմէ, ո՛րեւէ տեղ, եւ ո՛րեւէ ժամանակ, չ'արդարացներ քու ալ անտեսումդ, երբ գիտես թէ սխալ է:

19. Զու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ, քու բոլոր անձովդ, եւ քու բոլոր մտքովդ. ա՛յս է առաջին ու մեծ պատուիրանքը: Ու երկրորդը՝ ասոր նման՝ քու ընկերդ սիրես քու անձիդ պէս: Ասոնցմէ մեծ պատուիրանք չկայ:

20. Աստուած իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ, եւ անձրեւ կը դրկէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն:

21. Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ իր միածին որդին տուաւ, որպէսզի ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ:

22. Աստուած սէր է. այն որ կը սիրէ, Աստուծոյ զաւակն է:

23. Աստուած հոգի է, եւ անոր երկիրպագողները պէտք է հոգիով եւ ճշմարտութիւնով երկիրպագեն:

## 2. ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

1. Կեանքէ վերջ է՛ն կարեւոր բանը մարդուն առողջութիւնն է:

2. Աշխարհի բոլոր գանձերը չեն կրնար բաղդատուիլ առողջութեան հետ:

3. Առողջ մարդու համար սոսկ ապրիլը մեծ երջանկութիւն է:

4. Բնութիւնը առողջութեան պայման դրած է կանոնաւորութիւնը: Առողջ ըլլալու համար կարգ ու կանոն դնելու ես գործիդ, քունիդ, ստամոքսիդ, հաճոյքներուդ եւ զբաղումներուդ մէջ:

5. Մեծ ասպարեզներու համար ֆիզիքական ոյժը ընդհանուր պայման է:

6. Առողջութիւնը նկարագրի վրայ մեծ ազդեցութիւն ունի:

7. Առողջութիւնը կրծող որդեր են նախանձը, ատելութիւնը, եսամոլութիւնը, անպարկեշտութիւնը, ջղայնութիւնը, սրտնեղութիւնը, անբարոյականութիւնը, անչափաւորութիւնը, խղճի խայթը, եւն.:

8. Առողջութեան մեծագոյն ազդակներն են ջուր, օդ եւ արեւ: Ասոնք ձրի են, եւ ամենուն տրամադրութեան տակը:

9. Առողջութեան պայմաններն են մաքուր օդ, լաւ սնունդ, յարմար հագուստ, տեւական մարզանք, չափաւոր աշխատութիւն, եւ կանոնաւոր հանգիստ:

10. Առողջութիւնը, ոյժը եւ երկարակեցութիւնը անյեղի օրէնքներու վրայ հիմնուած են. դիպուածը ասոնց հետ գործ չունի:

11. Ձրի առողջութիւն մի՛ ակնկալէր. առանց վճարելու չես կրնար արժեքաւոր բան ձեռք անցընել:

12. Առողջութիւնը կը ստացուի ի գին մեծ զոհողութեանց: Առողջութեան տանող արքայական ճամբայ չկայ:

13. Հանճարը, գեղեցկութիւնն ու առաքինութիւնը առողջութեան յատկանիշներն են:

14. Առողջ մարմնի մէջ ընդհանրապէս առողջ միտք կը բնակի:

15. Վատառողջ մարմինը կրնայ ջլատել եւ խափանել առողջ մտքի գործունեութիւնը:

16. Առողջ մտածումներու ակը առողջ ուղեղն է:

17. Աւելի լաւ է առողջ մարմին մը անուսում մտքով, քան թէ ուսեալ միտք մը վատառողջ մարմնով: Իսկ է՛ն լաւն է առողջ մարմին մը առողջ մտքով:

18. Մարմինը մտքին ծառան է լոկ:

19. Առողջութեան յարգը այն ատեն միայն կը ճանչնանք, երբ ա՛լ ելած է մեր ձեռքէն:

20. Ո՛չ մէկ բան կրնայ առողջութեան տեղը բռնել. առողջութիւնը կորսնցնողը ամէն բան կորսնցուցած է:

21. Ուր որ արեւը չի մտներ, հոն բժիշկը կը մտնէ:

22. Աշխարհի բոլոր գանձերը չեն կրնար առողջութեան տեղը բռնել:

### 3. ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

1. Աշխատութիւնը աստուածային օրէնք է. «Քու հացդ քու ճակտիդ քրտինքովը պիտի ուտես», ըսած է Աստուած:
2. Այն որ չ'աշխատիր իրաւունք չունի ուտելու: Ասիկա ո՛չ միայն աստուածային օրէնք է, այլ նաեւ ընկերային օրէնք:
3. Աշխատութիւնը հանճարի փոխանորդն է:
4. Աշխարհի բոլոր գանձերը աշխատութեամբ միայն ձեռք կը բերուին:
5. Աշխատասեր աղքատը աւելի երջանիկ է քան ծոյլ հարուստը:
6. Աշխատութեան պարգեւներն են լա՛ն ախորժակ, լա՛ն մարտողութիւն, լա՛ն քուն, եւ հետեւաբար լա՛ն առողջութիւն:
7. Աշխատասերին համար ամէն բան դիւրին է, ծոյլին համար ամէն բան՝ դժուար:
8. Աղքատութիւնը աշխատասեր մարդու դռներն կը նայի, բայց չի համարձակիր ներս մտնելու:
9. Վա՛տ է այն՝ որ ձեռքի աշխատանքը վատ կը նկատէ:
10. Սեւ ձեռքերը ճերմակ հաց կը կերցնեն:
11. Յառաջդիմութիւն, հանգստութիւն, երջանկութիւն, եւ ուրիշ ամէն տեսակ օրհնութիւն աշխատութեան պտուղներն են:
12. Աշխատութիւնը կը փայլեցնէ, իսկ ծուլութիւնը կը ժանգոտեցնէ: Ո՞ր բանալին կը փայլի, — այն որ անդուլ կ'աշխատի:
13. Առանց աշխատութեան տաղանդն ու հանճարը ոչի՛նչ կրնան արտադրել:
14. Աշխատութիւնը դրախտի կը վերածէ անապատը, իսկ ծուլութիւնը անապատի կը վերածէ դրախտը:
15. Աշխատելով միայն կրնաս գերազանցել ուրիշները:
16. Կա՛մ դուն պետք է գործես, կամ թէ ուրիշ մը պետք է գործէ քու տեղդ:
17. Աշխատութի՛ն, աշխատութի՛ն,  
Ո՛րքան բարիք կու տաս մարդուն,  
Փառք ու պատիւ, մեծութիւն, գանձ,  
Քու պարգեւներդ են գերազանց:

#### 4. ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

1. Մարդ առանց կնոջ կես մարդ է, իր բնութիւնը կը պահանջէ միւս կեսը:

2. Ամուսնութեան մէջ երջանկութիւնը կախում ունի նախ նկարագիրէ, յետոյ փոխադարձ յարմարումէ կամ զոհողութենէ:

3. Երջանիկ ըլլալու համար մարդու մը կողակիցը պէտք է ըլլայ նաեւ իր հոգեկիցը:

4. Իր կնոջ անհաւատարիմ մարդը մեծ ոճիր գործած կ'ըլլայ իր անձին, իր ընտանիքին, իր ազգին, եւ Աստուծոյ դէմ:

5. Ամուսնական ապերջանկութեան պատճառները ո՛չ այնքան ընտրութեան սխալներուն մէջ են, որքան ամուսնութենէ վերջ գործուած սխալներուն մէջ:

6. Յաջող ամուսնութեան համար զգուշաւոր ընտրութիւնը պայման է: Ճաշակի, կրթութեան, ընկերային դիրքի, կրօնական հակումներու նոյնութիւնը անհրաժեշտ պայմաններ են:

7. Տարիքի շատ մեծ տարբերութիւնը կը վնասէ ամուսնական երջանկութեան:

8. Գէշ ու անառակ մարդիկ չեն ուզեր ամուսնանալ նոյն բնաւորութեան տէր աղջիկներու հետ, այլ կը փնտռեն մաքուր նկարագրի տէր աղջիկներ, վեր ամեն կասկածէ:

9. Ամուսնական կեանքի վտանգները ընդհանրապէս կնոջ կողմէն կուգան, եւ անոնց վնասներն ալ ընդհանրապէս կինը կը քաշէ:

10. Ոչի՛նչ այնքան կը խաղաղեցնէ մարդու մը աղմկայոյժ բնաւորութիւնը, որքան բարձր գաղափարի տէր կնոջ մը հետ ամուսնութիւնը:

11. Ամուսնութիւնը՝ իր բոլոր յուսախաբութիւններով, աւելի նպաստած է մարդկային յառաջդիմութեան, քան Աստուծոյ կամ մարդու կողմէ հնարուած ուրիշ ո՛րեւէ հաստատութիւն:

12. Ամուսնութիւնը՝ իր խորքին մէջ՝ փոխադարձ շահու եւ զոհողութեան վրայ հիմնուած է, եւ կը վտանգուի երբոր մէկը փորձէ վայելել անոր բարիքները առանց միւսին:

13. Ամուսնութեան մէջ շատ զեղծումներ կան անշուշտ, բայց անոնք չեն կրնար հերքել անոր օգտակարութիւնը, ո՛չ ալ նուազեցնել անոր արժէքը:

14. Ճշմարիտ ամուսնությունը մտքի միություն ըլլալու է, որքան որ սրտի միություն, եւ պետք է փոխադարձ յարգանքի վրայ հիմնուի, որքան որ փոխադարձ սիրոյ վրայ:

15. Կինը իրաւունք ունի պահանջելու իր ամուսինէն այն բաները, զոր ամուսինը կը պահանջէ իրմէ — մաքրութիւն, հաւատարմութիւն, պարկեշտութիւն, յարգանք, եւն.:

16. Երջանիկ է այն ամուսնությունը, որու մասին չի խօսուիր:

## 5. ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

1. Առաքինութեան ճամբան բաց է ամէնուն առջեւ. ակ կը հրաւիրէ ամէն մարդ եւ կ'ընդունի ամէն ոք անխտիր:

2. Քու անձիդ, քու նմաններուդ եւ Աստուծոյ հանդէպ պարտականութիւններդ լաւ կատարէ. ահա ա՛յս է առաքինությունը:

3. Առաքինությունը չարիքէ հրաժարիլ եւ կղզիացած ապրիլ չէ, հապա կարողութիւններդ ի բարին գործածել է:

4. Լաւ ընկերակցութիւնն ու լաւ խօսակցութիւնը առաքինութեան ջիղերն են:

5. Առաքինութեան օգուտներն ա՛յնքան բացայայտ են, որ չարերը յաճախ առաքինի կը ձեւանան իրենց շահախնդիր նպատակներն իրագործելու համար: Ըսել է որ չարերն ալ գիտեն թէ առաքինությունը օգտակար բան է:

6. Մի՛ գործեր ուեւէ չարիք՝ պզտիկ նկատելով զայն, եւ մի՛ անտեսեր ո՛ւեւէ առաքինութիւն՝ անկարեւոր նկատելով զայն:

7. Առաքինությունը ճշմարիտ ազնուութիւն է:

8. Եթէ աղքատությունը ժառանգած ես, դրամագլուխդ առաքինութիւնն է:

9. Մարդ կրնայ առաքինի ըլլալ առանց հարուստ ըլլալու, զինքը հարուստ ըլլալէ արգիլող բախտը չի կրնար արգիլել զինքը երջանիկ ըլլալէ:

10. Մարդիկ առաքինութեամբ միայն կը տարբերին իրարմէ, ո՛չ թէ ծնունդով:

11. Թո՛յլ տուր որ սերը թափանցէ ամէն բանի մէջ, եւ ահա ուրիշ ամէն առաքինութիւն պիտի ծնի անկէ, ինչպէս ծաղիկները կը ծլին հողէն:

12. Յաջողութեան առաքիլութիւնը ժուժկալութիւնն է. ձախողութեան առաքիլութիւնը՝ արիութիւնը, որ է՛ն հերոսական առաքիլութիւնն է:

13. Չեզոք կամ կրաւորական առաքիլութիւնները շատ արժէք չունին:

14. Անկեղծօրէն առաքիլութեան բաղձալ, զայն շահիլ է. եռանդով անոր վարձքին համար աշխատիլ, զայն ստանալ է:

15. Առաքիլութիւնները յաճախ թագնուած կ'ըլլան. կեանքի վճռական պահերն են որ դուրս կը բերեն զանոնք իրենց թագստոցներէն:

16. Ճշմարիտ յաջողութիւնը ապրուստ շահիլ, դրամ դիզել կամ ալ համբաւ շինել չէ, հապա նկարագի՛ր շինել է:

17. Մարդու մը առաքիլութիւնը պետք չէ դատել իր անսովոր եւ բացառիկ գործերէն, հապա իր սովորական գործերէն եւ իր առօրեայ կեանքէն:

## 6. ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆ

1. Ինչպէս որ կը մտածես, այնպէս խօսէ՛. ինչպէս որ երեւնալ կ'ուզես, այնպէս եղիր — ահա՛ անկեղծութիւնը:

2. Անկեղծութեան վճռական ապացոյցը սկզբունքի տեր ըլլալն է:

3. Եթէ կեղծիքը սովորութիւն եղած է քեզի, չես կրնար ուզած ատենդ անկեղծ երեւնալ: Անկեղծութիւնը ինքնաբոլիս ըլլալու է:

4. Անկեղծ ոգին ուրիշներու սրտին մէջ կը թափանցէ:

5. Երբ ուրիշներու համար կը գործես, մոռցի՛ր ինքզինքդ, եւ անոնց շահը փնտռէ:

6. Սկզբունքեղ մի՛ հրաժարիր, մինչեւ որ համոզուիս անոր սխալ ըլլալուն:

7. Բնութեան մեծութիւնը իր պարզութեան մէջն է:

8. Պարզութիւնը եւ վսեմութիւնը մօտիկ ազգականներ են:

9. Մեծութեան պայմաններն են անկեղծութիւնն ու խոնարհութիւնը:

10. Պարզ մեթոտները լաւագոյն մեթոտներն են:

11. Անկեղծութիւնը շփոթելու չէ տկարութեան կամ տգիտութեան հետ:

12. Մեծ ճշմարտությունները պարզ են:
13. Անկեղծությունն ու պարզությունը նկարագրի գրաւիչ յատկություններ են:
14. Նկարագրի պարզությունը խորունկ մտածողութեան բնական արդիւնքն է:
15. Նկարագրի անկեղծությունը կողմնացոյցի պէս մէկ ուղղութիւն միայն կը ճանչնայ— ճշմարտութիւնը:
16. Սրամիտ խօսքերը ասուպներու պէս կը սահին կ'երթան, բայց ազնիւ ու անկեղծ խօսքերը տեւական հետք կը թողուն:
17. Էն կակուղ խօսքերը Էն խորը կը թափանցեն:
18. Ազնիւ խօսքերը բալասանի պէս կ'ազդեն հոգիին վրայ:
19. Ազնութիւնը ոյժէն կրկնապատիկ զօրաւոր է:
20. Անկեղծությունը կեղծել անկարելի է:

## 7. ԱՉԱՏՈՒԹԻՒՆ

1. Ազատութիւնը կը կայանայ ընելուն մէջ ամէն բան՝ որ ուրիշին չի վնասեր:
2. Ազատութեան սահմանը կը հասնի մինչեւ ուրիշին իրաւունքը:
3. Բարոյականութիւնը ազատութենէ կախում ունի, որովհետեւ այն որ ազատ չէ, իր գործերուն հեղինակը չէ, եւ հետեւաբար պատասխանատու չէ անոնց:
4. Մարդկութիւնը շահաւոր կ'ըլլայ եթէ ամէն մարդ ազատ թողուի իր ուզածին պէս ապրելու, քան թէ բռնադատուի ուրիշին ուզածին պէս ապրելու:
5. Ընկերութեան իրաւունքները անհատին ազատութեան հակառակ չեն: Անհատին ազատութիւնը կը դադրի միայն այն ատեն, երբ ընկերութեան իրաւունքները վտանգի տակ ըլլան:
6. Անհատը գերիշխան տերն է իր անձին, իր մարմինին, եւ իր մտքին:
7. Պետութիւնը իրաւունք չունի միջամտելու քու անձնական մտածումներուդ, բայց իրաւունք ունի օգտուելու գործէդ, աշխատանքէդ եւ դրամէդ: Առանց այդ իրաւունքին անկարելի է պետական եւ հաւաքական կեանքը:
8. Ազատ չէ այն մարդը որ տնտեսապէս անկախ չէ:

9. Ազատութիւնը անհրաժեշտ է նկարագրի կազմութեան համար:

10. Ազատ չէ այն մարդը որուն ապրոստը կախում ունի ուրիշէն, որ կրնայ ուզած ատենը գործէ հանել զինքը:

11. Ամէն մարդ իրաւունք ունի իր կարծիքը ազատօրէն յայտնելու, բայց իրաւունք չունի զայն ուրիշին պարտադրելու:

12. Պատուաւոր վիճաբանութիւնն ու պարկեշտ քննադատութիւնը պէտք չէ որ ճնշուին կամ արգիլուին:

13. Ազատութիւնը բացարձակ ինքնակառավարում չէ, հապա ուզածիդ պէս կեանք վարելու ազատ ըլլալ է:

14. Ամէն քաղաքացի պարտի իր պետութեան օրէնքները սերտել եւ անոնց տեղեկանալ:

15. Ուրիշներու կարծիքը յարգէ, ինչպէս կ'ուզես որ ուրիշները քու կարծիքդ յարգեն:

16. Խղճի ազատութիւնը մեծ օրհնութիւն մըն է, եւ շատ սուղի նստած է մարդկութեան:

17. Ազատութիւնը վսեմ հոգիներու սնունդն է:

18. Ազատութիւնը չի տրուիր, կ'առնուի:

19. Ազատութիւնը բորակի կը նմանի, ո'րքան ճնշես զայն, ա'յնքան աւելի կ'ըլլայ անոր բռնկումը:

20. Ո'րքան հալածում, ա'յնքան տարածում:

21. Ո'վ ազատութիւն, քու անունովդ ի'նչ ոճիրներ կը գործուին:

## 8. ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

1. Արդարութիւնը նկարագրի ոյժն է:

2. Ամէն սրտի մէջ արդարութեան կշիռը կախուած է:

3. Ծշմարտութիւնը ճշմարտութեան սիրոյն համար պէտք է սիրես, եւ արդարութիւնը՝ արդարութեան սիրոյն համար:

4. Պէտք չէ որ աչառութիւն ընես, պէտք է որ իւրաքանչիւրին տաս իր արժանիքին համեմատ:

5. Ամէն պարագայի տակ վճիռը պէտք է տաս դատին համեմատ, ո'չ թէ անձին համեմատ:

6. Անկողմնակալութիւնը արդարութեան հիմն է, եւ արդարութիւնը՝ կառավարութեան հիմը:



7. Անաչառ մարդու համբաւ ունենալը մեծ արժէք ունի:
8. Արդարութիւնը կը կշռէ առանց նայելու թէ ո՛վ կայ նժարին մէջ, թագաւո՛ր թէ հպատակ, հարո՛ւստ թէ աղքատ, գիտո՛ւն թէ տգէտ:
9. Արդարութեամբ վճիռ արձակէ, ըլլայ քու ազգականիդ կամ նոյնիսկ քու անձիդ դէմ:
10. Ամէն ինչ որ մարդկային երջանկութեան կը նպաստէ, ուղիղ է, եւ ամէն ինչ որ մարդկային թշուառութիւնը կ'աւելցնէ, սխալ է:
11. Իրաւունքն ու արդարութիւնը անընկճելի են:
12. Պատուիրե՛ ամէն ինչ որ շիտակ է. արգիլե՛ ամէն ինչ որ սխալ է:
13. Մեծագոյն մարդը այն է որ անդրդուելի կամքով ուղիղ ճամբան կ'ընտրէ:
14. Ո՛չ մէկ դատ լուծուած կը համարուի, եթէ արդարութեամբ լուծուած չէ:
15. Ո՛չ մէկ բան հաստատուն է, եթէ արդարութեան վրայ հաստատուած չէ:
16. Առանց արդարութեան կարելի չէ ընտանիքի մէջ հաստատել սէր, վստահութիւն, յարգանք եւ խաղաղութիւն:
17. Երբ կարելի է՝ սխալ գործ մը պէտք է որ ուղիղ գործով մը շտկուի:
18. Այն որ քիչի մէջ արդար է, շատի մէջ ալ արդար կ'ըլլայ:
19. Ամէն բանէ առաջ ուղիղ եղիր եւ ուղիղ գործէ, քու շարժառիթներդ ուրիշներէն հասկցուին կամ ոչ:
20. Արդարութիւնը պետութեան հիմն է:
21. Բարիքի դէմ չարիք գործել անասնային է. բարիքի դէմ բարիք՝ մարդկային է. չարիքի դէմ բարիք՝ աստուածային է:
22. Իրաւունքը գորաւորին չէ միշտ:
23. Արդարութիւնը ազգը կը բարձրացնէ, բայց մեղքը ժողովուրդներուն անարգանք է:
24. Բռնութիւնը դռնէն մտաւ, խզեց, խլեց ինչ որ գտաւ. Արդարութիւնն ի՞նչ ըներ,—երդից ծակէն դուրս փախաւ:

## 9. ԱՌԻԹ

1. Առիթի մի՛ սպասեր, ստեղծե՛ գայն:
2. Առիթը մարդո՛ւն մեջն է, ո՛չ թե միջավայրին մեջ:
3. Մեծ առիթներու յոյսով պզտիկ առիթները մի՛ փախցնէր:
4. Ուշ կամ կանուխ առիթը կը ներկայանայ անոր՝ որ գիտէ անկէ օգտուիլ:
5. Առիթէն օգտուիլը մեծ արուեստ մըն է, ուրիշ հարիւր արուեստ ոչի՛նչ են անոր քով:
6. Կեանքը ըստ բաւականի յաջող ընելու համար Աստուած կարողութիւն եւ առիթ կու տայ մարդուն. եթէ չյաջողի ան, յանցանքը իրն է:
7. Ոսկի առիթները արժէք չունին ծոյլին համար, բայց աշխատասեր մարդը հասարակ առիթներն ալ ոսկիի կը վերածէ:
8. Մի՛ կարծեր որ կեանքը առիթներու շարան մըն է. անոնք գիսաւորներու պէս երբեմն կ'երեւնան մեր կեանքի հորիզոնին վրայ:
9. Առիթը պատրաստ է ամէն մարդու համար, ըստ իր կարողութեան, իր նպատակին եւ իր համբերութեան:
10. Մի՛ կարծեր որ առիթները ուրիշներու կու գան, բայց ո՛չ քեզի: Բախտը ամէն մարդու կ'այցելէ, եթէ պատրաստ չգտնէ գայն, կ'անցնի եւ ուրիշին կ'երթայ:
11. Բաց պաշտօն գտնելը դժուար չէ, եթէ աչքդ բաց ըլլայ:
12. Առիթները անպակաս են անոնց համար, որ գիտեն օգտուիլ անոնցմէ:
13. Ամէն գործ յաջողութեան առիթ մըն է ճարպիկ մարդոց համար:
14. Առիթները արժէք չունին անճարակ մարդոց համար:

## 10. ԱՅՍՕՐ

1. Այսօրուան գործը վաղուան մի՛ թողուր:
2. Այսօրը ատաղձն է վաղը շինելիք գործիդ:
3. Այսօրը լա՛ւ գործածէ, վաղուան հոգը վաղուան թող:
4. Այսօրդ կը ցուցնէ թէ վաղդ ի՛նչ պիտի ըլլայ:
5. Երեկուան ցանածդ երբեմն այսօր կը հնձես:

6. Ինչ որ ցանես այսօր, նույնը պիտի հնձես վաղը:
7. Եթե կ'ուզես յաջողիլ, այսօրդ պետք է որ լաւ ըլլայ երեկեդ:
8. Անցեալի վրայ մի' ցաւիր. ապագայի վրայ հոգ մի' ըներ. այսօրը օգտագործէ:
9. Անցեալ առիթները կորսուած են, ապագային կրնայ ուրիշ առիթ չներկայանալ, այսօրուան առիթը ձեռքդ է, օգտագործէ՛ գայն:
10. Այսօրուան հոգերը մեծ կ'երեւին, քանի մը օր վերջ անոնք կը պզտիկնան եւ կ'անհետին:
11. Այսօրը անցեալին ընդհանուր գումարն է:
12. Գործէ՛ քանի ցերեկ է. գիշերը կու գայ, ուր ո՛չ ոք կրնայ գործել:
13. Ամէն օր բան մը կ'աւելցնէ նկարագրիդ վրայ, կամ ալ բան մը կը պակսեցնէ անկէ:
14. Կ'ուզե՞ս վաղը մեծ ըլլալ. ա՛յսօր սկսէ մեծնալու:
15. Այսօրուան հաւը աւելի լաւ է վաղուան սագէն:
16. Վաղուան համար մի' պարծենար, զի չես գիտեր թէ վաղը ի՞նչ պիտի բերէ:
17. Վաղը ըսուած ճարպիկ խաբեբան շատեր հրապուրած է եւ կործանած:
18. Այսօրուան ոսկի առիթը կրնայ վաղը կապարի փոխուիլ:
19. Անոնք որ վաղը ըսուած խաբեբային կ'անսան, անպատճառ կը ձախողին:
20. Այսօր է ընդունելի ժամանակը, այսօր է փրկութեան ժամանակը, վաղը կրնայ շա՛տ ուշ ըլլալ:

## 11. ԱԳԱՅՈՒԹԻՒՆ

1. Արծաթսիրութիւնը բոլոր չարիքներուն արմատն է:
2. Ազահը բնա՛ւ չի կշտանար. ան ծակաչք մըն է:
3. Ատելի է այն մարդը՝ որ մի միայն իր շահը կը մտածէ միշտ:
4. Ազահ է այն մարդը՝ որ ինքզինքը անհրաժեշտ պետքերէն կը զրկէ:
5. Յաճ ու ստորին նպատակի տէր մէկը չի կրնար ազնիւ նկարագիր ունենալ:

6. Ոսկիի ծարաւը շատ ազնիւ կեանքեր ապականած է:
7. Դրամ դիգելու ճիգը մարդուն մէջ կը մեռցնէ ամէն ազնիւ ու վսեմ գգացում: Ան կը կարծրացնէ սիրտը եւ կ'ապականէ հոգին:
8. Այն որ մի միայն դրամ դիգելու ետեւէ կ'ըլլայ, հետզհետէ կ'ապականէ իր նկարագիրը:
9. Ոսկիի ծարաւը հոգին կը մաշէցնէ:
10. Ո՛րքան քիչ բանի ցանկաս, ա՛յնքան շատ երջանիկ կ'ըլլաս:
11. Այն որ դրամի շատ արժէք կ'ընծայէ, իր անծին քիչ արժէք կ'ընծայէ:
12. Դրամ դիգելու արուեստը ազնուացուցիչ զբաղում մը չէ:
13. Ազահին դրամը ուրիշը կը վայելէ միշտ:
14. Հարստութիւն դիգելը բան մըն է, զայն վայելելը՝ ուրիշ բան:
15. Ազահը իր հարստութեան գերին է, ո՛չ թէ տերը:
16. Ազահութիւնը գազան մըն է, որ ամէն ինչ կը լափէ:
17. Ոսկին ազահին կուռքն է, որուն կ'երկրպագէ միշտ:
18. Շռայլութիւնը ազահութեան չափ վնասակար է:
19. Պէտք է շռայլութենէ այնքան զգուշանալ, որքան ազահութենէ:
20. Ազահին ժառանգորդները անոր հարստութիւնը կը ժառանգեն, իսկ շռայլին ժառանգորդները՝ անոր պարտքը:

## 12. ԱՆՄԱՅՈՒԹԻՒՆ

1. Աստուած մարդուն միջոցաւ մեծ ծրագիր մը իրագործելու վրայ է:
2. Բնութեան մէջ ոչի՛նչ կը կորսուի, թէեւ ամէն ինչ կը փոխուի:
3. Այս աշխարհի մէջ իսկ մարդ անմահութեան կորիզ մը ունի իր մէջ. ան չի կրնար հաշտուիլ ոչնչացումի գաղափարին հետ:
4. Անմահութիւնը կը յայտնուի հոգիին իղծերուն եւ տենչերուն մէջ:
5. Մարդը կը մեռնի, բայց իր միտքն ու գործը իրենց հետքերը կը թողուն յաջորդ սերունդներու վրայ:

6. Մեծ խորհողի մը խորհուրդները դարեր շարունակ կ'ապրին մարդոց մտքերուն մէջ, մինչեւ որ անոնք կեանքի կանոն դառնան:

7. Չարն ու արդարը գերեզմանէն վերջն ալ կը խօսին անոնց՝ որ լսելու ականջ ունին:

8. Ինչ որ կը քանդակես նկարագրիդ մէջ, միայն զայն կը տանիս հետդ գերեզմանէն անդին:

9. Մեռնելէ վերջ մարդոց սրտին մէջ ապրիլը, մեռնիլ չէ:

10. Սիրոյ եւ գութի գրիչներով գրէ անունդ անոնց սրտերուն մէջ, որոնց հետ շփումի կու գաս, եւ դուն բնա՛ւ պիտի չմոռցուիս:

11. Ուսեալ մարդիկ իրենց մահէն վերջն ալ իրենց թողուցած յիշատակարաններով կը շարունակեն կրթել զանոնք, որ կը սիրեն կրթութիւնը:

12. Բարիք գործէ եւ ետեւդ ձգէ առաքինութեան արձանը, զոր ժամանակի փոթորիկները պիտի չկրնան կործանել:

13. Անմահութեան արժանի ամէն գործ տքնաջան աշխատութեան արդիւնքն է:

14. Մարդկութեան մեծագոյն բարերարը այն է, որ վսեմ կեանք մը ժառանգ կը թողու ապագայ սերունդներու, որպէս օրինակ: Անոնք իրենց մահէն վերջն ալ կը շարունակեն բարիք գործել:

15. Ո՛չ ոք կ'ապրի իրեն համար եւ կը մեռնի իրեն համար:

16. Մարդոց փոխյարաբերութիւնը կը շարունակէ մահէն վերջն ալ:

17. Ահաւոր իրողութիւն մըն է որ մարդոց թողուցած ազդեցութիւնը՝ գէշ կամ աղէկ՝ կը շարունակէ ազդել յաջորդ սերունդներու վրայ:

18. Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է:

### 13. ԲԱԽՏ

1. Բոլոր յաջողած մարդիկ սա կետին շուրջ համաձայն են, թէ իրերը կ'ընթանան օրէնքով, ո՛չ թէ բախտով:

2. Շատ հազուադիւս օրինակները բացառելով, բախտը ո՛րեւէ գործ չունի յաջողութեան հետ:
3. Ծոյլ, դանդաղ եւ անջիղ մարդոց համար բախտ չկայ:
4. Ուժեղ եւ կորովի մարդիկ բախտէն չեն գանգատիր բնաւ, որով անոնք իրենց բախտին տերն են:
5. Տկար ու անկարող մարդիկ կը հաւատան բախտի, իսկ զօրաւոր ու կորովի մարդիկ կը հաւատան պատճառի եւ արդիւնքի օրէնքին:
6. Ինչ որ չես փնտռեր, հազիւ թէ գտնես:
7. Նպաստաւոր պարագաները օգուտ ունին միայն անոնց՝ որոնք գիտեն օգտուիլ անոնցմէ:
8. Բախտաւոր մարդը այն է որ առիթէն օգտուիլ գիտէ:
9. Գործի աշխարհին մէջ բախտ ըսուածը հեռատեսութիւն եւ կազմակերպութիւն է:
10. Ուշադիր դիտող մը պիտի տեսնէ որ բախտը աշխատասէր մարդոց կողմն է, ինչպէս որ հովը վարպետ նաւավարներուն կողմը կ'ըլլայ:
11. Զու սեփական միջոցներուդ դիմելը, բախտի դիմել է:
12. Գիտութիւնը եւ յարատեւ աշխատութիւնը կը ջնջեն բախտը:
13. Անոնք միայն կը յաջողին, որ գիտեն ասպարեզ կարդալ բախտին:
14. Բախտը յարմար մարդիկը կը գտնէ միշտ. նայէ որ գործի մը յարմարութիւն ունենաս:
15. Ո՛րքան յառաջանայ գիտութիւնը, ա՛յնքան կը նահանջէ բախտը:
16. Զու ճակատագիրդ քու կամքիդ մէջն է, ո՛չ թէ բախտի քմահաճոյքին մէջ:
17. Գրեթէ բոլոր յաջող մարդիկ գիտեն թէ իրենք են իրենց յաջողութեան պատճառը, եւ բախտի չեն հաւատար:
18. Բախտը չհասկցուած կամ չտեսնուած պատճառ է:
19. Այն որ բախտի կը սպասէ, յուսախաբ կ'ըլլայ:
20. Առանց պատճառի արդիւնք չկայ:

## 14. ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. Միտքը նկարագիր չէ:
2. Մարդուն փառքը իր բանականությունն է, վասնզի գլխաւորաբար անո՛վ է որ կը զանազանուի կենդանիներէն:
3. Իմաստուն մարդը բանականութեամբ կ'առաջնորդուի, ո՛չ թէ զգացումով:
4. Այն որ չ'ուզեր տրամաբանել, ապուշ է. այն որ չի կրնար տրամաբանել, յիմար է. իսկ այն որ չի համարձակիր տրամաբանելու, գերի է:
5. Ուր կ'իշխէ կիրքը, հոն կը լռէ բանականութիւնը:
6. Ո՛չ հուրը կրնայ մարել բանականութիւնը, ո՛չ ալ սուրը:
7. Բանականութիւնը կը հաշտեցնէ քեզ իրականութեան հետ:
8. Դուն գիտցածիդ համեմատ միայն կրնաս դատել:
9. Մարդիկ ընդհանրապէս բանականութեամբ կ'ընթանան, ո՛չ թէ կիրքով:
10. Մարդկային միտքը ամենակարող Ոյժին է՛ն վսեմ արտայայտութիւնն է:
11. Բանականութիւնը մտքի աչքն է. տեսնել կարենալու համար ան ալ մարմնի աչքին պէս լոյսի պէտք ունի:
12. Կուսակցական եւ յարանուանական ոգին յաճախ արգելք կ'ըլլայ բանականութեան ազատ գործունեութեան եւ անաչառ դատողութեան:
13. Իմացականութիւնը մեքենայ մըն է, որ կը գործէ իր ետեւը կեցող ոյժերով, որք են յուզում, խանդ, եռանդ, զգացում, ուրախութիւն, եւն.:
14. Եթէ կեանքը մի միայն իմացականութիւն ըլլար, անիկա պիտի ըլլար միօրինակ, անհամ ու անտանելի բան մը:
15. Իմացականութիւնը նկարագրի է՛ն հասարակ գիծն է, եւ միայն այն ատեն արժեքաւոր է, երբոր ուրիշ գիծերու ընկերանայ:
16. Ճշմարտապէս առողջ եւ զօրաւոր միտքը պէտք է որ ըմբռնէ թէ՛ մեծ եւ թէ՛ փոքր բաները:
17. Մի՛տքն է որ լաւ կամ գէշ կ'ընէ մարդը, երջանիկ կամ թշուառ, հարուստ կամ աղքատ:
18. Ժողովուրդին խելացիութիւնը ազգին ապահովութիւնն է:

19. Բանականությունը կեանքիդ մեծ խորհրդականը թող ըլլայ:

### 15. ԲԱՐԵԿԱՍՈՒԹԻՒՆ

1. Բարեկամությունը երբեակ համաձայնությունն է Սիրոյ, Յամակրութեան եւ Օգնութեան:
2. Բարեկամը գոհար մըն է, որ մութի մէջ աւելի՛ կը փայլի:
3. Բարեկամը դժբախտութեան երկնքի մէջ յոյսի աստղն է:
4. Բարեկամը մեր լռութիւնը հասկցողն է:
5. Բարեկամությունը փոխադարձութեան վրայ հիմնուած է. առանց փոխադարձ սիրոյ եւ գոհողութեան ան չի կրնար կանգուն մնալ:
6. Մի՛ թողուր ծնողքիդ բարեկամները:
7. Սխալ է անձնական շահու համար գործածել բարեկամները, եւ յետոյ լքել զանոնք:
8. Այն որ ամենուն բարեկամ է, ո՛չ մէկուն բարեկամ է:
9. Չափազանց ընտանութիւն կամ մօտիկութիւնը անհաշտ է տեւական բարեկամութեան հետ:
10. Առանց փոխադարձ վստահութեան բարեկամութիւնը անկարելի է:
11. Երկու բարեկամ մէկ հոգի են երկու մարմնի մէջ:
12. Բարեկամությունը կը թեթեւցնէ դժբախտութիւնը եւ փայլ կու տայ բախտաւորութեան:
13. Առանց ճշմարիտ բարեկամութեան երջանկութիւնը կէս համ ունի:
14. Գէշ բարեկամները կ'ապականեն նկարագիրը, բայց լաւ բարեկամները կ'ազնուացնեն զայն:
15. Մարդը իր բարեկամներէն կը ճանչցուի:
16. Բարեկամներդ ընտրէ քու աստիճանի մարդոց մէջէն:
17. Ճշմարիտ բարեկամը առաջին անձն է որ կը մօտենայ քեզի, երբ ամէն մարդ կը հեռանայ քեզմէ:
18. Ըսէ՛ ինծի բարեկամներդ, եւ ես ըսեմ քեզի թէ ի՞նչ տեսակ մարդ ես:
19. Մեր բարեկամները մեզ գովողները չեն, հապա մեզ քննադատողները:



20. Անխելք բարեկամը աւելի վտանգաւոր է քան խելացի թշնամին:

21. Ճշմարիտ բարեկամը նեղ օրերու մէջ յայտնի կ'ըլլայ:

## 16. ԲԱՐԿՈՒԹԻՒՆ

1. Քու կիրքերդ քու տկար կողմերդ են, լաւ հսկէ անոնց վրայ:

2. Կիրքը կը կուրցնէ բանականութիւնը, ինչպէս ալքոլը կը բթացնէ ուղեղը:

3. Բարկութիւնը կենսունակութեան սպառում է:

4. Ո՛չ մէկ կիրք այնքան կը հեռացնէ մարդը ուղիղ դատողութենէ, որքան բարկութիւնը:

5. Ո՛րքան յագեցնես կիրքերդ, ա՛յնքան պահանջկոտ կը դառնան անոնք:

6. Բարկութիւնը, զայրոյթը, եւ նման կիրքերը աւելի զիրենք ցուցադրողին կը վնասեն, քան անոր՝ որուն կ'ուղղուին:

7. Երբոր բարկանաս մի՛ խօսիր, որովհետեւ կրնաս անանկ խօսքեր խօսիլ, որոնց համար պիտի գոչաս յետոյ:

8. Բարկացոտ միակ խօսք մը շատ բարեկամներու կորստեան պատճառ եղած է:

9. Բարկութիւնը յիմարութեամբ կը սկսի, զոչումով կը վերջանայ:

10. Այն որ չի կրնար բարկանալ, յիմար է. այն որ չ'ուզեր բարկանալ, իմաստուն է:

11. Բարկութիւնը՝ արբեցութեան պէս՝ ինքզինքդ կը ծածկէ քեզմէ, սակայն կը ցուցադրէ քեզ ուրիշներուն:

12. Բարկացոտ մարդը իր ջիղերը կը սպառէ եւ հազիւ թէ ծերութեան հասնի:

13. Մարդիկ ա՛յնքան կը յաջողին իրենց խառնուածքով, ո՛րքան իրենց տաղանդով:

14. Եթէ չկառավարես խառնուածքդ, ան կը կառավարէ քեզ:

15. Սրտնեղութիւնը շատ մարդիկ կործանած է:

16. Շատ մարդիկ ապերջանիկ են, զի շուտ կը գրգռուին:

17. Վրեժ լուծելու լաւագոյն ճամբան սխալ գործողին չնմանիլ է:
18. Առանց ընդդիմադիրի վեճ մը չի կրնար շարունակել:
19. Կան պարագաներ ուր սրտմտութիւնը անհրաժեշտ է մի՛ մոռնար սակայն թէ սրտմտութիւնը բարկութիւն չէ:
20. Եթէ նպատակդ ուղղել է, բարկութեամբ մի՛ յանդիմաներ:
21. Այն որ բարկութեամբ ոտքի կ'ելլէ, վնասով կը նստի:

## 17. ԲՆՈՒԹԻՒՆ

1. Բնութիւնը ամէն մարդու հրաւեր կը կարդայ իրեն հետ խօսելու, բարեկամանալու, եւ զինքը վայելելու:
2. Բնութիւնը վայելքի անսպառ աղբիւր է, եւ մայր՝ երջանկութեան:
3. Բնութեան սերը մեծ օրհնութիւն մըն է. առանց անոր կեանքը շատ բան կը կորսնցնէ իր հմայքէն:
4. Բնութեան օրէնքն է — աշխատե՛ կամ սովամահ եղիր:
5. Բնութիւնը հում նիւթը միայն կու տայ քեզի. զայն օգտագործելը քու գործդ է:
6. Բնութիւնը անաչառ է եւ անողոք: Անոր օրէնքներուն դէմ մեղանչողը անպատճառ կը տուժէ:
7. Մա՛րդը պետք է որ բնութեան յարմարի, եւ ո՛չ թէ բնութիւնը՝ մարդուն:
8. Բնութիւնը իր օրէնքներուն տգիտութիւնը իբր արդարացում չ'ընդունիր: Ան կը փափաքի որ ամէն մարդ գիտնայ իր օրէնքները:
9. Բնութիւնը լուրջ է, եւ չ'ախորժիր կատակէ: Կ'ուզէ որ ամէն մարդ յարգէ զինքը, եւ հնազանդի իր օրէնքներուն:
10. Բնութիւնը է՛ն ճարտար բժիշկն է, է՛ն աժան դեղը, եւ է՛ն ազնիւ հիւանդապահը:
11. Անմիտ եւ անուշադիր մարդոց ո՛րեւէ ըսելիք չունի բնութիւնը:
12. Բնութիւնը՝ քու վարուելակերպիդ համաձայն՝ թե՛ բարեկամ է եւ թե՛ թշնամի:
13. Դաստիարակութեանդ մէջ բնութիւնը աւագ բաժին ունի:

14. Մարդը բնութեան աշակերտն է. իր գործը ստեղծել է, այլ ընդօրինակել եւ յարմարցնել:
15. Մարդուն հրաշակերտները բնութեան ընդօրինակութիւններն են լոկ:
16. Բնութիւնը դիրաւ կը հայթայթէ բոլոր պետքերը, եթէ իր օրէնքներուն հնազանդիս:
17. Բնութիւնը մէկ մարդու չի տար իր բոլոր պարգէւները, որքան ալ սիրէ գայն:
18. Բնութիւնը վեհանձն է իր պարգէւներուն մէջ, պայմանաւ որ գնահատել գիտնաս գանոնք:
19. Բնութիւնը դադար չի գիտեր. ան կա՛մ կը յառաջանայ, կա՛մ ալ կը նահանջէ, շարժելով իր հետ ամբողջ մարդկութիւնը:
20. Բնութեան մէջ ոստում չկայ:
21. Բնութիւնը աճապարել չի գիտեր:

### 18. Գ Ե Ղ Ե Ց Կ Ո Ւ Թ Ի Ն

1. Գեղեցկութիւնը առողջ երեւակայութեան բնական սնունդն է:
2. Եթէ Գեղեցիկին սերը մշակած ես, ամէն տեղ կրնաս գեղեցկութիւն տեսնել:
3. Աւելի լաւ է ամէն բանի գեղեցիկ կողմը տեսնել քան թէ տգեղ կողմը:
4. Առանց գեղեցկութեան աշխարհի ապրելիք տեղ մը պիտի չըլլար:
5. Գեղեցկութիւնը ազնուացուցիչ ազդեցութիւն ունի նկարագրին վրայ:
6. Բարձր դաստիարակութեան անատակ է այն՝ որ չունի գեղեցկին սերն ու ճաշակը:
7. Է՛ն բնական գեղեցկութիւնը համեստութիւնն է:
8. Է՛ն վսեմ գեղեցկութիւնը կը գտնուի մարդկային դէմքին վրայ, եւ անոր կեանք տուող հոգիին մէջ:
9. Գեղեցկին սերը էական մէկ մասն է մարդկային առողջ բնութեան:
10. Ստքի եւ նկարագրի գեղեցկութիւնը աւելի հրապուրիչ կը դառնայ ծերութեան մէջ:
11. Դեմքի գեղեցկութիւնը վաղանցուկ է, իսկ նկարագրի գեղեցկութիւնը՝ տեւական:

12. Առանց գեղարուեստներու կեանքը անհամ պիտի ըլլար:
13. Գեղեցկին սերը բնական է եւ ընդոծին:
14. Գեղեցկութիւնը հասկնալու եւ վայելելու մէկ ճամբայ կայ, այն է դեմ յանդիման գալ գեղեցիկին հետ:
15. Այն որ չունի գեղեցիկին ճաշակը, հաճոյքի եւ վայելքի մեծ գանձէ մը զրկուած է:

## 19. ԳՈՒԹ

1. Երակի՛ ողորմածներուն, վասնզի անոնք ողորմութիւն պիտի գտնեն:
2. Գութը բոլոր առաքիւնութեանց մայրն է:
3. Ողորմութեան նպատակն ըլլալու է ազատել ողորմութիւն ստացողը իր վիճակէն, եւ ինքնապահ դարձնել զայն:
4. Ողորմութեան մէջ աւելի կարելոր է շարժառիթը քան թէ ողորմութիւնը:
5. Մարդոց պետքին համեմատ տալու է, ո՛չ թէ արժանիքին համեմատ: Աստուած արեւ ու անձրեւ կու տայ թէ՛ բարիներուն եւ թէ՛ չարերուն:
6. Կարողութեանդ համեմատ տուր, եւ ուրախ եղիր որ բարիք ընելու վիճակին մէջ կը գտնուիս:
7. Ողորած եղիր, եւ յիշէ թէ գերեզմանէն անդին դրամի պետք պիտի չունենաս:
8. Մեծագոյն ողորմութիւնն է օգնել աղքատին՝ որ իր ապրուստը շահի:
9. Աւելի լաւ է տալը քան առնելը:
10. Չար մարդուն ողորմած ըլլալը բնական չէ:
11. Ծշմարիտ ողորմածները կ'ողորմին ո՛չ միայն մարդոց, այլ նաեւ կենդանիներուն, լաւ ինսամելով զանոնք եւ լաւ վարուելով անոնց հետ:
12. Աղքատն ու թշուառը առիթ կ'ընծայեն քեզի, որ ողորմելով անոնց՝ աճիս բարոյապէս:
13. Այն որ չի գթար կենդանիներուն, չի գթար նաեւ մարդոց:
14. Ամէն գործ՝ որ մարդկային բարօրութեան կը նպաստէ, ողորմութիւն է:

15. Այն որ կ'ողորմի աղքատին, փոխ կու տայ Աստուծոյ:

16. Չգոյշ եղէք որ ձեր ողորմութիւնը մարդոց առջեւ չընէք՝ անոնց երեւնալու համար: Ձախ ձեռքդ թող չգիտնայ թէ ինչ կ'ընէ աչ ձեռքդ:

## 20. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

1. Դաստիարակութեան նպատակը մարդ պատրաստել է:

2. Ճշմարիտ դաստիարակութիւնը պէտք է որ կրթէ մարդուն ֆիզիքական, մտաւորական եւ բարոյական կարողութիւնները հաւասարապէս, առանց մէկը գոհելու միւսին:

3. Կրթութիւնը օրօրոցէն պէտք է սկսիլ:

4. Չաւկին կրթութիւնը պէտք է ծնողքէն սկսիլ:

5. Դաստիարակութեան նպատակն է զարգացնել մարդուն բնութիւնը իր բարձրագոյն աստիճանին:

6. Դաստիարակութեան պաշտօնն է դուրս բերել մարդուն թագուն կարողութիւնները, եւ գործի լծել զանոնք:

7. Ուսեալ մարդը աւելի օգտակար է իր ընտանիքին եւ իր ազգին, քան անուսը:

8. Ուսեալ մարդիկ ընդհանրապէս աւելի դրամ կը շահին:

9. Դաստիարակութիւնը օրօրոցի մէջ կը սկսի, եւ գերեզմանի մէջ կը վերջանայ:

10. Մարդ կ'ուսանի ընտանիքի, դպրոցի, շուկայի եւ ընկերութեան մէջ: Այսպէս, անուղղակի դաստիարակութիւնը աւելի զօրաւոր է քան ուղղակի դաստիարակութիւնը:

11. Դաստիարակութիւն ստանալ դաստիարակութեան սիրոյն համար՝ լաւ է, բայց շատ արժէք չունի եթէ ան չ'ապահովէր մարդուն ապրուստը:

12. Կատարեալ դաստիարակութիւնը այն է՝ որ քեզ կը պատրաստէ լաւագոյն կերպով կատարելու քու պարտականութիւններդ քու անձիդ եւ քու համայնքիդ հանդէպ, թէ՛ խաղաղութեան եւ թէ՛ պատերազմի ժամանակ:

13. Դաստիարակութեան մեծագոյն մասը՝ լաւ կամ գէշ՝ ընտանիքին մէջ տեղի կ'ունենայ, յաճախ անգիտակցաբար:

14. Մարդուն առաջին դպրոցը ընտանիքն է: Դպրոցը անզօր է հիմնովին փոխելու ընտանիքին տուած ուղղութիւնը:

15. Ամէն մարդ երկու տեսակ կրթութիւն կը ստանայ. մէկը ուրիշէն, միւսը ինքիրմէն. լաւագոյնը՝ սակայն, վերջին տեսակն է:

16. Դաստիարակութիւնը սորվելու կարողութիւն ստեղծել է:

17. Դաստիարակութիւնը պետք է որ կարողութիւն մշակէ մարդուն մէջ թէ՛ միջավայրին յարմարելու, եւ թէ՛ միջավայրը իրեն յարմարցնելու:

18. Դաստիարակութեան նպատակն է մտածելու կարողութիւնը մշակել, եւ սխալը ուղիղէն զանազանելու կարողութիւն ստեղծել:

19. Պատիժի նպատակը պատիժի վերջ դնել է:

20. Աւելի լաւ է սիրտը ներշնչել ազնիւ զգացումներով, քան թէ միտքը՝ գիտական պաշարով:

## 21. ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆ

1. Տկարները կը վախնան դժուարութիւններէ, քաջերը կը պայքարին անոնց դէմ:

2. Մեծ մարդիկ դժուարութեանց դպրոցին աշակերտած են:

3. Դժուարութիւնը այն հողն է, ուր կը ծաղկին մարդուն առնական յատկութիւնները:

4. Որքան մեծ ըլլայ գործը, այնքան դժուար կ'ըլլայ զայն կատարելը:

5. Հերոսները դժուարութեանց յաղթող մարդիկ են:

6. Դժուարութեանց յաղթելու է՛ն ապահով ճամբան՝ անոնց դէմ մաքառիլ է:

7. Դժուարութեանց դէմ միջոցներ ձեռք առ. բան մը բախտին մի՛ ձգեր:

8. Դժուարութիւններդ լաւագոյն ուսուցիչներդ են, սխալներդ՝ լաւագոյն փորձառութիւնդ: Սխալ է երբեմն չսխալիլ:

9. Ամէն գործ եւ ամէն ասպարեզ դժուար կողմեր ունին:

10. Կատարելու արժանի գործերը դժուար գործերն են:

11. Դժուարությանց դպրոցը բարոյական կրթության լաւագոյն դպրոցն է:
12. Շատեր իրենց մեծութիւնը դժուարութեանց կը պարտին:
13. Երբոր բնութիւնը դժուարութիւնները աւելցնէ, խելքդ ալ կ'աւելցնէ:
14. Առանց դժուարութեան յաջողութիւն չկայ, ո՛չ ալ յաղթութիւն՝ առանց պատերազմի:
15. Դժուարութիւնները կը սրեն միտքը, ինչպէս մարզանքը կը զօրացնէ մարմինը:
16. Առանց դժուարութեանց հետ պայքարելու մարդիկ քիչ անգամ կրնան բարձր դիրքերու հասնիլ:
17. Մեծ գործերու պատմութիւնը դժուարութեանց պատմութիւնն է:
18. Չկայ ա՛յնքան կազդուրիչ մարզանք, որքան պայքարը դժուարութեանց դէմ:
19. Երկաթէ կամքի տէր մարդոց առջեւ դժուարութիւնները ձիւնի պէս կը հալին:
20. Առանց խաչի պսակ չկայ:

## 22. ԴՐԱՄ

1. Դրամը լաւ ծառայ մըն է, բայց գէշ տէր մը:
2. Առանց դրամի ընկերային որոշ յառաջդիմութիւնը անկարելի է:
3. Հարստութիւնը նկարագրի փաստ մը չէ:
4. Հարստութիւնը նպատակ չէ, հապա՛ միջոց:
5. Հարստութեան հաճոյքը զայն գործածելուն մէջն է, ո՛չ թէ զայն դիզելուն մէջ:
6. Դրամը ունեցողին չէ, հապա՛ վայելողին:
7. Պատրաստ դրամը շատ չարիքներու դարման է:
8. Հարստութիւնը ասպարեզի մը վախճանը չէ, այլ անոր սկիզբը:
9. Դրամ դիզելու արուեստը տարբեր է զայն վայելելու արուեստէն:
10. Բարի հարուստը մեծ օրհնութիւն մըն է իր համայնքին:
11. Աղքատը պարագաներու քմահաճոյքէն կախուած է. անիկա անկախ չէ:

12. Աղքատությունը ամօթ չէ, եթե ծուլութեան արդիւնքը չէ այն:
13. Հարստությունը պատասխանատուութիւն կ'ենթադրէ:
14. Ամէն մարդ կրնայ հարստութիւնը գործածել, բայց իմաստո՛ւնը միայն գիտէ աղքատութիւնը գործածել:
15. Այն որ դրամ չունի, աղքատ է, բայց այն որ դրամէ զատ ուրիշ բան չունի, աւելի աղքատ է:
16. Մարդկութեան շատ բարերարները դրամ չունեցողները եղած են:
17. Աղքատութիւնը մարդկային երջանկութեան մեծ թշնամիներէն մէկն է:
18. Հարստանալու փափաքը մեղք չէ. մեղքը դրամի անյագ ծարաւն է:
19. Քաջութիւն կը պահանջէ աղքատութեան մէջ պարկեշտ մնալ, մինչ ուրիշներ անպարկեշտ միջոցներով կը հարստանան:
20. Դրամը անբարոյացուցիչ է, երբոր ի վնաս նկարագրի կը ստացուի:
21. Կոխկռտէ՛ր դրամը, ան կը ծառայէ քեզի. շոյէ՛ր զայն, ան կը ծառայեցնէ քեզ:
22. Դրամը քիչերը կը մեծցնէ, բայց շատերը կը պզտիկցնէ:
23. Հարստութիւնը վտանգ, նեղութիւն եւ փորձութիւն կը բերէ յաճախ:
24. Սերը զօրաւոր է, բայց երբեմն ալ դրամը ամենագօր է:
25. Հարուստին դրամը աղքատին բերանը կը յոգնեցնէ:
26. Հարստութիւնը երջանկութիւն չի պարգեւեր, բայց կը նպաստէ անոր:
27. Ա՛ն դրամդ, տո՛ւր երջանկութիւնս:
28. Հարստանալու ապահով միջոցն է ամէն օր շահածեղ քիչ մը պակաս ծախսել:
29. Հարստութիւնը շատ բարեկամներ կ'աւելցնէ, բայց մէկը չ'ուզեր աղքատին բարեկամ ըլլալ:



### 23. ԵՍԱՍԻՐՈՒԹԻՒՆ

1. Եսասիրութիւնը ընդհանուր երեւոյթ մը է մարդկային բնութեան մէջ: Պետք է կանուխէն արմատախիլ ընել զայն:
2. Դրամը եւ ոյժն ու ազդեցութիւնը երբոր եսասերին ձեռքն անցնին, անեծք կը դառնան, եւ կ'ապականեն սիրտն ու հոգին:
3. Չես կրնար բարեկամներ ունենալ եթէ եսասեր ես, վասնզի եսասերները իրենց շահը միայն կը փնտռեն, մինչդեռ բարեկամութիւնը փոխադարձութեան օրէնքին վրայ հիմնուած է:
4. Դուն քեզի համար միայն չես ապրիր, հապա ուրիշներու համար ալ: Եթէ ուրիշները չըլլան, դուն չես կրնար ապրիլ:
5. Եսասիրութիւնը կը ծածկէ քեզմէ այն թերութիւնները, զոր դուն կը տեսնես ուրիշներու մէջ:
6. Բարիք ընել անոնց՝ որ չեն գնահատեր զայն, ճշմարիտ զոհողութեան նշան է:
7. Եսասերը կ'ուրանայ ուրիշներուն իրաւունքը, եւ կը կարծէ թէ ինքը միայն իրաւունք ունի միշտ:
8. Եսասերը միշտ իրաւունքի վրայ կը խօսի. պարտականութեան վրայ, երբե՛ք:
9. Անձնուիրութիւնը վարձատրութիւն չի փնտռեր:
10. Եսասերը իր խելքը կը գործածէ ուրիշներու տկարութենէն օգուտ քաղելու համար:
11. Եսասիրութիւնը ստորնութիւն է:
12. Մի՛ ըլլար ուրազի պէս միշտ դէպի քեզ, միշտ դէպի քեզ: Եղիր սղոցի պէս մէկ դէպի քեզ, մէկ դէպի մեզ:

### 24. ԵՐԿՉՈՏՈՒԹԻՒՆ

1. Երկչոտ մարդը պետք չէ որ յաջողութիւն ակնկալէ:
2. Ո՛չ ոք կը վստահի անոր՝ որ ինքն իրեն չի վստահիր:
3. Յանդուզն եւ համարձակ մարդոց բառարանին մէջ «չեմ կրնար» բառը գոյութիւն չունի:
4. Տկարութիւնը հեզանքի եւ արգահատանքի առարկայ է, իսկ զօրութիւնը՝ նախանձի եւ հիացումի:
5. Տկարն ու երկչոտը առնականութենէ զուրկ են:

6. Վախկոտը չի կրնար շահիլ, բայց յաճախ կը կորսնցնէ:
7. Այն որ գործի մը ձեռնարկելու համար բացաձակ ստուգութեան կը սպասէ, չի կրնար գործ տեսնել:
8. Վարանումը ինքնավստահութեան բացակայութիւնն է:
9. Փառասիրութենէ զուրկ մէկը կեանքի մէջ ձախողած մըն է:
10. Ամէն ասպարեզի մէջ վախը մահացու թշնամի է յաջողութեան:
11. Վախը կը կեցնէ մտածումի անիւը:
12. Վախը ուրիշներու գերի կ'ընէ քեզ:
13. Ոչինչ այնքան կը վատթարացնէ նկարագիրը, որքան վախը:
14. Բան մը անկարելի կարծել, զայն անկարելի ընել է:
15. Երկչոտութիւնը ձախողութեան մայրն է:
16. «Ուրիշները ի՞նչ կ'ըսեն արդեօք» մտածումը կեանքի փտախտն է:
17. Կասկածներդ մեծագոյն թշնամիներդ են: Թոյլ մի՛ տար որ անոնք պաշարեն քեզ:
18. Եթէ կասկածը հիւրընկալես, ան քեզ շուտով տունէդ դուրս կ'ընէ:
19. Վախի առջեւն առնելու լաւագոյն միջոցը՝ կասկածի երես չտալն է:
20. Կասկածը, վարանումը եւ չափազանց զգուշաւորութիւնը մտքի լճացում եւ անզօրութիւն կը պատճառեն:

## 25. ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ

1. Երջանկութիւնը կեանքի հիմնական նպատակն է:
2. Երջանկութեան առաջին պայմանն է առողջ միտք առողջ մարմնի մէջ:
3. Հարստութիւնը երջանկութեան համար անհրաժեշտ պայման չէ:
4. Հաճոյքն ու երջանկութիւնը գործի եւ աշխատութեան պտուղներն են:
5. Գեղարուեստը վայելքի եւ երջանկութեան անսպառ աղբիւր մըն է:

6. Երջանկութիւնը կը համեմատի քու սիրածներուդ եւ քեզ սիրողներու թիւին հետ:

7. Բնութիւնը կը հայթայթէ երջանկութեան համար անհրաժեշտ պայմանները, միայն թէ մարդ գիտնայ անոնցմէ օգտուիլ:

8. Երջանկութեան համար երկու ճամբայ կայ. մէկն է փափաքները պակսեցնել, միւսը՝ միջոցները աւելցնել:

9. Հարստութիւնը երջանկութիւն չի տար, բայց կը ճոխացնէ զայն:

10. Ա՛յն մարդը միայն երջանիկ է, որ գիտէ երջանկութիւն հանել կեանքի իրական պայմաններէն, երբ իտեալ պայմանները գոյութիւն չունին:

11. Երջանկութեան չես կրնար հասնիլ, եթէ գլխաւոր նպատակ ընտրես զայն. ան կը գտնուի յաճախ զինքը չփնտռողներուն կողմէ:

12. Երջանկութեան ճամբան վշտի եւ արցունքի հովիտներէն կ'անցնի յաճախ:

13. Կ'ուզե՞ս երջանիկ ըլլալ. ուրիշներու երջանկութեան համար աշխատէ:

14. Երջանիկ չի կրնար ըլլալ այն մարդը, որ իր չսիրած մէկ ասպարեզը մտած է:

15. Խղճի հանգստութիւնը եւ անկախութեան գիտակցութիւնը անհրաժեշտ են գերագոյն երջանկութեան համար:

16. Խղճի խայթը երջանկութեան մահացու թշնամին է:

17. Երջանկութիւնը հետապնդէ, ան պիտի փախչի քեզմէ. անկէ խոյս տուր, ան պիտի հետապնդէ քեզ:

18. Երջանիկ է այն ազգը, որ պատմութիւն չունի:

19. Երջանիկ է անիկա, որուն անունը կեանքէն աւելի կ'ապրի:

20. Երջանկութիւն մը կայ միայն, պարտականութիւնը. մխիթարութիւն մը կայ միայն, աշխատութիւնը. վայելք մը կայ միայն, գեղեցկութիւնը:

21. Երանի՛ հոգուով աղքատներուն, վասնզի երկնքի թագաւորութիւնն անոնցն է:

22. Երանի՛ սգաւորներուն, վասնզի անոնք պիտի մխիթարուին:

23. Երանի՛ հեզերուն, վասնզի անոնք պիտի ժառանգեն երկիրը:

24. Երանի՛ անոնց, որ անօթի ու ծարաւ են արդարութեան, վասնզի անոնք պիտի կշտանան:

25. Երանի՛ ողորմածներուն, վասնզի անոնք ողորմութիւն պիտի գտնեն:

26. Երանի՛ անոնց, որ սրտով մաքուր են, վասնզի անոնք պիտի տեսնեն զԱստուած:

27. Երանի՛ խաղաղութիւն ընողներուն, վասնզի անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին:

28. Երանի՛ անոնց, որ հալածուած են արդարութեան համար, վասնզի երկնքի թագաւորութիւնը անոնցն է:

## 26. ՉՈՅՈՂՈՒԹԻՒՆ

1. Չոհողութիւնը բնութեան օրէնքն է.— մէկը ամէնուն համար, ամէնը մէկուն համար:

2. Առանց այրելու եւ սպառելու մոմը չի կրնար լոյս տալ:

3. Ընտանիքը փոխադարձ զոհողութեան վրայ հիմնուած է:

4. Առանց զոհողութեան անկարելի է ո՛րեւէ յառաջդիմութիւն:

5. Ո՛վ կրնայ չափել մօր մը զոհողութեան մեծութիւնը: Մայրը զոհողութեան մարմնացումն է:

6. Չոհողութիւնը եսասիրութեան հակակիշն է:

7. Շատեր կը յօժարին մեծ զոհողութիւններու, սակայն կը դժկամակին առօրեայ կեանքի մէջ հարկաւոր պզտիկ զոհողութիւններու:

8. Իմաստութիւն է զոհել քիչը շատին համար:

9. Չոհողութիւնը յաջողութեան պայմանն է: Նետե՛ ցորենդ հողին մէջ, ան պիտի շատնայ. սպառե՛ կեանքդ դպրոցի մէջ, մտաւորական պիտի ըլլաս:

10. Յաջողութեան ճամբան զոհողութեան եւ անձնուիրութեան քարերով սալայատակուած է:

11. Պատմութեան մեծագոյն մարդիկը անոնք եղած են, որոնք զոհած են իրենց անձնական շահը ընդհանուրին շահին:

12. Մարդկութիւնը խոր յարգանք ունի անոնց հանդէպ, որոնք տառապած են կրօնքի, գիտութեան եւ ճշմարտութեան համար:

13. Մարդկության ճշմարիտ բարերարները իրենց դրամը զոհողները եղած չեն, հապա՝ իրենց անձը զոհողները:

14. Յաջողության պալատը Յիմալայայի գագաթին վրայ շինուած է. այն որ կ'ուզէ տիրանալ անոր, պետք է յանձն առնէ մագլցիլ մինչեւ հոն:

## 27. ՉՈՒԱՐԹՈՒԹԻՒՆ

1. Չուարթութիւնը կեանքի աղն է:
2. Չուարթութիւնը կը պայծառացնէ միտքը, թօն կու տայ մտածումին, եւ շնորհք ու գեղեցկութիւն՝ դէմքին:
3. Չուարթութիւնը կեանքի բնականոն վիճակն է. առանց անոր անկարելի է ֆիզիքական, մտաւորական եւ բարոյական առողջ գործունեութիւն:
4. Ուրիշ առաքինութիւնները կը յետաձգեն իրենց վարձատրութիւնը. մինչդեռ զուարթութիւնը կանխիկ կը վճարէ:
5. Չբաղեալ մարդիկ զուարթ կ'ըլլան, եւ չեն կրնար զուարթ չըլլալ:
6. Չուարթութեան աղբիւրը հաւատքն է. այն որ հաւատք ունի կեանքի վրայ, չի կրնար զուարթ չըլլալ:
7. Աշխարհի տերերը զուարթ մարդիկն են, վասնզի աշխարհ կը պատկանի անոնց՝ որ կը վայելեն զայն:
8. Չուարթութիւնը ընկերային է՝ն աչքի զարնող գիծն է:
9. Չուարթ դէմքն ու զուարթ ընտանիքը յաճախ աւելի գործ կը տեսնեն նկարագրի կազմութեան մէջ, քան ուսումն ու խրատը:
10. Չուարթ մարդը ամենուրեք տեղ ունի, զի ամէն մարդ կ'ախորժի անոր ընկերակցութենէն:
11. Չուարթ մարդը ծաղիկ ու բոյր կը ցանէ իր շուրջը, եւ յոյս ու հաւատք կը ներշնչէ իր դէմը ելլողին:
12. Ընկերային շրջանակի մէջ արեւի պէս կը ծագի զուարթ մարդը. անիկա կը տաքցնէ եւ կը ներշնչէ մթնոլորտը:
13. Ժպիտը արեւի շող է. խոժոռ դէմքը՝ ամպամած օդ:
14. Չուարթութիւնը գթութեան ընկերն է, համբերութեան՝ քոյրը, եւ իմաստութեան՝ մայրը:

15. Չուարթութիւնը հոգիին պարզ երկինքն է, եւ սրտին պայծառ օդը:

16. Ծիծաղը փոխանցիկ է. ժպտադեմ մարդու մը ներկայութիւնը բաւական է ընկերային մթնոլորտը փոխելու:

17. Չուարթութիւնը կարելոր տարր մըն է ընտանեկան երջանկութեան մէջ. առանց անոր ընտանիքը շատ բան կը կորսնցնէ իր հմայքէն:

18. Լաւատես մարդը զուարթ կ'ըլլայ, զի կը հաւատայ թէ ամէն բան դեպի բարին կ'ընթանայ:

19. Ո՛չ ոք կ'ախորժի խոժոռադեմ ու կախերես մարդէն:

20. Ժպիտը լաւագոյն յանձնարարական մըն է:

21. Ժպիտը ձգողական ոյժ ունի:

## 28. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

1. Մարդէ վերջ աշխարհի մեծագոյն բանը գիրքն է:

2. Գիրքեր կան՝ որոնց համին պէտք է նայիլ. գիրքեր կան՝ զոր պէտք է ուտել. գիրքեր ալ կան՝ զոր պէտք է մարսել:

3. Ընդհանուր ընթերցանութեան համար լաւագոյն գիրքը լաւ գրուած կենսագրութիւնն է:

4. Առանց ընթերցանութեան անկարելի է ընդհանուր զարգացումը:

5. Ո՛չ մէկ հաճոյք ընթերցանութեան չափ աժան եւ տեւական է:

6. Լաւ գիրքերը լաւագոյն բարեկամներ են:

7. Գիրքերու մեծագոյն օգուտը անոնց թելադրութիւններն են, ո՛չ թէ անոնցմէ յեղուած բաները:

8. Հմտութիւնը քիչ արժէք ունի առանց իմաստութեան եւ ողջմտութեան:

9. Ո՛չ ոք կրնայ հասնիլ այն կետին, ուր ա՛լ պէտք չունենայ ընթերցանութեան:

10. Միատեսակ ընթերցանութիւնը միակողմանի կ'ընէ մարդը:

11. Էն աղքատ մարդն իսկ կրնայ երկրորդական ուսում, եւ նոյնիսկ աւելին ձեռք բերել, եթէ գիտնայ օգտուիլ հանրային գրադարաններէն:

12. Ամէն ասպարեզի մէջ ընթերցանութիւնը անհրաժեշտ է յաջողութեան համար:

13. Ամեն մարդու պարտականությունն է զարգացնել իր միտքը, զոր բնությունը պարզեւած է իրեն:
14. Խոպան է այն միտքը՝ որ ընթերցանութեամբ չէ մշակուած. փուշ ու տատասկ միայն կը բուսնի հոն:
15. Ամեն մարդ ինքզի՛նքը պետք է կրթէ. գրքերն ու ուսուցիչները կ'օգնեն, բայց բո՛ւն գործը իրն է:
16. Ընթերցանութիւնը ինքնակրթութիւն է:
17. Մէկ տեսակ գրքեր կարդալը, մէկ տեսակ կերակուր ուտելու կը նմանի:
18. Միտքը բազմակողմանի է՝ ստամոքսի պէս, եւ ստամոքսի պէս ալ տեսակաւոր սնունդ կը պահանջէ:
19. Լաւ գրքերը մէկէ աւելի անգամ կարդա:
20. Եթէ լաւ սերտող մը չես, աշխարհ չի կրնար օգնել քեզի:
21. Ընթերցանութենէ լաւագոյն օգուտը քաղելու համար լաւ է որ նօթագրութիւն առնես մասնաւոր տետրակի մը մէջ:

## **29. ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ**

1. Ընկերութիւնը դպրոց մըն է, մարդիկ ալ անոր աշակերտները:
2. Եթէ քու կողմդ չքաշես ընկերներդ, անոնք իրենց կողմը կը քաշեն քեզ:
3. Կեանքդ այնպէս է, ինչպէս են ընկերներդ:
4. Դուն գիտնաս կամ ոչ, ընկերներդ կ'ազդեն նկարագրիդ վրայ:
5. Քաղաքակրթութեան լաւագոյն մասը ընկերային յարաբերութեան արդիւնք է:
6. Ոսկին չի կրնար մրցիլ առաքինութեան հետ, եւ մարդու մը ընկերային դիրքը ոչի՛նչ կ'աւելցնէ իր իրական արժէքին վրայ:
7. Նուրբ մտքերը աւելի արժէք ունին ընկերակցութեան մէջ, քան նուրբ հագուստները:
8. Լաւ ընկերակցութեան համար ազնուութիւնն ու փափկանկատութիւնը հարկաւոր են:
9. Բարոյական օրէնքները ընկերային յարաբերութեանց արդիւնքն են:
10. Ընկերութեան մէջ արտառոցութենէ զգուշացիր:

11. Ընկերակցութեան մէջ խօսելէ աւելի մտիկ ըրէ:
12. Ինչպէս կ'ուզես որ ուրիշը մտիկ ընէ՝ երբ դուն կը խօսիս, այնպէս ալ դուն մտիկ ընելու ես՝ երբ ուրիշը կը խօսի:
13. Ընկերութիւնը չորս բանէ կը դատէ մարդը — կերպարանք, վարք, լեզու եւ ընկերներ:
14. Ընկերային սովորոյթներու եւ քաղաքավարական ձեւերու տգիտութիւնը մեծ թերութիւն մըն է ո՛րեւէ մարդու համար:
15. Ինչպէս կ'ուզէք որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց այնպէս ըրէք:

### 30. ԸՆՏԱՆԻՔ

1. Ընտանիքը երկրի վրայ երկնային դրախտ է:
2. Ընտանիքը սիրոյ, ուրախութեան եւ խաղաղութեան օթեւանն է:
3. Լաւ ընտանիքն է որ կեանքը լաւ սկսելու կը պատրաստ մանուկը:
4. Նկարագրի լաւագոյն դպրոցը ընտանիքն է. հո՛ն է որ նկարագրի հիմնական սկզբունքները կը ստացուին:
5. Ընտանիքը նկարագրի ձուլարանն է:
6. Ճշմարիտ ընտանիքը սրբավայր մըն է, սիրոյ եւ պաշտամունքի խորան մը:
7. Ընտանիքը հանգստավայր մըն է, ուր յոգնած հոգիները կը հանգչին իրիկունները, յաջորդ օրուան տաժանքին պէտք եղած ոյժը վերստանալու համար:
8. Ընտանիքը ո՛չ միայն մարմինին բնակարանն է, այլ նաեւ սրտին: Հո՛ն է որ սերը կ'աճի եւ կը զօրանայ:
9. Ընտանիքի գահուն վրայ բազմող թագուհին մայրն է, որուն գահակալութիւնը կատարեալ է եւ թագաւորութիւնը՝ անմրցելի. անոր իշխանութեան բարոյական պտուղները յաւիտենական են:
10. Ուրիշ ամէն տեղէ աւելի ընտանիքին մէջ է որ մարդը կը գտնէ հանգստութիւն, մխիթարութիւն եւ երջանկութիւն:
11. Ընտանեկան կեանքը ընկերային կեանքի պատրաստութեան վայրն է:



12. Ամեն երիտասարդ սեփական ընտանիքի պետք ունի. ո՛րքան կանուխ որոշում տայ այդ մասին, ա՛յնքան անելի լաւ է իրեն համար:

13. Ժպիտով եւ քաղցրութեամբ օծուն ընտանիքը սրտին համար Է՛ն ցանկալի վայրն է, որքան ալ անշուք ըլլայ այն:

14. Ընտանիքի մէջ տրուած օրինակին ազդեցութիւնը շատ հեռահաս արդիւնքներ կ'ունենայ:

15. Լաւ ընտանիքը լաւագոյն դպրոցն է թե՛ մանուկին եւ թե՛ չափահասին համար: Յո՛ն է որ անոնք կը սորվին զոհողութիւն, համբերութիւն, ծառայութիւն եւ պարտաճանաչութիւն:

16. Զրիստոնեայ ընտանիքի հիմնաքարերն են սեր, բարեպաշտութիւն, քաղցրութիւն, համբերութիւն եւ զոհողութիւն, որոնք մարդկային մեծ խտելիներն են:

17. Զրիստոնեայ ընտանիքը երկնային դրախտի լաւագոյն օրինակն է:

18. Մարդու մը ամբողջ միտքը պետք է իր գործին մէջ ըլլայ. բայց եթէ երջանիկ ըլլալ կ'ուզէ, իր ամբողջ սիրտը պետք է իր ընտանիքին մէջ ըլլայ:

19. Ընտանիքը կեանքի անապատին լաւագոյն ովասիսն է:

20. Ընտանիքը կեանքի ովկիանոսին խաղաղ նաւահանգիստն է, ուր կ'ապաստանի յաճախ մրրկավար հոգին:

### 31. ԺԱՄԱՆԱԿ

1. Ժամանակը ոսկի է, կ'ըսեն. բայց ոսկիի կորուստը կարելի է դարմանել, սակայն ժամանակի կորուստը անդարմանելի է. հետեւաբար ժամանակը ոսկիէն անելի է:

2. Մեծ գործերը երկար ժամանակի պետք ունին:

3. Եթէ ժամանակի պետք ունիս, ստեղծե՛ գայն. ապա թէ ոչ, ո՛չ մէկ բանի կրնաս ժամանակ գտնել:

4. Շատ մեծ մարդիկ իրենց համբաւը շահած են իրենց սովորական զբաղումներէն դուրս, օգտագործելով թանկագին վայրկեանները, զոր շատեր յումպետս կը վատնեն:

5. Ժամանակը սպաննողը իր ապագան կը սպաննէ:

6. Վայրկեան մը մի՛ ծախսեր առանց անոր փոխարժէքը ստանալու:

7. Ժամանակը բնա՛ւ չի գործեր. ան կ'ուտէ, կը սպառէ, կը մաշեցնէ, եւ կը կործանէ. անիկա գործելու առիթ կու տայ միայն:

8. Կեանքը կարճ է. ժամանակի վատնումով աւելի կը կարճնայ:

9. Մեծ մարդիկ ժամանակի մէջ ժլատ եղած են:

10. Մէկ ազահութիւն միայն ներելի է, այն է ժամանակի ազահութիւնը:

11. Ժամանակի խնայողութիւնը լաւագոյն խնայողութիւնն է:

12. Ամէն մէկ վայրկեանդ շահարկութեան դիր:

13. Երկու բան կայ որոնց յարգը կը ճանչնանք այն ատեն միայն, երբ ա՛լ ելած են մեր ձեռքէն — ժամանակ եւ առողջութիւն:

### 32. ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ

1. Իմացական կարողութիւնները ժառանգական են ընդհանրապէս:

2. Յաջողութիւնը մեծ մասամբ ժառանգութեան արդիւնք է. այսինքն ծնունդը մեծ բաժին ունի յաջողութեան մէջ:

3. Մարդ իր ընկերներէն աւելի բան կը ժառանգէ քան իր պապերէն:

4. Նկարագրիդ մէկ մասը կը ժառանգես, միւս մասը քու գործդ է:

5. Աւելի լաւ է որ քու սերունդդ քեզմով հպարտանայ, քան թէ դուն քու նախնիքներովդ հպարտանաս:

6. Աւելի մեծ բան է ազնիւ յիշատակ մը թողուլ, քան թէ ազնուական ծնողքէ սերիլ:

7. Մարդը մարդ ընողը ազնուական ծնունդը կամ նախնիքը չեն, հապա՝ ժառանգութիւն, դաստիարակութիւն եւ միջավայր:

8. Ժառանգութիւնն ու միջավայրը կը վճռեն մարդուն ճակատագիրը:

9. Ժառանգութեան եւ դաստիարակութեան միացեալ ազդեցութիւնը թօս եւ ուղղութիւն կու տայ մարդուն կեանքին եւ նկարագրին:

10. Թե՛ կրօնը եւ թե՛ գիտութիւնը կը հաստատեն որ ծնողաց թերութիւնները կը տեսնուին գաւակներու վրայ:
11. Հարստութեան պատիւը գայն շահողին կը պատկանի, ո՛չ թէ գայն ժառանգողին:
12. Ներկայ սերունդի բարոյականը մեծ չափով կախում ունի նախորդ սերունդներուն բարոյականէն:
13. Օգտակար կեանք մը եւ մաքուր նկարագիր մը լաւագոյն բաներն են՝ որ կրնաս ժառանգ թողուլ գաւակներուդ:
14. Անցեալի միլիոնաւոր սերունդները՝ ժառանգակալութեան օրէնքով՝ կ'ապրին ներկայ սերունդին մէջ:
15. Կարելորդ այն չէ թէ պապերդ ի՞նչ եղած են, հապա այն է թէ դո՛ւն ինչ ես:
16. Դուն պապերովդ կը պարծիս, սակայն պապերդ պիտի կրնայի՞ն քեզմով պարծիլ, եթէ ողջ ըլլային:
17. Իմաստուն գաւակը ժառանգն ի՞նչ ընէ, ինք կրնայ վաստկիլ. յիմար գաւակը ժառանգն ի՞նչ ընէ, կը վատնէ գայն:

### 33. ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ

1. Ամէն բանի մէջ չափազանցութենէ զգուշացիր:
2. Ամէն բանի մէջ ժուժկալ եղիր, եւ բոլոր գործերուդ մէջ վախճանը մտածէ միշտ:
3. Կիրքն ու քմահաճոյքը անժուժկալութիւն են:
4. Բնութիւնը առատածեռն է, բայց ո՛չ շռայլ:
5. Առաքինութիւնն ու իմաստութիւնը կը գտնուին երկու ծայրայեղութեանց մէջտեղը, չափազանց քիչին եւ չափազանց շատին:
6. Ախորժակն ու փափաքը քեզի ծառայելու համար տրուած են. դուն անոնց ծառայ մի՛ ըլլար:
7. Գործի եւ խաղի մէջ ժուժկալութիւնը ա՛յնքան կարելորդ է, ո՛րքան կերակուրի մէջ:
8. Յարատեւ ժուժկալութեամբ է որ մարմինը կը վայելէ առողջութիւն, ներդաշնակութիւն եւ հանգստութիւն:
9. Ժուժկալ մարդը գերծ է հիւանդութենէ, եւ հիւանդութեան պարագային՝ իր մարմինը կրնայ տոկալ հիւանդութեան:
10. Երկար ապրելու համար ժուժկալ ապրիլ հարկ է:

11. Այն որ պետք չունեցածը կը գնէ, շատ չանցած պետք ունեցածը պիտի ծախէ:
12. Մարդիկ աւելի կը տառապին դրամի շռայլումէն քան անոր պակասութենէն:
13. Երջանիկ է այն՝ որ գիտէ յետածգել իր փափաքները:
14. Փափաքներդ ո՛րքան քիչ ըլլան, ա՛յնքան աւելի երջանիկ կ'ըլլաս:
15. Մանուկին բոլոր փափաքները գոհացնել՝ զայն թշուառութեան առաջնորդել է:
16. Թող միջոցներդ գերազանցեն պետքերդ:
17. Ամէն բանի մէջ ոսկեղէն միջինը ընտրէ:
18. Այն որ բերնէն կը մտնէ չի պղծեր մարդը, այլ այն որ բերնէն կ'ելլէ:

### 34. ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

1. Իմաստութեան սկիզբը Տերոջը վախն է:
2. Իմաստուն տղան իր հայրը կ'ուրախացնէ, բայց անմիտ տղան իր մօրը տրտմութիւն է:
3. Դաստիարակութեան նպատակը իմաստութիւն է, իմաստութեան նպատակը՝ ճշմարտութիւն:
4. Չուարթութիւնն ու ողջմտութիւնը գործնական իմաստութեան ինը տասներորդն են:
5. Ձախողութիւնը աւելի իմաստութիւն կու տայ մարդուն քան յաջողութիւնը:
6. Այն որ վնասէ իմաստութիւն կը սորվի, վնասած չի սեպուիր, այլ շահած:
7. Իմաստունը ժամանակին հետ կը քալէ, իսկ յիմարը եղած տեղը անշարժ կը կենայ:
8. Է՛ն իմաստունը կրնայ աւելի իմաստուն ըլլալ այսօր քան երէկ, եւ վաղը՝ քան այսօր:
9. Իմաստունը առաջ կը նայի, յիմարը՝ ետ:
10. Իմաստունը կը փոխուի, յիմարը անփոփոխ է:
11. Սխալները իմաստութեան դասեր են իմաստունին համար:
12. Սխալդ ընդունելէ մի՛ ամջնար. ատիկա կը ցուցնէ թէ այսօր աւելի իմաստուն ես քան երէկ:

13. Իրական կեանքի մէջ ստացուած փորձառութիւնը շատ ատելի կ'արժէ քան գիրքերէ ստացուածը:
14. Իմաստութիւնը տրամաբանութեամբ չ'ստացուիր:
15. Երանի՛ այն մարդուն՝ որ իմաստութիւն կը գտնէ, եւ այն մարդուն՝ որ հանճար կը ստանայ, վասնզի անոր շահը արծաթի շահէն աղէկ է, ու անոր արդիւնքը՝ մաքուր ոսկիէն:
16. Անիկա գոհարներէն պատուական է, եւ բոլոր ցանկալի բաները չեն կրնար հաւասարիլ անոր:
17. Անոր աջ ձեռքին մէջ օրերու երկայնութիւն կայ, եւ ձախ ձեռքին մէջ՝ հարստութիւն ու փառք:
18. Անոր ճամբաները հաճելի են, եւ բոլոր շաւիղները՝ խաղաղութիւն:
19. Անիկա իրեն յարողներուն կենաց ծառ է, ու զինք բռնողները երջանիկ կ'ըլլան:
20. Որդեա՛կ իմ, ասոնք քու աչքերուդ առջեւէն չերթան. իմաստութիւնն ու խոհեմութիւնը քովդ պահէ, եւ հոգւոյդ կեանք ըլլան ու պարանոցիդ՝ զարդ:
21. Այն ատեն ճամբադ ապահովութեամբ պիտի քալես, ու ոտքդ պիտի չսահի:
22. Ամբողջ իմաստութիւնը սա բառերուն մէջ ամփոփուած է — յուսալ եւ սպասել:
23. Տերոջը վախը իմաստութեան սկիզբն է. Տերոջը սերը՝ իմաստութեան վախճանը:

### 35. ԻՆՔՆԱՎՍՏԱՅՈՒԹԻՒՆ

1. Ինքնավստահութիւնը առանձին ոտքի վրայ կենալու քաջութիւնն է:
2. Ինքնավստահութիւնը յաջողութեան երաշխիքն է:
3. Ամէն պատուաւոր մարդ պարտի շահիլ իր ապրուստը:
4. Մեծ կարողութիւններ ունենալ բաւական չէ, պէտք է կառավարել գիտնալ զանոնք:
5. Եթէ դուն քեզի չես կրնար վստահիլ, ինչպէս կը յուսաս որ ուրիշը քեզի վստահի:
6. Է՛ն անհաճոյ մարդը ուրիշին ձեռք բացողն է:
7. Անձնագսպութիւնը մեծագոյն յաղթութիւնն է:
8. Քու անձնական չափանիշներդ բարձր պահէ միշտ:

9. Քու շուրջդ մի՛ փնտռեր բախտը, քու մեջդ փնտռե՛ գայն:
10. Ամեն մարդ ի՛նքը պետք է սորվի կեանքը. ուրիշին սորվածը օգուտ չունի իրեն:
11. Ամեն մարդ իր բախտին ճարտարապետն է:
12. Այն որ իր անձը կառավարել չի գիտեր, չի կրնար ուրիշը կառավարել:
13. Դուն քեզ յարգե՛ որ ուրիշներն ալ քեզ յարգեն:
14. Ուրիշներու կարծիքը ա՛ռ, բայց որոշումը դո՛ւն տուր:
15. Քու ծրագիրներդ դո՛ւն կազմե, ուրիշներու մի՛ վստահիր գանոնք:
16. Ինքնավստահ մարդիկն են որ ամենէն աւելի յաջողած են:
17. Ինքնավստահութիւնը նկարագրի հիմնական տարրերէն մէկն է:
18. Նպաստընկալ մը հազիւ թէ կրնայ յաջողիլ կեանքի մէջ:
19. Կեանքի մէջ կան պահեր, ուր եթէ մարդը վարանի, ամեն բան կը կորսնցնէ:
20. Ձեռներեցութիւնը կեանքի մղիչ ոյժն է:

### 36. ԼԱՒԱԳՈՅՆԴ ԸՐԷ

1. Ո՛չ ոք կը ձախողի եթէ իր լաւագոյնն ընէ:
3. Բան մը սորվէ, եւ լա՛ւ սորվէ գայն:
3. Ո՛չ մէկ վաճատութիւն կրնայ բաղդատուիլ լաւագոյնն ըրած ըլլալու ներքին վստահութեան հետ:
4. Ուրիշներու համար գործէ այնպէս, ինչպէս որ կը գործես դուն քեզի համար:
5. Պետք չէ որ գոհանաս այնչափով, որմէ աւելին կարելի է:
6. Ջանա՛ ուրիշները գերազանցել ձեռնարկներուդ մէջ, եւ շահիլ՝ մրցումներու մէջ:
7. Մեծագոյն բանը որ մարդ կրնայ ընել, իրեն տրուած ատաղձէն իր լաւագոյնը արտադրելն է: Ահա՛ այս է յաջողութիւն ըսուածը:
8. Նկարագիրդ կ'արուի եթէ լաւագոյնդ չընես:

9. Այն որ իր լաւագոյնը կ'ընէ, ինչ դիրքի մէջ ալ գտնուի, յաջողութեան ապահով ճամբուն մէջն է:
10. Լաւագոյնն ընել՝ բարձրագոյն դիրքերու պատրաստուիլ է:
11. Այն որ կիսկատար գործ կ'ընէ, ո՛չ միայն գործը կ'աւրէ, այլ նաեւ իր նկարագիրը:
12. Անփոյթ գործը անփոյթ մարդ կ'ենթադրէ:
13. Ո՛չ ոք կը վստահի անոր՝ որ կիսկատար գործ կ'ընէ:
14. Ամէն մարդ ճիւղի մը մէջ ուրիշները գերազանցելու բնական կարողութիւնն ունի, եւ կրնայ գերազանցել՝ եթէ հաւատարիմ մնայ անոր:
15. Դուն քեզ օգնէ որ Աստուած ալ քեզ օգնէ:
16. Լաւ ըլլալու ճիգը լաւութեան տանող ուղիղ ճամբան է:
17. Ամէն առիթը մեծ առիթ նկատէ, զի չես գիտեր թէ Բախտը ե՛րբ պիտի առնէ չափդ բարձրագոյն դիրքերու համար:
18. Մարդուն գործը իր հայելին է եւ իր պատկերը:

### 37. ԼՈՌԻԹԻՒՆ

1. Լռելը ոսկի է, խօսիլը՝ արծաթ:
2. Խօսիլը ցանել է, մտիկ ընելը՝ հնձել:
3. Լուռ լեզուն իմաստուն գլուխի նշան է:
4. Բնութեան մեծագոյն ոյժերը լուռ կը գործեն:
5. Եթէ չես սիրեր մէկը, լաւ է որ չխօսիս անոր մասին:
6. Մարդիկ ամենէն աւելի իրենց լեզուէն կը վնասեն:
7. Պարապ տակառը շատ աղմուկ կը հանէ:
8. Լռութեան մէջ յաճախ անանկ ոյժ մը կայ, որուն ո՛չ մէկ խօսք կրնայ հաւասարիլ:
9. Լռութիւնը քու է՛ն ազդու զենքդ է:
10. Երկու խորիէ, մէկ խօսէ, երկու չափէ, մէկ կտրէ:
11. Լռութիւնը երբեմն է՛ն կծու քննադատութիւն է:
12. Չրպարտութեան լաւագոյն պատասխանը լռութիւնն է:
13. Աղմուկը տկարութեան նշան է, շատախօսութիւնը՝ ծանծաղամտութեան:
14. Բերնէն մտնողը չի պղծեր մարդը, հապա բերնէն ելլողը:

15. Լռել գիտնալը իմաստութեան կենս է:
16. Շատ խօսքի մէջ շատ սխալ կ'ըլլայ:
17. Համրը շատախօսին կը յաղթէ միշտ:
18. Արդարին լռութիւնը անելի ոյժ ունի քան ուրիշին խօսքը:
19. Լեզուն անելի խոր վերք կը բանայ քան սուրը:
20. Շատերու խօսքերը տեղատարափ անձրեւներ են իրենց գաղափարի անապատին վրայ:
21. Շատեր տակառ մը լեցուն խօսք կը խօսին, առանց մէջը կաթիլ մը ճշմարտութեան:
22. Խօսք ըսածդ կլոր է. մտածէ, ետքը գլորէ:

### 38. ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

1. Առողջ կեանքէ վերջ խաղաղութիւնը մեծագոյն օրինութիւնն է որ մարդ կրնայ երբեք վայելել:
2. Պատմութեան մեծագոյն դէմքը՝ Յիսուս՝ Խաղաղութեան Իշխան կոչուած է:
3. Հանճարն ու տաղանդը խաղաղութեան մէջ միայն կրնան ծաղկիլ:
4. Մարդկային կարողութիւններու բնականոն զարգացման համար կեանքի բնականոն վիճակը անհրաժեշտ է:
5. Խաղաղութիւնը այնքան յաղթանակներ շահած է որքան պատերազմը:
6. Ամեն բանէ անելի բարոյական ոյժն է որ կը կառավարէ իրերու ընթացքը:
7. Ճշմարիտ յաղթականները զօրավարները չեն, այլ խորհողները:
8. Չինաթափութիւն կարելի չէ մինչեւ որ ազգերը նախ բարոյապէս չզինաթափուին:
9. Պետութիւնները խաղաղութեան վրայ կը խօսին, բայց պատերազմի վրայ կը խորհին:
10. Դաշնագիրները ոյժ չունին մինչեւ որ սրտերու մէջ չգրուին:
11. Ազգերու գործակցութիւնը զգացում մը չէ, այլ տնտեսական անհրաժեշտութիւն մը:
12. Մարդկութեան ոսկեդարը Ոսկեդէն Կանոնին մէջն է, ո՛չ թէ երկաթէ կանոնին մէջ:



13. Սպառազինումի ծախքերը քաղաքակրթության հեգնանքն են, ու պատերազմական պիտոճեները ազգերու անեծքը:

14. «Ձինեալ խաղաղութիւն»ը մինչեւ հիմա չէ կրցած խաղաղութիւն հաստատել երկրի վրայ, ու պիտի չկրնայ ալ: Խաղաղութիւնը «զինեալ» չի կրնար ըլլալ, զի ան զինում չէ, ապազինում է:

15. Խաղաղութեան պտուղներն են հանգստութիւն, երջանկութիւն, յառաջդիմութիւն, բարգաւաճում, առատութիւն, եւ ամեն տեսակ օրհնութիւններ:

16. Ինչպէս որ ազգերը պատերազմի կը պատրաստուին, այնպէս ալ պետք է որ անոնք խաղաղութեան պատրաստուին: Մարդ կ'ընէ այն գործը՝ որուն համար պատրաստուած է:

17. Եթէ խաղաղութիւն կ'ուզես, խաղաղութեան պատրաստու: Ա'յս է խաղաղութեան միակ ապահով ճամբան:

18. Միջազգային խաղաղութեան համար պետք է միջազգային ոգիով ներշնչել նոր սերունդը: Միջազգային խաղաղութեան համար միջազգային դաստիարակութիւն պետք է:

19. Ռազմական քայլերգները պետք է խաղաղութեան սաղմոսներու փոխել:

20. Ճշմարիտ քրիստոնէութիւնը միջազգային խաղաղութեան մեծագոյն երաշխիքն է: Իրականին մէջ քրիստոնէութիւնը խաղաղութեան կրօնք է:

21. Միջազգային խաղաղութեան եւ եղբայրակցութեան մեծագոյն առաքեալը Յիսուս է: Անո՛ր ազդեցութեան տակ միայն գայլն ու գառնուկը կրնան միասին ապրիլ: Այն ատեն ազգերը իրենց սուրերը խոփեր՝ եւ իրենց նիզակները յօտոցներ պիտի շինեն. ազգ ազգի վրայ սուր պիտի չվերցնէ, եւ ա՛լ պատերազմ ընել պիտի չսորվին, հապա ամեն մարդ իր որթին տակ ու իր թզենիին տակ պիտի նստի, ու վախցնող պիտի չըլլայ:

22. Փառք ի բարձունս Աստուծոյ. երկրի վրայ խաղաղութիւն եւ մարդոց մէջ հաճութիւն:

23. Երանի՛ խաղաղութիւն ընողներուն, վասնզի անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին:

### 39. ԽԻՂՃ

1. Խիղճը Աստուծոյ ձայնն է մարդուն ներսիդին:
2. Աստուած իր կամքը խղճի միջոցաւ կը յայտնէ մարդուն:
3. Ո՛րքան հնազանդիս խղճի ձայնին, ա՛յնքան յստակ կը խօսի ան: Եթէ անոր ձայնին մտիկ չընես, ան հետզհետէ կը մարի եւ կը լռէ:
4. Խիղճը բարիին եւ չարին զգացումը չէ միայն, այլ նաեւ բարին ընտրելու եւ չարը մերժելու զօրաւոր բնագոյ մը:
5. Բարոյական կրթութեան նպատակն է մարդը պայքարելու վարժեցնել խղճի հակառակ կիրքերու, փափաքներու եւ զգացումներու դէմ:
6. Առանց խղճի հսկողութեան մեծագոյն իմացականութիւնն իսկ կրնայ մոլորիլ եւ մոլորցնել:
7. Լաւ խիղճը շատ համբերատար է, եւ դժբախտութեան մէջ՝ միշտ զուարթ:
8. Մարդը կենդանիէն զանազանող մեծագոյն տարբերութիւնը խիղճն է:
9. Նկարագրի տեր մարդը խղճամիտ է. անիկա կը խօսի եւ կը գործէ համաձայն իր խղճի ձայնին:
10. Խիղճը բոլոր առաքինութեանց աղբիւրն է, եւ վարքի բոլոր կանոնները այս ակէն կը բխին:
11. Խիղճդ լաւագոյն բարեկամդ է. անիկա երբեմն կը յանդիմանէ, երբեմն կը սպառնայ եւ երբեմն ալ կը տանջէ, բայց միշտ իբրեւ բարեկամ:
12. Լուսաւորեալ խիղճը կեանքի ապահով եւ վստահելի առաջնորդն է:
13. Եթէ խիղճդ չի բողոքեր քեզի դէմ, մի՛ վախնար աշխարհի բողոքէն:
14. Խղճի պաշտօնն է գոյութեան պայքարի մէջ ընկերութեան պահպանումը:
15. Երբոր մեղքի ձեռնարկես, մի՛ մոռնար թէ լրտես մը կը դիտէ քեզ եւ կը մատնէ անպատճառ. այն է խիղճը:
16. Ամէն մարդ պետք է որ յաղթէ իր անձին, եւ կրնայ յաղթել՝ եթէ խիղճը իրեն հրամանատար կարգէ:
17. Խղճիդ ձայնին հետեւէ եւ պարտականութեան ճամբուն մէջ քալէ, հոգ չէ թէ առանձին ըլլաս:

18. Խղճի ձայնին հետեւիլը երբեմն ուրիշներու արհամարհանքը կը գրգռէ, սակայն աւելի լաւ է արհամարհուիլ, քան թէ խղճի դէմ գործել:

19. Արդար մարդը այն է՝ որուն մէջ խիղճը գերիշխան է. արդարութիւնը կը մոլորի երբոր խիղճի լռութեան դատապարտուած է:

20. Խիղճը անկողմնակալ եւ անկաշառ դատաւոր մըն է:

21. Խիղճը կեանքի մէջ Աստուծոյ փոխանորդն է:

#### 40. ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ

1. Խնայողութիւնը ինքնին մեծ եկամուտ մըն է արդէն:

2. Խնայող եղիր ժամանակի, տաղանդի եւ դրամի մէջ:

3. Խնայողութիւնը ամէն լեզուի է՛ն գեղեցիկ բառն է:

4. Շահուած դրամը չէ հարստութիւնը, հապա՛ խնայուած դրամը:

5. Ժամանակը վատնելը դրամը ծովը նետել է:

6. Խնայողութիւնը մեծ կարողութիւնն չի պահանջեր. ան կը պահանջէ ողջմտութիւն եւ անպետ հաճոյքներու դիմադրելու ոյժ:

7. Դրամ ծախսէ այն բաներու միայն, որոնք քեզի կամ ուրիշին օգուտ մը ունին:

8. Պէտք չեղած բանը մի՛ գներ, եթէ ոչ պէտք եղած բանը ծախելու կը ստիպուիս:

9. Ո՛րքան խնայես, ա՛յնքան կը դիւրանայ խնայելը:

10. Խնայե՛ առանց ժլատ ըլլալու, ծախսե՛ առանց շռայլ ըլլալու:

11. Հարստութիւնդ աւելցուր ծախսերդ պակսեցնելով:

12. Չգո՛յշ, խնայողութիւնը ազահութեան չտանի քեզ:

13. Խնայելու համար անհրաժեշտ պէտքերէդ մի՛ կտրեր:

14. Միշտ տանձ մը պահէ ծարաւ օրերուդ համար:

15. Հանգիստ ծերութիւնը խնայող երիտասարդութիւն կ'ենթադրէ:

16. Շատեր կծծիութիւնը խնայողութիւն կը կարծեն, եւ շռայլութիւնը՝ առատածեռնութիւն:

17. Կծծիութիւնն ու շռայլութիւնը երկու ծայրայեղութիւններ են. երջանիկ է այն մարդը՝ որ գիտէ ոսկեղէն միջինը ընտրել:

18. Կծծիութիւնն ու շռայլութիւնը երկու բեւեռներ են, երկուքն ալ սառուցեալ գօտիի մէջ. երջանիկ է այն մարդը՝ որ բարեխառն գօտիի մէջ կ'ապրի:

19. Խնայողութեան առաքինութիւնը պետք է մշակել մանուկ հասակին մէջ, որպէսզի բնաւորութիւն դառնայ:

20. Ծովը կաթիլներէ կազմուած է, լեռը՝ աւազի հատիկներէ:

#### 41. ԽՈՒՆԵՄՈՒԹԻՒՆ

1. Խոհեմութիւնը գործնական իմաստութիւն է. ան կը հաշուէ գործի մը կարգը, ժամանակը, միջոցը եւ մեթոտը:

2. Խոհեմութիւնը ուղիղ գործը ուղիղ կերպով ընել է:

3. Խոհեմութիւնը նկարագրի թանկագին գիծերէն մէկն է, եւ պետք է մշակել զայն մանուկ հասակէն:

4. Խոհեմութիւնը շատ կամաց կ'աճի, եւ հազիւ թէ ծաղկի չափահասութենէ առաջ:

5. Անոնք որ անուշադիր են իրենց մտածումներուն եւ խօսքերուն, շատ չանցած աւելի լուրջ գործերու մէջ ալ անուշադիր պիտի գտնուին:

6. Մի՛ ըներ այն գործը՝ որուն համար պիտի ցաւիս յետոյ:

7. Իմաստունը քայլ մը կը նետէ, եւ մէկ ոտքը լաւ մը չտեղաւորած միւսը չի վերցներ:

8. Խոհեմութիւնը կնոջ քով բնագոյ մը ըլլալու է, ո՛չ թէ առաքինութիւն մը:

9. Ուրիշները գերազանցելը տաղանդի փաստ է, բայց ի հարկին այդ գերազանցութիւնը ծածկել գիտնալը խոհեմութեան փաստ է:

10. Ուր որ խոհեմութիւն չկայ, հոն չկայ առաքինութիւն:

11. Խոհեմը կը կառավարէ իմաստունը:

12. Առանձնութեան մէջ մտածումներուդ ուշադրութիւն ըրէ, ընտանիքիդ մէջ՝ բնաւորութեանդ, եւ ընկերութեան մէջ՝ լեզուիդ:

13. Տաղանդը՝ առանց խոհեմութեան՝ կրնայ աղիտաբեր ըլլալ իր տիրոջ:

14. Խօսքի մեջ զգուշաւորութիւնը աւելի կ'արժէ քան պերճախօսութիւնը:

15. Աշխարհ եռանդի չափ խոհեմութեան պէտք ունի. թէեւ առաջինն է որ յաճախ կը կորզէ պատիւը, սակայն վերջինէն աւելի մեծ բարիք կը ծնի:

## 42. ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

1. Խորհրդածութիւնը մտքին մարզանքն է:
2. Առանց խորհելու կարդալը, առանց ծամելու ուտել է:
3. Ընթերցանութեամբ միտքը լեցնել՝ առանց խորհելու ժամանակ տալու, միտքը ծանրաբեռնել է եւ անոր ոյժը ջլատել:
4. Յաջողութիւնը մեծ չափով խորհրդածութեան արդիւնք է:
5. Միտքը կանոնաւոր եւ տեւական մարզանքի պէտք ունի, ինչպէս մարմինը:
6. Օգտակար մարդը մտախոհ մարդն է:
7. Այն որ խորհիլ չի գիտեր, չի կրնար իմաստուն ըլլալ:
8. Դաստիարակութեան նպատակը խորհողներ պատրաստել է:
9. Ընթերցանութիւնը՝ առանց խորհրդածութեան՝ գործնական արժէք չունի:
10. Խորհելով անցած ժամանակը լաւ անցած է:
11. Ֆիզիքական առողջութիւնը լաւ խորհրդածութեան պայման է:
12. Ընթերցանութիւնը հմտութիւն կու տայ, խորհրդածութիւնը՝ իմաստութիւն:
13. Կարգացածիդ մասին խորհիլ սորվէ, զարգացումի ապահով ճամբան այս է:
14. Եթէ մէկը լաւ կրթած է իր միտքը, լաւ պատրաստուած է ո՛րէն գործ ընելու:
15. Մէկը կրնայ դիպուածով մեծ ըլլալ, բայց իմաստուն, երբե՛ք:
16. Գաղափարի ուղիղ արտայայտութիւնը ուղիղ խորհելու կ'օգնէ:

17. Գրքի մը արժեքը կախում ունի մտքի տուած խթանէն:
18. Խորհրդածել կը նշանակէ որոճալ:

### 43. ԽՐԱՏ

1. Խրատը անարգողը յիմար է:
2. Լաւագոյն խրատը ծնողքի տուած խրատն է:
3. Խրատի է՛ն աւելի պէտք ունեցողները է՛ն նուագ կ'ախորժին անկէ:
4. Յարմար ատենին տրուած խրատ մը կրնայ վճռել երիտասարդի մը ապագան:
5. Ամէն մարդ՝ որքան ալ իմաստուն ըլլայ, իմաստուն բարեկամի մը խրատին պէտք ունի:
6. Խրատը շատ փափկանկատութեամբ պէտք է տրուի:
7. Բարեկամիդ խրատին ականջ դիր, մանաւանդ թշնամիիդ խրատին:
8. Անկեղծ խրատի մը անսա՛, որքան ալ դժուարիդ երթայ այն:
9. Իմաստուն մարդը քննադատութիւնը աւելի կը սիրէ քան գովեստը:
10. Լաւ խրատը օգուտ չունի, եթէ յարմար ատենին չտրուի:
11. Հաճելի խրատը քիչ անգամ օգտակար խրատ է:
12. Սխալ ատենին տրուած խրատը հակառակ արդիւնք կու տայ:
13. Չես կրնար օգնել անոր՝ որ խրատի մտիկ չ'ըներ:
14. Խրատ տուողը թող չյուսայ թէ պիտի սիրուի:
15. Շատ ատելի է այն մարդը՝ որ իր խրատը ուրիշին պարտադրելու կ'աշխատի:
16. Խրատը պէտք է որ փորձառութենէ բխի:
17. Ականջ դիր բարեկամներու յանդիմանութեան:
18. Խրատը լեղի արմատ մըն է, որուն պտուղը քաղցր է:
19. Ո՛վ անմիտ, մրջիւնին գնա եւ իմաստութիւն սորվէ:
20. Այն որ լաւ խրատ կու տայ, բայց գէշ օրինակ կ'ըլլայ, կը նմանի այն մարդուն՝ որ մէկ ձեռքով կը շինէ, իսկ միւսով կը քանդէ:
21. Խելը խրատն ի՛նչ ընէ:

#### 44. ԾՆՈՂՔ

1. Ծնողքին պարտականությունը մանուկը սնուցանել չէ միայն, այլ նաեւ զարգացնել այն յատկությունները՝ որոնց պետք պիտի ունենայ կեանքի մեջ:
2. Ծնողք իրենց օրինակով թօն եւ ուղղութիւն կու տան մանուկին նկարագրին. դաստիարակութիւնը չի կրնար հիմնովին փոխել այդ ուղղութիւնը:
3. Ծնողք ո՛րքան ուշադրութեամբ կրթեն իրենց զաւակները, ա՛յնքան սուազ կը տառապին յետոյ, թե՛ իրենք եւ թե՛ իրենց զաւակները:
4. Եթէ ծնողք առանց ուսումի կամ արհեստի մեծցնեն իրենց զաւակները, մեծ չարիք կը հասցնեն, թե՛ իրենց զաւակներուն եւ թե՛ մարդկութեան:
5. Մանուկը քիչ անգամ իր մօրը նկարագրէն աւելի բարձր նկարագրի կը տիրանայ:
6. Զօրմէն աւելի մա՛յրն է որ իր օրինակով կը կերտէ մանուկին նկարագիրը:
7. Աշխարհի մայրերը աշխարհի մանուկներուն համար պատասխանատու են, որովհետեւ մէկուն զաւակները կ'ազդեն միւսներու զաւակներուն վրայ:
8. Մանուկները անհատաբար կը տառապին ընկերային կացութենէն, բայց չեն կրնար անհատաբար փրկուիլ:
9. Զօրմէն աւելի մա՛յրն է որ կը տնօրինէ զաւակներուն ճակատագիրը:
10. Ամէն ծնողքի պարտականութիւնն է իրենց զաւակներուն տալ գոնէ նախնական ուսում եւ յետոյ՝ արհեստ մը:
11. Ամէն ծնողքի պարտականութիւնն է իրենց զաւակներուն սորվեցնել իրենց մայրենի լեզուն: Զակառակը՝ ազգին դէմ դաւաճանել է:
12. Ընդհանուր սովորութիւնն այն է որ ծնողք կը սիրեն իրենց զաւակները, եւ զաւակները կը յարգեն իրենց ծնողքը: Ժամանակն է որ փոխուի այս սովորութիւնը, եւ ծնողք յարգեն իրենց զաւակները եւ զաւակները սիրեն իրենց ծնողքը: Ուրիշ խօսքով, ժամանակն է որ ծնողք աւելի ուշադրութիւն դարձնեն իրենց զաւակներուն եւ աւելի մօտէն հետաքրքրուին անոնց ապագայով:
13. Մայրե՛ր, յիշեցէք թէ օրօրոցը շարժող ձեռքերը աշխարհը կը շարժեն:

**45. ԾՈՒԼՈՒԹԻՒՆ**

1. Ծուլութիւնը կեանքի ժանգն է:
2. Ծուլութիւնը փորձութեանց աղբիւրն է, եւ մոլութեանց՝ մայրը:
3. Անփոյթ է այն մարդը՝ որ գործի ժամանակը զուարճութեանց կը յատկացնէ:
4. Ամէն զբաղում որ օգուտ մը չի բերեր, պարզ ժամավաճառութիւն է:
5. Մեղկ ու ծոյլ մարդը չի կրնար մաքուր նկարագիր ունենալ:
6. Ծուլութիւնը կը սպառէ, աշխատութիւնը կեանք կու տայ:
7. Ծուլութիւնը ձանձրոյթ կը պատճառէ, աշխատութիւնը հաճոյք կը պարգեւէ:
8. Ծուլութիւնը անէծք է. աշխատութիւնը՝ օրհնութիւն:
9. Պաշտօնի մի՛ սպասեր. ճարէ՛ հատ մը:
10. Ծուլութիւնը այնքան դանդաղ կը քալէ, որ աղքատութիւնը շուտով անոր ետեւէն կը հասնի:
11. Անփոյթ ու անհոգ մարդը շատ մօտ է աղքատութեան:
12. Քիչով գոհացողը չի կրնար շատ ունենալ:
13. Թոյլ ու հարեանցի գործը յաջողութեան մեծագոյն խոչընդոտն է:
14. Աստուած չ'օգներ անոր՝ որ ինքն իրեն չ'օգներ:
15. Ծուլութիւն եւ մակաբուծութիւն հոմանիշ բառեր են:
16. Անփոյթ մարդը չի կրնար ստացուածք ունենալ կամ պահել:
17. Ամչցի՛ր ծոյլ նստելէ, երբ այնքան գործ կայ ընելիք ընտանիքիդ եւ ազգիդ համար:
18. Ծուլութիւնը մարմինի եւ մտքի հիւծախտն է:
19. Անգործ ուղեղը կը կորսնցնէ իր գործելու կարողութիւնը:
20. Անգործութիւնը սխալ գործունեութեան կ'առաջնորդէ:
21. Ծոյլ ու մեղկ մարդը ցնորական երազներու գերին է:
22. Անգործութիւնը անելի ոճիրներու պատճառ եղած է քան ուրիշ ո՛րէն բան:
23. Երիտասարդութեան հաճոյքները ծերութեան ցաւերն են:



24. Ո՛վ ծոյլ, մրջիւնին գնա, եւ օրինակ առ. անիկա ձմեռուան պաշարը ամառը կը ճարէ:

#### 46. ԿԱՄՔ

1. Նկարագրի արժէքը կամքի ոյժէն կախում ունի:
2. Մարդը այն է, ինչ որ է իր կամքը. կամքէ զուրկ մէկը ո՛րէն արժանիք չի ներկայացներ:
3. Ուր որ կամք կայ, հոն ճար կայ:
4. Նաբոլէոն ըսած է որ «չեմ կրնար» բառը չկայ իր բառարանին մէջ:
5. Տաղանդը չէ որ կը պակսի մարդոց, հապա՛ գործելու կամքը:
6. Կամքի ոյժը կը յաղթէ ճակատագրին:
7. Խելքը չի կրնար կամքի տեղը բռնել:
8. Կամքը նկարագրի կեդրոնական ոյժն է:
9. Այն որ զօրաւոր կամք ունի, կրնայ պարագաները ի նպաստ իրեն փոխել:
10. Խիղճը ոտքի կը հանէ մարդը, կամքը ուղիղ կը կեցնէ զայն:
11. Կամքը՝ զօրանալու համար՝ մարզանքի պէտք ունի. պէտք է կրթել զայն կանոնաւոր մարզանքով:
12. Կամքէ՛ր կախում ունի յաջողութիւնդ կամ ձախողութիւնդ, երջանկութիւնդ կամ թշուառութիւնդ:
13. Կա՛մքն է որ մարդը մարդ կ'ընէ. դաստիարակութիւն եւ միջավայր ազդակներ են լոկ:
14. Կամենալը կարենալ է:
15. Անոնք կրնան, որ կը կարծեն թէ կրնան:
16. Կամք, աշխատանք եւ կորով,  
Երեք ձիրքեր են, որով  
Մարդ ջուրի վրայ թէ հողի,  
Անպատճառ կը յաջողի:

#### 47. ԿԱՆՈՆԱԲՈՐՈՒԹԻՒՆ

1. Կարգ ու կանոնը երկնքի առաջին օրէնքն է:
2. Կանոնաւորութիւնը անհրաժեշտ պայման է ոեւէ ասպարէզի մէջ յաջողելու համար:

3. Շատեր շատ բան գիտեն, բայց բան մը չեն գիտեր կանոնաւոր կերպով:
4. Հմտութիւնդ շատ բան չ'արժեր եթէ կանոնաւոր եւ դասաւորուած չէ:
5. Տունիդ եւ խանութիդ մէջ ամէն բանի տեղ մը որոշէ, եւ ամէն բանը իր տեղը դիր. ասանկով թէ՛ ժամանակ կը շահիս եւ թէ՛ լաւ գործ կը տեսնես:
6. Ամէն գործատեր եւ ամէն տանտիկին պետք է որ ճշդապահ եւ մեթոտիկ ըլլան:
7. Կարգ ու կանոնը առեւտուրի հոգին է:
8. Այն որ կարգ ու կանոնի չի հետեւիր, թէ՛ շատ կը յոգնի եւ թէ՛ չի կրնար որոշ գործ մը կատարել:
9. Պետք է մանուկը կանուխէն վարժեցնել կանոնաւորութեան, որպէսզի ունակութիւն դառնայ իրեն:
10. Ճշդապահութիւնն ու պարկեշտութիւնը երկուորեակ են:
11. Ժամադրութիւնդ յարգէ, եւ միշտ հինգ վայրկեան առաջ ժամադրավայրդ ներկայ եղիր:
12. Գործ մը չաւարտած ուրիշ գործի մը մի՛ ձեռնարկեր:
13. Այն որ մէկ անգամէն մի քանի գործի կը ձեռնարկէ, չի կրնար լաւ կատարել ոեւէ մէկը:
14. Թափթփած մարդը ո՛րեւէ գործի յարմար չէ, եւ ո՛չ որ կ'ախորժի անոր ընկերակցութենէն:
15. Յաջող եւ ձախող մարդոց միջեւ եղած տարբերութիւնը գործի քանակը չէ, այլ գործելու եղանակը: Առաջինը մեթոտի տէր է, երկրորդը՝ թափթփած:
16. Ամէն բանի տեղ մը, եւ ամէն բան իր տեղը. ա՛յս թող ըլլայ կեանքիդ կանոնը:

#### 48. ԿԵԱՆՔ

1. Կեանքը կեանքէ կը ծնի, ա՛յս է տիեզերական օրէնքը:
2. Աստուած է կեանքի եւ կենդանութեան աղբիւրը: Անո՛վ միայն կանք, կ'ապրինք ու կը շարժինք:
3. Կեանքը Աստուծոյ մեծագոյն պարգեւն է, ոչի՛նչ կրնայ անոր տեղը բռնել ամբողջ տիեզերքի մէջ:

4. Ապրիլը ծոյլին համար բեռ մըն է, աշխատասերին համար՝ հաճոյք մը:
5. Կեանքը անհատական խնդիր մըն է, զոր ամեն մարդ իրեն համար պետք է լուծէ:
6. Կեանքը բարիի եւ չարի միջեւ պայքար մըն է. լաւ ազդեցութիւնները կ'աստուածացնեն, գէշերը՝ կ'անասնացնեն:
7. Մարմինիդ եւ մտքիդ վիճակը մեծապէս կ'ազդէ կեանքի փիլիսոփայութեանդ վրայ:
8. Յաջող եւ երջանիկ կեանք անկարելի է առանց բնութեան օրէնքներու համակերպութեան:
9. Կեանքի մէջ նպատակը գերադաս է միջոցէն:
10. Եթէ կեանքը արեւ ըլլար առանց ստուերի, ժպիտ ըլլար առանց արցունքի, եւ հաճոյք ըլլար առանց վիշտի, պիտի չարժէր ապրիլ այդ կեանքը:
11. Չկայ երկինք առանց ամպի, ծով՝ առանց ալիքի, վարդ՝ առանց փուշի, կեանք՝ առանց ցաւի:
12. Ո՛չ ոք աշխարհը գտած է իր ուզածին պէս:
13. Կեանքդ մեծապէս կամքեդ կախում ունի, արկածները բացառութիւն են:
14. Բարիներու համար աշխարհի բարի է, չարերու համար՝ չար, լաւատեսի համար՝ դրախտ, յոռետեսի համար՝ դժոխք:
15. Անհատներու կեանքը կը ցուցնէ թէ ի՞նչ է ընկերութեան կեանքը:
16. Այնպէս ապրէ՛ որպէս թէ վաղը պիտի մեռնիս, այնպէս գործէ՛ որպէս թէ բնա՛ւ պիտի չմեռնիս:
17. Կեանքը վայրկեանի մը տելոդութիւնն ունի, բայց այդ վայրկեանը կը բաւէ մշտնջենաւոր բաներու ձեռնարկելու:
18. Որքան ալ ապրիս, առաջին քսան տարիները կեանքիդ երկարագոյն կեսն է, որմէ կախում ունի ամբողջ մնացեալը:
19. Կեանքը շատ կարճ է, չ'արժէր սնտոյի բաներով սպառել զայն:
20. Կեանքը մեծ մասամբ չիրականացած երազներու շարք մըն է:
21. Կեանքի է՛ն անոյշ բանն է երազ ունենալ եւ երազելով մեռնիլ:

22. Յիշէ թէ քու ծնած միջոցիդ ամենքը ուրախ էին, իսկ դուն կու լայիր. այնպէս ապրէ որ մեռնելու ատեն ամենքը լան, իսկ դուն ուրախ ըլլաս:

23. Մարդուն կեանքը խոտի պէս է, հովը կ'անցնի անոր վրայէն, ու ան կ'ոչնչանայ:

24. Ունայնութի՛նն ունայնութեանց, ամենայն ինչ ունայնութիւն է:

25. Կեանքի նաւակն հետք չթողուց իր ետին,  
Մոռացումը տարաւ ինձմէ ամէն բան,  
Հին երազներս ամպերու պէս կ'անհետին,  
Յիշատա՛կն ալ կ'անցնի երգի մը նման:

#### 49. ԿԵՂԾԱԻՈՐՈՒԹԻՒՆ

1. Խաբէբան կրնայ շատերը խաբել, բայց ո՛չ բոլորը:

2. Վարպետութիւնը կրնայ խաբել քեզ, ուղղամտութիւնը՝ երբե՛ք:

3. Այն որ սովորականէն աւելի կը յարգէ քեզ, կա՛մ խաբել կ'ուզէ քեզ, կա՛մ ալ պետք ունի քեզի:

4. Է՛ն թեթեւ երկդիմութիւնը կը կորսնցնէ վստահութիւնը:

5. Կեղծաւորութիւնը իրական սուտ է:

6. Կեղծաւորը գառնուկի մորթով գայլ մըն է:

7. Կեղծաւորը սրբութիւն ծախող սատանայ մըն է:

8. Անբնական ամէն բան կեղծիք է:

9. Երկերես մարդը չի կրնար վստահութիւն շահիլ:

10. Կեղծաւորը անսկզբունք մարդ է. ան ուղղամտութիւնն ու բարեպաշտութիւնը որպէս դիմակ կը գործածէ:

11. Խաբէբային դէմ բնական զէնքդ կասկածն է:

12. Պարտականութեան մէջ թերանալը կեղծաւորութեան կամ ստորին չքմեղանքներու կը մղէ մարդը:

13. Ոչի՛նչ այնքան ամօթահար կ'ընէ մարդը, որքան իր սուտին կամ կեղծիքին երեւան ելլելը:

14. Կեղծ քաղաքավարութիւնը թափանցիկ կեղծաւորութիւն է:

15. Ուղղամիտ մարդը իր եղածէն տարբեր երեւնալ չ'ուզեր:

16. Յետին նպատակդ ծածկելը տկարութիւնդ կը ցուցնէ:

17. Տաղանդն ու արժանիքը կը ցուցնեն իրենք զիրենք, առանց ո՞նէ հնարքի դիմելու:
18. Կատակի մէջ խօսուած սուտը նուազ սուտ չէ:
19. Է՛ն փոքր կասկածը բոլոր փաստերդ ջուրը կը ձգէ:
20. Երկդիմի մարդը անհաստատ է իր բոլոր ճամբաներուն մէջ:
21. Ստախօսութիւնը ո՛չ միայն անպարկեշտութիւն է, այլ նաեւ երկչոտութիւն:
22. Վստահ եղիր թէ մեղքերդ պիտի գտնեն քեզ ուշ կամ կանուխ:

### 50. Կ Ե Ն Գ Ա Ղ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ն

1. Կենցաղագիտութիւնը հինգ զգայարանքներու կեանքն է. բաց աչք, սուր ականջ, կիրթ ճաշակ, սուր հոտառութիւն, եւ նուրբ շօշափելիք:
2. Կենցաղագէտ մարդը քիչ անգամ կը սայթաքի:
3. Կենցաղագիտութիւնը կը կտրէ այն հանգոյցները գոր չի կրնար քակել:
4. Կենցաղագէտ մարդը մէկ տաղանդով աւելի գործ կը տեսնէ քան հասարակ մարդը՝ տասը տաղանդով:
5. Տաղանդը բնածին է, կենցաղագիտութիւնը՝ ստացական: Չայն ստանալու միջոցն է մոռնալ ինքզինքը եւ ծառայել ուրիշներու ճաշակին եւ նախասիրութեանց:
6. Կենցաղագիտութիւնը պետքին ծնունդն է. անկկա կ'աճի հոն՝ ուր գոյութեան պայքարը աւելի սուր է:
7. Տաղանդը ոյժ է, կենցաղագիտութիւնը՝ ճարտարութիւն. տաղանդը ծանրութիւն է, կենցաղագիտութիւնը՝ ոյժ. տաղանդը գիտէ ի՞նչ ընելը, կենցաղագիտութիւնը՝ գիտէ ի՞նչպէս ընելը. տաղանդը հարստութիւն է, կենցաղագիտութիւնը՝ պատրաստ դրամ:
8. Կենցաղագիտութիւնը գործնական տաղանդ է, եւ տաղանդէն աւելի՛ կարելոր է գործնական կեանքի մէջ:
9. Կենցաղագիտութիւնը նուրբ դիւանագիտութիւն է եւ սուր նրբամտութիւն: Ան գիտէ իր կառքը վարել փշոտ ու անել ճամբաներու մէջ իսկ:
10. Շատ տաղանդաւոր մարդիկ ձախողած են կենցաղագիտութեան պակասէն:

11. Գուլեճի վկայականը չի կրնար կենցաղագիտութեան եւ ողջմտութեան տեղը բռնել:
12. Կենցաղագիտութիւնը յառաջ կ'ընթանայ անսայթաք, մինչդեռ տաղանդը հեռուէն կը հետեւի անոր կաղալով:
13. Կիները այրերէն անելի ողջմտութիւն ունին:
14. Ողջմտութիւնն ու կենցաղագիտութիւնը գիտեն տեղի տալ անխուսափելիին առջեւ:
15. Խելք ունենալը մեծ բան է, խելքը կառավարել գիտնալը անելի մեծ բան է:
16. Կենցաղագիտութիւնն ու ողջմտութիւնը երկուորեակներ են:

## 51. ԿԻՆ

1. Կինը մարդուն գերի կամ անոր հաճոյքին առարկայ ըլլալու համար ստեղծուած չէ:
2. Կինը կրթել, մարդը կրթել է. կինը բարձրացնել, մարդը բարձրացնել է. կինը ազատագրել, մարդը ազատագրել է:
3. Կինը մարդուն ճակատագրին տերն է, վասնզի կի'նն է որ կը ծնի մարդը, եւ կը մեծցնէ զայն իր ուզածին պէս:
4. Մարդը չի կրնար առողջ միտք եւ մաքուր բարոյական ունենալ, եթէ կինը չունի զանոնք:
5. Քանի որ ժողովուրդին բարոյական վիճակը ընտանեկան կրթութենէ կախում ունի, կնոջ դաստիարակութիւնը կենսական կարեւորութիւն ունի ազգին համար, զի կի'նն է որ կը տնօրինէ ընտանիքին ճակատագիրը:
6. Աշխարհի բարոյական եւ հոգեւոր յառաջդիմութիւնը կնոջմէ կախում ունի:
7. Կնոջ դիրքն ու վիճակը ազգի մը քաղաքակրթութեան ապահով չափանիշերն են:
8. Աղջիկներու վսեմագոյն կոչումն է ըլլալ հաւատարիմ կիներ, գորովագութ մայրեր, եւ գործունեայ տանտիկիներ. ուրիշ կոչում չունին անոնք:
9. Կիները՝ որպէս ցեղին մայրերն ու ցեղին զաւակները մեծցնողները, մասնաւոր հոգածութեան արժանի են:

10. Տնաշեն կինը կարգ ու կանոնով կը կառավարէ տունը, եւ ծախքերը եկամուտին կը յարմարցնէ:

11. Հասկնալու համար թէ կին մը ո՞րքան մաքուր, կոկիկ եւ տնաշեն է, անոր հիւրանոցէն անելի խոհանոցը աչքէ անցուր:

12. Կնոջ մը ճաշակն ու մաքրութիւնը իր գաւակներուն վրայ կը տեսնուին:

13. Դաստիարակութիւնը շատ կ'օգնէ կնոջ՝ իր տունը լաւ կառավարելու եւ իր գաւակները լաւ կրթելու գործին մէջ:

14. Անուս կինը շատ քիչ կը տարբերի շիք պուպրիկէն:

15. Ուսումը անելի զօրաւոր պաշտպան մըն է կնոջ մը համար ամէն տեսակ փորձութեանց դէմ, քան անոր անմեղունակ տգիտութիւնը:

16. Կինը իր կրօնաբարոյական կրթութեամբ անելի լայն ազդեցութիւն ունի քան իր ֆիզիքական հրապոյրներով:

17. Կնոջ ազդեցութիւնը ամէն տեղ նոյնն է. ուր որ կինը ապականած է, ընկերութիւնն ալ կ'ապականի, եւ ուր որ անիկա մաքուր բարոյականի տէր է, ընկերութիւնն ալ այնպէս կ'ըլլայ:

18. Մարդը մտքին կը տիրէ, կինը՝ սրտին. մարդը իմացականութիւն է, կինը՝ զգացում. մարդը կը հաւատացնէ, կինը կը սիրցնէ:

19. Կինը անելի հակամետ է ապականելու քան մարդը. կինը անելի՛ շուտ կը մոլորի քան մարդը:

20. Կնոջ մը մեծագոյն հրապոյրը կնոջական վարմունքն է, ո՛չ թէ առնական:

21. Լաւ հագուիլը կնոջ պարտականութիւնն է, բայց կինը պետք է որ յիշէ թէ նորոյթը իրեն համար է, ո՛չ թէ ինքը՝ նորոյթին համար:

22. Կնոջ դէմ մի՛ խօսիր ուր որ պետք չէ:

23. Ըսուած է թէ կինը մարդուն կէսն է, բայց կան կիներ՝ որ մարդուն հազիւ մէկ տասներորդն են, եւ կիներ ալ կան՝ որ մարդուն ինը տասներորդն են:

24. Իմաստուն կիները կը շինեն իրենց տունը, բայց յիմար կինը իր ձեռքովը կը քանդէ գայն:

25. Առաքինի կինը ո՞վ կրնայ գտնել. անոր գինը գոհարներէն շատ անելի է:

26. Առաքինի կինը իր երկանը պսակ է, բայց գեշ կինը անոր ոսկորներուն մեջ փտութեան պէս է:

27. Օրօրոցի հսկողը աշխարհի կը հսկէ. օրօրոցը շարժող ձեռքերը աշխարհը կը շարժեն. մանուկներու առաջնորդողը աշխարհի կ'առաջնորդէ:

## 52. ԿՈՉՈՒՄ

1. Ամէն մարդու համար մեծագոյն հարցը ասպարեզի մը ընտրութիւնն է, զի այդ ընտրութենէն կախում ունի իր ներկան եւ ապագան:

2. Ասպարեզդ մի՛ ընտրեր լոկ դրամի համար, եւ զայն մի՛ նկատեր ապրուստի միջոց մը լոկ:

3. Մարդ կը պարծենայ իր ասպարեզին համար երբ կը զգայ թէ իր բոլոր կարողութիւնները կը հաստատեն իր ընտրութիւնը:

4. Զեզ բարձրացնող ասպարեզ մը ընտրէ: Անով կրնաս դրամ չդիզել, բայց յիշէ՛ թէ բարձր կեանքը չի կրնար բաղդատուիլ դրամի հետ:

5. Աճումը կեանքի նպատակն է. ասպարեզդ պետք է նպաստէ աճումիդ, եւ ո՛չ թէ արգելք ըլլայ անոր:

6. Մարդու մը համար մեծ բախտ է իր կոչումը գիտնալ եւ իր ամբողջ կեանքը նուիրել անոր:

7. Ասպարեզդ ընտրելու ատեն հաշուի առ նախասիրութիւններդ, տաղանդներդ, եւ յաջողութեան հաւանական առիթները:

8. Ինչպէս որ գործը կ'ազնուացնէ մարդը, այնպէս ալ մարդը պետք է ազնուացնէ իր գործը:

9. Անանկ ասպարեզ մը ընտրէ, որ կարելի ըլլայ ընդարձակել զայն:

10. Է՛ն ապերջանիկ մարդը այն է որ կը զգայ թէ իր գործին համար կոչում չունի եւ թէ ստիպուած կ'ընէ զայն:

11. Ճաշակիդ յարմար ասպարեզ մը ընտրէ, ա՛յս է յաջողութեան առաջին պայմանը:

12. Ասպարեզիդ հետ առնչութիւն ունեցող ամէն նիւթ ուսումնասիրէ: Ասիկա շատ կը նպաստէ գործիդ յաջողութեան:



13. Մեկէ աւելի գործերու յարմարութիւն եւ կարողութիւն մշակէ քու մէջդ, որպէսզի կեանքի ելեւեջներու մէջէն յաջող դուրս գաս:

14. Զու մասնագիտութեանդ մէջ չափազանց մի՛ բանտարկուիր:

### 53. ԿՐՕՆՔ

1. Կրօնքը մարդուն բարուք յարաբերութիւնն է իր Արարչին եւ իր նմաններուն հետ:

2. Կրօնքը Աստուծոյ հետ մարդուն յարաբերութեան գործնական արտայայտութիւնն է:

3. Կրօնքը մեր բոլոր պարտականութիւնները իբր աստուածային պատուէրներ նկատել է:

4. Մարդ Աստուծոյ համար ստեղծուած է, եւ չի կրնար հանգիստ ընել մինչեւ որ չգտնէ զայն:

5. Այն որ մարդոց թշնամի է, Աստուծոյ ալ թշնամի է:

6. Աստուծոյ հետ յարաբերութիւնդ չի կրնար շիտակ ըլլալ, եթէ մարդոց հետ շիտակ չէ:

7. Այն որ չի սիրեր իր եղբայրը՝ որ կը տեսնէ, ի՞նչպէս կրնայ սիրել զԱստուծո՞ր չի տեսներ:

8. Կրօնքի նպատակն է երկրի վրայ խաղաղութիւն եւ մարդոց մէջ հաճութիւն յառաջացնել. ամէն ինչ որ ատելութիւն եւ հալածանք կը ստեղծէ կրօնի հակառակ է:

9. Կրօնք եւ գիտութիւն՝ տարբեր մարգերու մէջ՝ միեւնոյն նպատակին կը ձգտին, որ է մարդուն երջանկութիւնը. ուրեմն անոնք թշնամի չեն, այլ նոյն նպատակի ծառայող դաշնակիցներ:

10. Ամէն ինչ որ կը միտի ճնշելու, տկարացնելու եւ ապականելու, կրօնքի հակառակ է. կրօնքը կը քաջալերէ, կը զօրացնէ, կը բարձրացնէ եւ կ'երջանկացնէ:

11. Նախապաշարումը մտքի տկարութիւն է. զգուշացի՛ր անկէ:

12. Գիտութիւնը, բանականութիւնը եւ փորձառութիւնը պէտք է կառավարեն զգացումներդ եւ կրօնական եռանդդ:

13. Կրօնք եւ գիտութիւն միասին քալելու են, եթէ ոչ կրօնքը բնա՛ւ չի քալեր:

14. Ստեղծագործութեան ետեւը միտք մը եւ կամք մը կայ. անոր առջեւը՝ նպատակ մը եւ յոյս մը:

15. Տեսանելին անտեսանելիին ապացոյցն է:
16. Ամեն կրօնք՝ որ ճշմարտութեան վրայ հաստատուած չէ, նախապաշարում է. ճշմարիտ մէկ կրօնք կայ միայն, այն է ճշմարտութեան կրօնքը:
17. Մարդու մը կրօնքը շատ բան չ'արժեր, եթէ չլուսաւորէ իր դէմքը, չքաղցրացնէ իր լեզուն, չազնուացնէ իր գործերը, եւ չսրբացնէ իր ամբողջ կեանքը:
18. Ուղղափառութիւնը կայունութիւն կ'ենթադրէ, եւ իբր այդ՝ մտքի կաշկանդում է եւ յառաջդիմութեան արգելք:
19. Ինչպէս որ գիտական ըմբռնումները կը փոխուին ժամանակին հետ, այնպէս ալ կրօնական ըմբռնումները պետք է որ փոխուին ժամանակի ոգիին համաձայն:
20. Կրօնքը կեանք է, աստուածաբանութիւնը՝ անոր փիլիսոփայութիւնը:
21. Կրօնքը մարմինն է, վարդապետութիւնը՝ անոր հագուստը:
22. Ինչպէս որ հին սերունդները իրենք շինեցին իրենց հաւատամքը, այնպէս ալ այս սերունդը պետք է որ ինքը շինէ իր հաւատամքը, օգտուելով հիներու փորձառութենէն:
23. Մարդ սխալական է, ուրեմն չի կրնար կատարեալ գործ արտադրել. հետեւաբար, ամեն հաւատամք վերաքննելի է եւ սրբագրելի, զի անկատար մարդոց գործ է:
24. Մարդուն կրօնասիրութիւնը համամարդկային երեւոյթ մըն է, եւ քաղաքակրթութեան մեծագոյն ազդակը:
25. Գիտութիւնը օգտակար է, իսկ կրօնքը՝ հարկաւոր:
26. Կրօնքը բարոյականութիւն կը պարունակէ, բայց բարոյականութիւնը կրօնք չի պարունակեր:
27. Կրօնքը ո՛րքան հալածուի, ա՛յնքան կը տարածուի: Եկեղեցիին շէնքը մարտիրոսներու արիւնով ներկուած է:
28. Կրօնքը փրկելու մի՛ աշխատիր, ա՛ն թող փրկէ քեզ:
29. Կրօնքը փրկուելու պետք չունի, դո՛ւն փրկուելու պետք ունիս:

## 54. ՀԱԳՈՒՄՏ

1. Մարդիկ առաջին տեսքով իրենց հագուստն կը դատուին:
2. Հագուստիդ սուղ ըլլալը կարեւոր չէ, մաքուր ըլլալը կարեւոր է:

3. Հագուստը քաղաքավարության չափ կարելուր ազդակ մըն է ընկերային կեանքի մէջ:
4. Ամէն մարդու պարտականութիւնն է կարելի եղածին չափ մաքուր եւ կոկիկ հագուիլ:
5. Ո՛չ ձիւղերը, ո՛չ ալ առաքինութիւնը կրնան ազնիւ մարդու երեւոյթ մը տալ քեզի, եթէ հագուստդ աղտոտ ու փնթի է:
6. Անոնք որ չեն յարգեր հագուստի սովորոյթները, ընդհանրապէս կ'անտեսեն պարկեշտութիւնը, առաքինութիւնը եւ նկարագիրը:
7. Հագուստի տրուած դրամը շահարկութեան դրուած դրամ է:
8. Լաւ հագուող մարդը սուղ հագուողը չէ անպատճառ. կոկիկ ու մաքուր հագուիլը լաւ հագուելուն կէսն է:
9. Լաւ հագուելու համար գեղեցիկ դէմքէ եւ լեցուն քսակէ աւելի բան պէտք է. պէտք է ճաշակ, նրբադատութիւն եւ ողջմտութիւն:
10. Հագուստը աւելի աչքի կը զարնէ քան վարքը:
11. Հագուստը նկարագիր չէ, բայց յաճախ կը մատնանշէ զայն:
12. Հագուստը մարդու համար լաւ ցուցանիշ մըն է, հետեւաբար ան կ'ազդէ յաջողութեան կամ ձախողութեան:
13. Լաւ հագուիլ չի նշանակեր նորոյթի հետեւիլ անպատճառ:
14. Ամէն մարդ իր գործին յարմար հագուստը հագնելու է:
15. Լաւ հագուելու արուեստը կրնայ գեղարուեստ մը նկատուիլ:
16. Հագուստի աղտոտութիւնը ընդհանրապէս նկարագրի աղտոտութեան նշան է:
17. Մատաղ հասակի մէջ հագուստը կը նպաստէ նկարագրի կազմութեան, իսկ չափահասութեան կը ցուցադրէ զայն:
18. Նորոյթը միշտ իշխած է մարդոց վրայ, եւ միշտ ալ պիտի իշխէ:
19. Լաւ հագուստը ամէն տեղ յարգանք կը ներշնչէ:
20. Լաւ հագուիլը խնայողութիւն է:
21. Լաւ հագուստը լաւ յանձնարարական մըն է:
22. Լաւ հագուստը՝ հարստութեան պէս՝ ոյժ մըն է:

## 55. ՀԱՄՐԱՄ

1. Լաւ անունը շատ հարստութենէ աւելի լաւ է:
2. Մարդու մը համբաւը մեծ առնչութիւն ունի իր յաջողութեան հետ:
3. Բարի համբաւը քու նկարագրիդ պտուղն է. ան դրամով չի գնուիր. ծնունդէ, տաղանդէ եւ հարստութենէ կախում չունի:
4. Վարքդ մեծապէս կ'ազդէ համբաւիդ:
5. Լաւ անունը գոհար մըն է, որ մութի մէջ ալ կը պահէ իր փայլը:
6. Կամքի տէր եւ կորովի մարդու անուն ունենալը շատ մեծ արժէք ունի. ան կը լռեցնէ հակառակորդները:
7. Համբաւը կորսնցնելը աւելի դիրիս է քան զայն շահիլը:
8. Մարդու մը համբաւը իր վրայ կը հրաւիրէ ուրիշներու ուշադրութիւնը:
9. Համբաւ շահելու երկու ճամբայ կայ. մէկն է լաւ մարդոց կողմէ գովուիլ, միւսը՝ գէշ մարդոց կողմէ բամբասուիլ: Լաւ է առաջին ճամբան ապահովել, զի վերջինը ինքնին կ'ընկերանայ անոր:
10. Եթէ մէկը քեզ գրպարտէ, անանկ ապրէ, որ ո՛չ ոք հաւատայ անոր ըսածին:
11. Հարուստը այն է, որ բարի համբաւը կը նախընտրէ ոսկին:
12. Ինքնագովութիւնը բան մը չ'աւելցնէր համբաւիդ վրայ, բայց շատ բան կը պակսեցնէ անկէ:
13. Աղքատութիւնը համբաւի արգելք մը չէ. շատ աղքատներ համբաւի տէր եղած են իրենց առաքիւնութիւններով:
14. Յիշատակ թողուլը անպատճառ հռչակաւոր ըլլալ չէ. շատեր տխրահռչակ են:
15. Անանկ բարձր ապրէ, որ վարէն նետուող գրպարտութեան քարերը չկարենան ոտքերուդ հասնիլ:
16. Աւելի լաւ է որ մարդուն աչքը ելլէ, քան թէ անունը:

## 56. ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

1. Համբերութիւնը սուրբերուն մարգանքն է:
2. Բնութեան է՛ն բարերար գործողութիւնները համբերութեամբ կը կատարուին:

3. Համբերությունը մեծ հոգիներու յատուկ է:
4. Համբերությունը կը կառավարէ մարմինը, կը զօրացնէ հոգին, կ'ազնուացնէ բնաւորությունը, կը մեղմէ բարկությունը, կը մարէ նախանձը, կը նուաճէ հպարտությունը, կը սանձէ լեզուն, կը զսպէ ձեռքը, կ'արհամարհէ փորձությունը եւ կը դիմանայ հալածանքի:
5. Համբերությունը յաջողութեան բանալին է:
6. Այն որ համբերել չի գիտեր, մեծ գործերու համար ծնած չէ:
7. Համբերությունը ներդաշնակություն կը ստեղծէ ընտանիքին մէջ եւ դրացիներու միջեւ:
8. Լեզուն զսպողը իմաստուն է:
9. Հանճարին երեք չորրորդը համբերություն է:
10. Յառաջդիմությունը համբերութեան պտուղն է, մեծ արդիւնքները երկար ժամանակի կը կարօտին:
11. Համբերությունը հաւատքի պահապանն է, խաղաղութեան պաշտպանը, խոհեմութեան ուսուցիչը:
12. Համբերությունը դառն է, բայց իր պտուղը՝ քաղցր:
13. Համբերությունը լաւատեսութեան կը վարժեցնէ մարդը:
14. Այն որ համբերել գիտէ, կացութեան տերն է միշտ:
15. Համբերել գիտե՞ս, ուզածդ կրնաս ձեռք անցընել:
16. Այն որ կը ցանէ, պետք է համբերէ մինչեւ հունձքի ժամանակ. լաւ հունձքերը ուշ կը հասունանան:
17. Համբերությունը կը սպաննէ ցան ու հոգը. անհամբերությունը կ'աւելցնէ զանոնք:
18. Կեանքի ցաւերուն միա՛կ դարմանը համբերութիւնն է:
19. Համբերությունը նկարագրի լաւագոյն փորձաքարն է:
20. Բարկությունը տկարութեան նշան է, համբերությունը՝ քաջութեան:
21. Բարիք մէկ օրուան մէջ շինուած չէ:
22. Կամաց աճապարէ:

## 57. ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

1. Հայրենասիրությունը սրտին է՛ն վսեմ զգացումն է:
2. Հայրենասէր մարդը նախանձաւոր կ'ըլլայ իր հայրենիքին ազատութեան, բարօրութեան եւ պատիւին:

3. Երեք բաներ որոնց համար կ'արժէ կռուիլ — պատիւ, ընտանիք եւ հայրենիք:
4. Կան պարագաներ, ուր հայրենասիրութիւնը վստմութեան կը հասնի:
5. Ամէն քաղաքացիի պարտականութիւնն է պաշտպանել իր հայրենիքին ազատութիւնն ու անկախութիւնը, ի հարկին իր կեանքի գնով:
6. Դրօշակը հայրենիքին խորհրդանշանն է. դրօշակը յարգել հայրենիքը յարգել է, գայն պաշտպանել հայրենիքը պաշտպանել է:
7. Ընդհանուր ազգաց պատմութեան ծանօթութիւնը գիտակից հայրենասիրութեան կը նպաստէ:
8. Ճշմարիտ ազգասէրը իրականութեան լոյսով կը նայի թէ՛ իր հայրենիքին եւ թէ՛ ուրիշներու հայրենիքին:
9. Ճշմարիտ ազգասէրը իր ազգին շահը ուրիշ ազգերու վնասին մէջ չի փնտռեր:
10. Ազգասիրութիւն չէ քու ազգդ գերզնահատելը եւ ուրիշ ազգերը ստորագնահատելը:
11. Ազգասիրութիւնը կուսակցականութենէ տարբեր է:
12. Ազգամոլութիւնը ազգասիրութիւն չէ, եւ վնասակար է:
13. Դաւաճանը այն է որ պատերազմի եւ խաղաղութեան ժամանակ կը մերժէ ծառայել իր ազգին շահերուն:
14. Ազգային հանդեսներուն ներկայ եղիր միշտ. ան մեծապէս կը նպաստէ ազգասիրութեան:
15. Հայրենասիրութեան օրրանը ընտանիքն է:
16. Կառավարութիւն մը չի կրնար իր ժողովուրդէն աւելի լաւ ըլլալ:
17. Ճշմարիտ հայրենասէրը կը բողոքէ երբ տեսնէ թէ իր հայրենիքը անիրաւ պատերազմի կը մտնէ:
18. Հայրենասիրութիւնը բարքերու ազնուացման կ'առաջնորդէ:
19. Ազգի մը պահպանման մեծագոյն ազդակներն են լեզու, գրականութիւն եւ հայրենիք:
20. Անհատ մը կամ ժողովուրդ մը կ'ունենայ այն ազգին նկարագիրը, որուն լեզուն կը խօսի:
21. Ամէն ազգասէր մարդ պարտի իր ազգին լեզուն գիտնալ եւ խօսիլ:

22. Ազգասիրությունը առաքինություն մըն է, ազգայնականությունը՝ մոլություն մը:

### 58. ՀԱՆԳԻՍՏ

1. Ամեղ զբօսանքի սերը առաքինություն մըն է, ոչ նուազ կարելոր քան անմեղութեան եւ ճշմարտութեան սերը:

2. Հանգիստը, հաճոյքն ու վայելքը ամէն մարդու իրաւունքն է. առանց անոնց՝ կեանքը անտանելի բեռ մըն է:

3. Հանգիստը կը զօրացնէ մարմինը եւ կը նորոգէ աշխատելու ախորժակը:

4. Ամէն գուարճություն տեսակ մը օգուտ ունենալու է, եթէ ոչ վնասակար կը դառնայ:

5. Ընտանեկան եւ ընկերային յարաբերութեանց մէջ անմեղ զբօսանքները շատ օգտակար եւ կազդուրիչ են:

6. Անոնք որ կ'աշխատին, պետք է նաեւ խաղան, եւ անոնք որ կը խաղան, պետք է նաեւ աշխատին:

7. Լաւ գործելու համար հանգիստը այնքան կարելոր է, որքան աշխատանքը:

8. Հանգիստը յոգևություն կ'ենթադրէ. այն որ չի յոգևիր, չի կրնար հանգիստը վայելել:

9. Մարզանքը լաւ առողջութեան եական պայմանն է:

10. Մտքին հանգիստ տալու է երբեմն, որպէսզի կարենայ աշխատութեան տոկալ եւ պահել իր ոյժը երկարատեւ:

11. Յերեկը գործի ժամանակ է, գիշերը՝ հանգիստի. սխալ է ցերեկը քնանալ եւ գիշերը գործել:

12. Ճշմարիտ հանգիստը վատնում չէ, այլ ինսայողություն, որովհետեւ ան կը նորոգէ սպառաճ ոյժը:

13. Նկարագրի կազմութեան համար հանգիստը այնքան կարելոր է, որքան աշխատանքը:

14. Միտքը այնքան կը նորոգուի զանազանութեան, որքան դադարէ: Չբաղումը փոխելը այնքան հանգիստ կու տայ, որքան զբաղումը դադրեցնելը:

15. Խելացի մարդը իր հաճոյքները կ'աւելցնէ, օգտակարը հաճելիին խառնելով:

16. Արձակուրդները գործի եւ յաջողութեան համար շատ հարկաւոր են:

17. Չափազանց հանգիստը հանգիստ ըլլալէ կը դադրի, եւ այնքան սպառնիչ է, որքան չափազանց աշխատանքը:

18. Հանգիստ քունը շատ առողջարար է եւ կը նորոգէ մարմինը:

19. Լաւ է սա կանոնին հետեւիլ — ուրիշ ժամ աշխատութիւն, ուրիշ ժամ հանգիստ, եւ ուրիշ ժամ քուն:

20. Շաբաթը օր մը հանգիստ ընելը թէ՛ աստուածային պատուիրանք է եւ թէ՛ բնութեան պահանջ:

21. Ինծի եկէք, ո՛վ յոգնած ու բեռնաւորուածներ, եւ ես ձեզ պիտի հանգչեցնեմ — Յիսուս:

## 59. ՀԱՄԱՏՔ

1. Հաւատքը յուսացուած բաներուն եութիւնն է, եւ չերեւցած բաներուն՝ ապացոյցը:

2. Պարտինք հաւատալ շատ բաներու գոր չենք հասկընար, ինչպէս կը հաւատանք շատ բաներու գոր չենք տեսներ:

3. Չեն կրնար գործ տեսնել անոնք՝ որ ամէն բանի մէջ ստուգութիւն կը փնտռեն:

4. Բանականութիւնն ու ողջմտութիւնը հաւատքին նեցուկներն են:

5. Գործիդ յաջողութիւնը կախում ունի անոր վրայ ունեցած հաւատքէդ:

6. Յաջողութեան մեծագոյն տարրերէն մէկն է քու կարողութեանդ վրայ ունեցած հաւատքդ:

7. Հաւատքը կը գլէ կ'անցնի փորձառութիւնը. անիկա խիզախ յառաջդիմական մըն է:

8. Հաւատքը ոեւէ պաշտպան կամ փաստաբան չունի տրամաբանութեան եւ հակաճառութեան դէմ պաշտպանելու համար ինքզինքը:

9. Հաւատքը մտքին հեռադիտակն է, եւ հոգիին՝ աչքը:

10. Վիատութիւնը հաւատքի վախճանն է:

11. Եթէ հաւատք ունենաս Աստուծոյ եւ քու վրադ, կրնաս յաղթել ոեւէ արգելքի:

12. Կեանքի լաւ կողմը տեսնել սորվէ. հոգիիդ մէջ հաւատքի արեւը պահէ. թոյլ մի՛ տար որ վիատութիւնն ստուեր ձգէ ճամբուդ վրայ:

13. Հաւատա՛ որ բարին վերջապէս պիտի յաղթէ չարին:



14. Հաւատքը համբերութիւն կը ծնի:
15. Հաւատա՛ թէ յաջողութեան համար ծնած ես, եւ պիտի յաջողիս:
16. Հաւատքը գիտութիւն է, եւ գիտութիւնը՝ հաւատք:
17. Տեսանելի բաները ժամանակաւոր են, անտեսանելի բաները՝ յաւիտենական:
18. Հաւատքով կ'իմանանք թէ աշխարհ Աստուծոյ խօսքով ստեղծուած է, եւ թէ երեւցած բաները չերեւցածներէն ելած են:
19. Հաւատա՛ աստղիդ, եւ պիտի յաջողիս:
20. Հաւատքը առանց բանականութեան այնքան վտանգաւոր է, որքան բանականութիւնը առանց հաւատքի:
21. Հաւատքը այնքան հարկաւոր է գիտութեան մէջ, որքան հարկաւոր է կրօնքի մէջ:

## 60. ՀԻԱՅՈՒՄ

1. Հիացումը մեծ դեր ունի նկարագրի կազմութեան մէջ:
2. Մեծին եւ վսեմին հիացումը մեծ կարողութիւններու յատկանիշն է:
3. Ժողովուրդը կը հիանայ գիտունին վրայ, բայց կը յարգէ ու կը պաշտէ հերոսը, վասնզի նկարագիրը մտքէն չի բխիր, այլ սրտէն:
4. Երբ ժողովուրդ մը հիանայ իմացական կարողութեանց վրայ եւ քաջալերէ զանոնք, առանց նկատի առնելու անոնց բարոյական նկարագիրը, ամէն տեսակ ապականութեանց ճամբուն մէջ կը գտնուի:
5. Գեղեցիկին ու վսեմին հիացումը մշակէ քու մէջդ, որովհետեւ առանց անոր կեանքը առանց ովասիսի անապատ մըն է:
6. Մարդիկ կը հիանան իրենց տեսակի մարդոց վրայ:
7. Հաստատակամ եւ յարատեւող մարդուն վրայ ամէն մարդ կը հիանայ:
8. Մեծ ու բարի մարդիկ ուրիշներն իրենց ետեւէն կը քաշեն, գրաւելով անոնց հիացումն ու յարգանքը:
9. Ազնիւ նկարագրի հիանալը կ'ազնուացնէ ու կը բարձրացնէ մարդը, ազատելով զայն եսի կապանքներէն:

10. Մեծ եւ բարի մարդուն տեսքն անգամ հիացում կը պատճառէ երիտասարդին:
  11. Ինչ բանի որ հիանանք զայն կը գովենք:
  12. Հիացումը նկարագրի ներշնչարանն է:
  13. Մանուկը կ'առնէ այն մարդուն կաղապարը, որուն կը հիանայ:
  14. Աշակերտը բան չի սորվիր այն ուսուցիչէն, որուն վրայ համարում չունի:
  15. Այն որ հիանալ չի գիտեր զուրկ է կեանքի խթանէն:
  16. Գիտակցաբար կամ ոչ նմանելու կ'աշխատինք անոնց՝ որոնց կը հիանանք:

### 61. ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

1. Հնազանդութիւնը ընտանիքին առաջին օրէնքն է:
2. Հնազանդութիւնը բարոյական նկարագրի հիմն է:
3. Հնազանդիլը աւելի դիւրին է, քան հրամայելը:
4. Հնազանդութիւնը պարտաւորիչ է մարդուն, որքան ատեն որ ապրի:
  5. Ամէն գնով պարտականութեան ձայնին հնազանդիլը քաղաքակիրթ կեանքի հիմնաքարն է:
  6. Սիրոյ համար հնազանդիլը աւելի բարձր է քան վարձատրութեան համար հնազանդիլը:
  7. Հնազանդութիւնը որդիական պարտականութեանց առաջինն է:
  8. Մանուկը պարտի հնազանդիլ, որովհետեւ ան չի գիտեր ինչ որ օգտակար է իրեն համար:
  9. Հնազանդիլը կառավարելու արուեստին սկիզբն է:
  10. Հնազանդութիւնը կեանքի պայքարին կը պատրաստ մանուկը:
  11. Թերի հնազանդութիւնը թերի կեանքի մը արդիւնքն է:
  12. Անհնազանդութիւնը ամէն տեսակ մեղքի եւ թշուառութեան արմատն է:
  13. Սրիկայ մարդիկ անհնազանդ զաւակներ եղած են:
  14. Հնազանդութիւնը լաւ քաղաքացիութեան սկիզբն է:
  15. Բնութեան բարիքներէն օգտուելու համար պարտինք հնազանդիլ անոր օրէնքներուն:

16. Եթե պետութեան օրէնքներուն կը հնազանդիս կառավարութենէն վախճալու պատճառ չունիս:

17. Եթե վախի համար կը հնազանդիս Աստուծոյ, տակաւին չես հասկցած սա խօսքերուն իմաստը — Աստուած սեր է: Սիրոյ մէջ վախ չկայ: Կատարեալ սերը վախը կը փարատէ:

18. Զու հայրդ ու մայրդ պատուէ, ու հնազանդ եղիր անոնց:

## 62. ՀԱՄԱՐՈՒԹԻՒՆ

1. Եսը հպարտութեան արմատն է:

2. Հպարտութիւնը արժանիք չ'աւելցնէր. անիկա նախանձ կը ստեղծէ եւ դժբախտութիւնը կը փութացնէ:

3. Հպարտութիւնը հիմնուած է իրական կամ երեւակայական կարողութեանց վրայ: Նախանձը հիմնուած է իրական կամ երեւակայական տկարութեանց վրայ: Հպարտութիւնը զօրաւորին թերութիւնն է, նախանձը՝ տկարին:

4. Ո՛րքան իրական համարում ունենաս վրադ, ա՛յնքան նուազ հպարտ կ'ըլլաս:

5. Ուրիշ մոլութիւններ ծածուկ մնալ կ'ուզեն, բայց հպարտութիւնը կը սիրէ հրապարակի վրայ ճեմել:

6. Հպարտութիւնը սովորաբար տգիտութեան արդիւնք է. ո՛րքան շատ գիտնաս, ա՛յնքան քիչ գիտնալդ կը հասկնաս:

7. Հպարտը շատ կը սիրէ ուրիշներու անունը մրոտել:

8. Ինքնայարգումը պէտք է զանազանել հպարտութենէն. առաջինը օգտակար է, երկրորդը՝ վնասակար:

9. Դուն քեզ որքան յարգես, ուրիշներն ալ այնքան կը յարգեն:

10. Սկզբունքներո՛վդ հպարտացիր, ո՛չ թէ ընթացքովդ. սխալ սկզբունքներու մէջ կրնաս շիտակ ընթանալ:

11. Պարծանքը քիչ անգամ ոյժին կ'ընկերանայ. ինչ որ գործով կրնաս փաստել, պէտք չունիս խօսքով փաստելու:

12. Ամբարտաւանութիւնը շատ կը նմանի իր ծնողաց, որք են եսասիրութիւն եւ ատելութիւն:

13. Շատեր կը գործեն սա սխալը,— կը կարծեն թէ իրենք ուրիշներէն աւելի խելացի են:

14. Անոնք որ կը կարծեն թէ ուրիշներէն սորվելիք բան չունին, լաւ կամ կարելոր գործ մը չեն կրնար կատարել:
15. Հպարտը կը նախընտրէ տգէտ մնալ, քան թէ ուրիշներէն բան սորվիլ:
16. Հպարտը կը սիրէ բարձրանալ ուրիշները վար գարնելով:
17. Սա բաներուն համար ամէն մարդ կրնայ հպարտանալ,— լաւ անուն, իրական յաջողութիւն, վսեմ իտեալ, ազնիւ վարք, բարձր նկարագիր:
18. Երանի՛ հեզերուն, վասնզի անոնք պիտի ժառանգեն երկիրը:

### 63. ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

1. Ճշմարտութիւնը բոլոր գիտութեանց հիմն է, եւ բոլոր ընկերութեանց շաղախը:
2. Ճշմարտութիւնը աշխարհի լոյսն է, արդարութեան՝ պատուանդանը, եւ լաւ քաղաքականութեան՝ հիմը:
3. Ո՛րքէն առաքինութենէ աւելի ճշմարտութիւնն է որ յարգանք կը ներշնչէ եւ վստահութիւն կ'ապահովէ:
4. Ճշմարտութիւնը պարզ է, ո՛չ ուսումնասիրութեան կը կարօտի, ո՛չ արուեստի:
5. Սուտը ո՛րքէն արդարացում չունի. ստախօսին չափ անարգ ու վտանգաւոր բան չկայ. անոր ընկերացողը ապահով ճամբու մէջ չէ:
6. Ո՛չ մէկ նկատողութիւն կրնայ արդարացնել քեզ ճշմարտութիւնը զոհելուդ համար. անիկա պէտք է թագաւորէ կեանքիդ բոլոր յարաբերութեանց վրայ:
7. Ճշմարտութեան մեծագոյն բարեկամը ժամանակն է, անոր մեծագոյն թշնամին՝ նախապաշարումը, եւ անոր լաւագոյն ընկերը՝ խոնարհութիւնը:
8. Ստախօսին ո՛չ ոք կը վստահի, եւ ո՛չ ոք կը փնտռէ անոր բարեկամութիւնը:
9. Ճշմարտութիւնը է՛ն ապահով գետինն է որուն վրայ մարդիկ կրնան ապահով ապրիլ:
10. Ճշմարտութիւնը խօսէ միշտ. սուտը աւելի կը կնճռոտէ սխալը:
11. Ճշմարտութեան պատուաւոր գետնի վրայ կենալուն չափ պատուաբեր բան չկայ:

12. Սուտը մեծ ոճիրներու առաջին քայլն է:
13. Թեթև եւ հարեւանցի գործերը իրականութեան մէջ ստախօսութիւն են:
14. Բռնի ոյժով չես կրնար մէկը ճշմարտութեան առաջ-նորդել, այլ համոզելով:
15. Ճշմարտութիւնը իրականութեան հետ ուղիղ յարաբերութիւն է:
16. Ճշմարտութիւնը Աստուծոյ հետ ներդաշնակութիւն է:
17. Մարդը ճշմարտախօս՝ ընել կ'ուզես, հաւատա՛ անոր:
18. Ճշմարտութիւնը պիտի գիտնաք, ու ճշմարտու-թիւնը պիտի ազատէ ձեզ:
19. Ես եմ ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքը:—  
Յիսուս

#### 64. ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

1. Մանուկը ժպտելով կու գայ աշխարհ. կեանքը հաճոյք մըն է անոր համար. այսու հանդերձ ամէն ժամ, ամէն վայրկեան կը գծէ այն ճամբան որուն պիտի հետեւի իր կեանքը:
2. Մանուկը հարցնելու իրաւունք ունի, ու պէտք է որ պատշաճ պատասխան ստանայ, ո՛չ թէ յանդիմանուի որպէս անկիրթ:
3. Դեռատի հասակին մէջ նկարագիրը ինչ ուղղութիւն որ առնէ, ընդհանրապէս նոյնը կը մնայ, եւ աստիճանաբար մնայուն ձեւ կը ստանայ քանի չափահասութեան մօտենայ:
4. Մանուկին միտքը մեղրամոմի պէս կ'ընդունի ամէն տեսակ տպաւորութիւն, գէշ կամ աղէկ, բայց մարմարի պէս կը բռնէ զանոնք:
5. Մանուկը չի կրնար չընդօրինակել իր տեսածը:
6. Մանուկին նկարագիրը մարդուն նկարագրին կորիզն է: Դաստիարակութիւնը անոր վրայ կ'աւելցնէ, բայց կորիզը նոյնը կը մնայ:
7. Մանկութեան շրջանին ստացուած է՛ն պզտիկ տպաւորութիւններն իսկ խիստ կարելոր հետեւանքներ կրնան ունենալ:

8. Մանուկին խենդությունները երիտասարդին մոլությունները կը դառնան, եւ վերջն ալ մարդուն ոճիրները:

9. Բարեբաստիկ է այն օրը ուր մանուկը կը հասկնայ եւ կ'ընդունի թէ նկարագրի չափանիշներն են արդարութիւն, սեր, մաքրութիւն, յոյս, պարկեշտութիւն, եւ ճշմարտութիւն:

10. Մարդիկ աչքով աւելի կը սորվին քան ականջով. տեսնուած բանը աւելի խոր տպաւորութիւն կը թողու քան լսուած կամ կարդացուած բանը: Ասիկա աւելի ճշմարիտ է մանկութեան շրջանին:

11. Ո՛չ մանուկին, ո՛չ ալ մօրը փափաքն է որ կրնայ չափանիշ նկատուիլ, հապա ինչ որ շահաւոր է մանուկին համար:

12. Ծնողքը մանուկին հետ վարուելու են այնքան արդարասիրութեամբ, որքան սիրով, զի արդարութիւնը սիրոյ չափ կարելոր է:

13. Կանխահասութիւնը կարողութեան նշան չէ, եւ պէտք չէ որ չափազանց քաջալերուի:

14. Մանուկը մարդուն հայրն է:

15. Մանուկը իր ճամբուն սկիզբը կրթէ, որպէսզի ծերութեան ատենն ալ անկէ չխոտորի:

## 65. ՄԱՐԴ

1. Մարդը Աստուծոյ պատկերին վրայ ստեղծուած է:

2. Մարդը ստեղծագործութեան գլուխ գործոցն է:

3. Մարդը հրաշքներու հրաշքն է, Աստուծոյ անքննելի եւ անիմանալի խորհուրդը:

4. Իտեալ մարդը այն է՝ որ ճշմարիտ հայր է, ճշմարիտ դրացի, ճշմարիտ քաղաքացի, եւ ճշմարիտ կրօնասէր:

5. Մարդուն մէջ հրեշտակն ու սատանան կը կռուին անոր տիրելու համար:

6. Մարդը աւելի մեծ է քան իր բոլոր մտածումներն ու գործերը, աւելի մեծ քան իր դաւանանքն ու հաւատամքը:

7. Մարդը աւելի մեծ է քան ամբողջ տիեզերքը. հոգիի եւ մարմնի միութեան մէջ աւելի խորհուրդ կայ քան ամբողջ տիեզերքի մէջ:

8. Մարդը գործի մեքենայ ըլլալու համար ստեղծուած չէ, հապա վսեմ նկարագիր կերտելու համար:

9. Մարդը երկրագունդին տերն է. աստղերը կը համրէ, անդունդները կը չափէ, հեռաւորութիւնը կը ջնջէ, եւ երկրի գանձերը կը գործածէ իր հանգիստին համար:

10. Մարդը անցեալ դարերու մշակոյթին պտուղն է. ներկայ սերունդը անցեալի եւ ապագայի միացման գիծն է:

11. Մարդը կատարեալ ստեղծուած չէ, կատարեալ ըլլալու համար ստեղծուած է:

12. Մարդուն հաճոյքն ու պարտականութիւնը կնոջ հետ յարաբերութեան մէջ կը դնեն զինքը օրօրոցէն մինչեւ գերեզման:

13. Մարդը միտք է, կինը՝ սիրտ. մարդը դատողութիւն է. կինը՝ զգացում. մարդը ոյժ է, կինը՝ շնորհք, զարդ եւ սփոփանք:

14. Մարդը ի բնէ աւելի վէս է քան կինը, եւ նուազ սիրուն անկէ:

15. Կեանքի մէջ մարդուն ճակատագիրը վճռող բանն է՝ իր յարաբերութիւնը կնոջ հետ:

16. Մարդ եւ ոյժ հոմանիշ են. ոյժը մարդուն փառքն է:

17. Միշտ յիշէ թէ մարդ ես, եւ թէ մարդուն կը վայելէ մարդավայել կեանք ապրիլ:

18. Ճշմարիտ մարդը չի կորսուիր ամբոխին մէջ, իր անհատականութիւնը բարձր կը պահէ միշտ:

19. Ճշմարիտ մարդը պատշաճութեան օրէնքները կը յարգէ եւ արտառնոցութենէ կը խորշի միշտ:

20. Մարդու մը ինչ ըլլալը կը հասկցուի կնոջ հանդէպ անոր բռնած դիրքէն:

21. Ճշմարիտ մարդը կ'ունենայ այն բաները որ կը պահանջէ կնոջմէն:

22. Մարդ եմ եւ մարդու վերաբերեալ ո՛չ մէկ բան օտար է ինծի:

23. Այն որ առանձնակեաց է չի կրնար մարդոց առաջնորդ ըլլալ:

24. Մարդկութեան պատմութիւնը մեծ մարդոց պատմութիւնն է:

25. Մա՛րդը կը կերտէ պատմութիւնը, եւ ո՛չ թէ մեծամասնութիւնը:

26. Մարդ աշխարհը գտաւ նախ, հիմա ալ ինքզինքը գտնելու կ'աշխատի:

27. Մեծ մարդը այն է որ իր ժամանակէն առաջ ծնած է:

28. Մարդ կը փնտռեմ, մա՛րդ:

## 66. ՄԵԾՈՒԹԻՒՆ

1. Ճշմարիտ մեծությունը նկարագրի մեջ է:
2. Այն մեծությունը որ բարոյական սկզբունքներու վրայ հիմնուած է, իրական մեծութիւն է:
3. Ճշմարիտ մեծութիւնը շատ քիչ առնչութիւն ունի ոյժի, կարողութեան կամ հարստութեան հետ:
4. Բարձր դիրքի տէր մարդիկ երեք բաներու գերի են — պետութեան, համբաւին եւ դիրքին. այսպէս, անոնք տերը չեն ո՛չ իրենց անձին, ո՛չ իրենց գործին, ո՛չ ալ իրենց ժամանակին:
5. Մեծ մարդը այն է որ դիւրութեամբ կը կենայ այն բարձրութեան վրայ, ուր ուրիշներ շատ դժուարութեամբ կը հասնին:
6. Մարդիկ մեծ չեն ծնիր, մեծութիւնը ժառանգական չէ:
7. Մարդուն մեծութիւնը իր կեանքին մեջն է, եւ քաղաքակրթութիւնը անոր պտուղն է:
8. Մեծ մարդիկ բացառութիւն են միշտ, եւ մեծութիւնը ինքնին յարաբերական է:
9. Մեծ մարդիկ բարի չեն միշտ, բայց բարի մարդիկ միշտ մեծ են:
10. Մեծ ըլլալը այնքան դիւրին է, որքան պզտիկ ըլլալը:
11. Բարոյական գերազանցութիւնը անհրաժեշտ է ամէն տեսակ մեծութեան համար:
12. Մեծ մարդիկ սովորական մարդիկ են, միայն թէ անոնք աւելի զարգացած եւ հասունցած են:
13. Մեծ են այն մարդիկը՝ որ հանրային կարծիք կը ստեղծեն, եւ հանրութիւնը լաւագոյն նպատակներու կ'առաջնորդեն:
14. Մեծ մարդու եւ սովորական մարդու միջեւ եղած տարբերութիւնը կամքի ոյժի տարբերութիւն է:
15. Մեծութիւնը հիմնուած է առաքինութեան եւ բախտի միացումին վրայ:
16. Պարկեշտութիւնը ո՛չ միայն մեծութեան առաջին քայլն է, հապա ան իսկ է մեծութիւնը:
17. Համեստ գործն ու խոնարհ ծագումը չեն կրնար մեծութեան արգելք ըլլալ:
18. Ո՛չ ոք մեծութեան կը հասնի առանց չափով մը զգալու թէ իր կեանքը իր ազգին կը պատկանի, եւ թէ ինչ որ



Աստուած տուած է իրեն, մարդկութեան օգտին համար տուած է զայն:

19. Առանց բարութեան եւ առաքինութեան մեծութիւն չկայ:

20. Մեծութիւն մը կայ բիրտ ոյժի վրայ հիմնուած — ֆիզիքական մեծութիւն է այն. մեծութիւն մը կայ մտքի վրայ հիմնուած — իմացական մեծութիւն է այն. մեծութիւն մըն ալ կայ որ բնածին է եւ վսեմ պաշտօնն ունի պաշտպանելու բարին, գեղեցիկը եւ ճշմարիտը — հոգեկան մեծութիւն է այն, որ է ճշմարիտ մեծութիւնը:

21. Ժողովրդականութիւնը իրական մեծութեան փաստ մը չէ. շատ մեծ մարդիկ արհամարհուած եւ հալածուած են իրենց ժամանակակիցներէն:

22. Մեծ մարդիկ մագնիսի պէս ուրիշները իրենց կը քաշեն:

23. Մեծ մարդիկ մահէն վերջ կ'ապրին, պզտիկ մարդիկ մահէն առաջ կը մեռնին:

24. Արծիւը ճանճ չ'որսար:

## 67. ՄԻՋԱՎԱՅՐ

1. Մարդ իր միջավայրին ծնունդն է. բնական եւ ընկերային միջավայրը թօն եւ ուղղութիւն կու տայ կեանքին:

2. Ազնիւ գաղափարի տեր մէկը կը բարձրացնէ իր միջավայրը, զի մարդ կրնայ ազդել իր միջավայրին, թէեւ ինքն ալ կ'ազդուի անկէ:

3. Փոխանակ միջավայրիդ յարմարելու կրնաս միջավայրդ մեծապէս քեզի յարմարցնել:

4. Միջավայրեդ վե՛ր բարձրացիր, եթէ ան կ'արգիլէ յառաջդիմութիւնդ:

5. Միջավայրդ մեծ առնչութիւն ունի յաջողութեանդ հետ, ինչպէս նաեւ շրջանակդ՝ վարքիդ հետ:

6. Պարագաները չեն կրնար նկարագիր ստեղծել, բայց կ'ազդեն անոր:

7. Տո՛ւր մարդուն կարողութիւն եւ զայն գործածելու ասպարէզ, ան պիտի կրնայ կարելոր գործ կատարել, թէեւ ո՛չ իր ամէն երազածը:

8. Աննպաստ պայմանները չեն կրնար արգիլել ոյժերուդ գործածութիւնը, թէեւ կրնան սահմանափակել զայն:

9. Ամէն մարդ՝ իր անհատականութեան ոյժին համեմատ՝ կ'ազդուի իր միջավայրէն եւ կ'ազդէ անոր:

10. Թէեւ պարագաները ունին իրենց ազդեցութիւնը, սակայն ընդհանրապէս լաւագոյն մարդիկը կը յաջողին լաւագոյն դիրքերը ձեռք անցընել:

11. Բոլոր մեծ նուաճումները արդիւնք են աննպաստ միջավայրի մէջ յարատեւ պայքարի եւ տքնաջան աշխատանքի:

12. Շիտակ է թէ հազուագիւտ դէպքերու մէջ պարագաներն են որ կը ստեղծեն մարդը, սակայն նոյնքան շիտակ է թէ մա'րդն է որ կը ստեղծէ պարագաները:

13. Լաւագոյն մարդը չի կրնար միշտ լաւագոյն դիրքի տիրանալ. պարագաները մեծապէս կ'ազդեն դիրքի, թռշակի եւ պաշտօնի վրայ:

14. Դիպուածները քու հակումներդ ի յայտ կը բերեն յաճախ, եւ կը վճռեն կեանքիդ ասպարէզը:

15. Մարդուն նկարագիրը չ'ազդուիր այնքան իր ընտանեկան պարագաներէն, որքան իր բնական միջավայրէն:

## 68. ՄՏԱԾՈՒՄ

1. Մտածել կը նշանակէ որոճալ:

2. Եթէ լաւ մտածես, լաւ կը խօսիս եւ լաւ կը գործես:

3. Մտածումներն են որ ձեւ ու կաղապար կու տան նկարագրին:

4. Մտածումը մտքին մարսողական գործարանն է. ամէն գաղափար պետք է այդ գործարանէն անցնի, որպէսզի կարելի ըլլայ իւրացնել զայն:

5. Մտածումը մտքին գտարանն է, որ կը գտէ ուսման պաշարը:

6. Առանց մտածելու մտքի պաշար ամբարել անկարելի է:

7. Մտքի նուաճումները ոչ այնքան ուսումի արդիւնք են, որքան մտածումի:

8. Մտածումը կը կառավարէ գործը. այն որ իր մտածումը կը կառավարէ իր ճակատագրին տերն է:

9. Գաղափարը գործին սերմն է:
10. Երեւակայութիւնդ մաքուր պահէ, եթէ ոչ՝ դուռը բաց է թշնամիին առջեւ:
11. Կեանքը մեծ մասամբ մտքին գոյնը կ'առնէ:
12. Մտքիդ սնունդը լաւ ընտրէ, որ լաւ մտածումներ ծնին մտքիդ մէջ:
13. Մտածումները հոգիին ուսուցիչներն են, կամ լաւ եւս դասագիրքերը:
14. Վեհ մտածումները այնքան անհրաժեշտ են վեհ կեանքի համար, որքան լաւ կերակուրները առողջ մարմնի համար:
15. Մտածումները ծաղիկներ են, որոնցմէ պէտք է թորես կեանքիդ բոյրը:
16. Միտքդ լաւ մտածումներով լեցուր, որպէսզի գէշ մտածումներու տեղ չմնայ:
17. Գէշ մտածումները վայրի գազաններէն աւելի վտանգաւոր են, վասնզի գազաններու ճամբան կրնաս գոցել, բայց գէշ մտածումները ամէն կողմէն կը յարձակին վրայդ:
18. Միտքը բնա՛ւ պարապ չի կենար, կամ լաւ մտածումներով կը զբաղի կամ գէշ:
19. Գէշ մտածումը չի կրնար բոյն դնել մտքիդ մէջ, եթէ չքաջալերես զայն:
20. Տպաւորութիւնը սերմ է, կը ծի՛ կ'ըլլայ գաղափար, կը ծաղկի՛ կ'ըլլայ նպատակ, կը պտղաբերի՛ կ'ըլլայ գործ:
21. Բերանը սրտի աւելցածէն կը խօսի:

## 69. ՄՐՅՈՒՄ

1. Մրցումը յաջողութեան մեծ օրէնքն է. կրթական աշխարհի մէջ մրցումը կարելոր ազդակ մըն է:
2. Մրցումը անհրաժեշտ է միտքը սուր եւ փայլուն պահելու համար:
3. Ընդդիմադիր պարագաները ոյժ կը ստեղծեն:
4. Ուր չկայ մրցում, հոն չկայ պայքար, եւ հետեւաբար չկայ աճում:
5. Դժուարութիւնները կը վախցնեն անարժան մրցորդները եւ հրապարակէն դուրս կը նետեն զանոնք:
6. Գօտեմարտը կը զօրացնէ ջիղերը եւ կը սրէ միտքը:

7. Քու հակառակորդդ քու օգնականդ է:
8. Մրցումի մեջ յաղթելու համար նախատեսութիւնն ու հնարամտութիւնը ազդու գէնքեր են:
9. Հակառակութիւնը դիմադրութեան ոյժը կ'աւելցնէ:
10. Մարդու մը նկարագիրը կազմողները իր թշնամիներն են յաճախ:
11. Իմաստուն մարդը չ'արհամարհեր իր հակառակորդը, հապա կ'ուսումնասիրէ անոր դիրքն ու կացութիւնը, եւ կ'օգտուի անոր առաւելութիւններէն:
12. Մրցումի մեջ հեգնանքը փաստ չէ. հակառակորդը ծաղրելը տկարութեան նշան է:
13. Մրցումը կը սորվեցնէ ծրագրել, նախատեսել, տրամաբանել, դիմադրել, եւն.:
14. Մրցումը կը սրէ միտքը, եւ կ'աւելցնէ խելքը:
15. Միտքը մտքի հետ շփուելով կը յղկուի:
16. Գաղափարներու ընդհարումներէն լոյս կը ծագի:
17. Կեանքը գոյութեան պայքար մըն է. այն որ ապրիլ կ'ուզէ պետք է որ պայքարի:
18. Մեծ մարդիկ մէկ ուսումով չեն հասած մեծութեան. անոնք տքնաջան աշխատած են, երբ իրենց ընկերները հանգիստ կը քնանային:

## 70. ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ

1. Յաջողութեան համար իմացական բացառիկ կարողութիւնը անհրաժեշտ չէ. շատ յաջողածներ միջակ կարողութեան տէր մարդիկ եղած են:
2. Յաջողիլ կը նշանակէ կեանքի նպատակը իրագործել:
3. Յաջողութիւնը կազդուրիչ դեղ մըն է. ան աչքերուն փայլ կու տայ, դէմքին՝ գոյն, եւ ջիղերուն՝ ոյժ:
4. Յաջող մարդը դէմքէն յայտնի կ'ըլլայ:
5. Ճշմարիտ յաջողութիւնը այն է՝ որ ձեռք բերուած է առանց վնասելու ֆիզիքական, մտաւորական կամ բարոյական առողջութեան:
6. Ճշմարիտ յաջողութիւնը բազմակողմանի է, եւ կը կայանայ բնական կարողութիւնները իրենց բարձրագոյն աստիճանին զարգացնելուն մեջ:

7. Բո՛ւն յաջողութիւնը դրամ դիզել չէ. ի՞նչ արժէք ունի այն դրամը, որուն համար զոհած ես առողջութիւնդ, խիղճդ կամ պատիւդ:

8. Միշտ յիշէ թէ յաջողութիւնդ ամէն բանէ առաջ քեզմէ կախում ունի:

9. Լաւագոյն յաջողութիւնը պատուաւոր կեանքն է, հարուստ ըլլայ կամ աղքատ:

10. Բո՛ւն յաջողութիւնը մարդուն մէջ եղած աստուածային բնութեան աճումն ու զարգացումն է:

11. Ճշմարիտ յաջողութեան եւ դրամ դիզելուն մէջ շատ քիչ առնչութիւն կայ:

12. Յաջողութիւնը քեզի չի գար. դո՛ւն պետք է երթաս անոր:

13. Յաջողութեան համար անհրաժեշտ են մաքուր կեանք, անբիծ նկարագիր եւ սկզբունքի նուիրում:

14. Յաջողութիւն կայ՝ որ ձախողութիւն է, եւ ձախողութիւն կայ՝ որ յաջողութիւն է:

15. Եթէ կ'ուզես յաջողիլ սա յատկութիւնները մշակէ — աշխատասիրութիւն, յարատեւութիւն, կենցաղավարութիւն, նախատեսութիւն եւ պարկեշտութիւն:

16. Յաջողութիւնը շատերու բարոյական անկումին պատճառ եղած է:

17. Յաջողութեան տանող ուղիդ ճամբան արժանիքն է:

18. Տաշուած քարը գետին չի մնար:

19. Այն որ ժամանակի հետ կը քալէ, անպատճառ կը յաջողի, իսկ այն որ հին գաղափարներու կը կառչի, ետ կը մնայ:

20. Խնդրեցէ՛ք՝ ու պիտի տրուի ձեզի, փնտռեցէ՛ք՝ ու պիտի գտնէք, դուռը զարկէ՛ք՝ ու պիտի բացուի ձեզի:

21. Ձուկը լիճին համեմատ կը մեծնայ:

## 71. ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆ

1. Լո՛յս, աւելի՛ լոյս:

2. Ամէն սերունդ իր նախորդէն քայլ մը յառաջացած է:

3. Վա՛յ այն մարդուն կամ ազգին՝ որ իր ոսկեդարը անցեալի մէջ կը փնտռէ:

4. Այն որ իր ծնողքովը կը պարծի, կը ցուցնէ թէ ինքը անոնցմէ ետ մնացած է:

5. Մարդկության ոսդեդարը անցեալի մէջ չէ, ապագայի մէջ է:
6. Յառաջդիմութեան պայմանն է ճշմարտութեան առջեւ միշտ բաց պահել միտքը:
7. Գիտական միտքը ամեն թելադրութիւն կ'ընդունի, եւ ի հարկին կը փոխէ ո'չէւ գաղափար, որքան ալ հին եւ նուիրական ըլլայ այն:
8. Մտքի յառաջդիմութեան հետ բարոյականն ալ կը յառաջդիմէ ընդհանրապէս:
9. Այն որ անցեալին կը նայի չի կրնար յառաջդիմել:
10. Մի' գոհանար ուրիշին ըրածովը. ջանա' գերազանցել գայն:
11. Կեանքի նշանը շարժում է. ուր որ շարժում չկայ, հոն կեանք չկայ:
12. Աճումը կեանք է, եւ կեանքը՝ աճում. ով որ չ'աճիր մեռնելու դատապարտուած է:
13. Յառաջդիմութեան մայրը դժգոհութիւնն է. այն որ գոհ է իր վիճակէն, արժանի չէ լաւագոյն վիճակի:
14. Դժգոհութիւնը առաքինութիւն է, երբոր բարձրանալու փափաքէն ծնի:
15. Չարգացումը շարժում չէ, այլ յառաջդիմութիւն: Խնդիրը այն չէ՝ թէ որքան ճամբորդած ես, հապա՛ այն է, թէ ի՞նչ շահած ես ճամբորդութենէդ:
16. Մարդկային ոյժը չէ սպառած. ոչի՛նչ կատարուած է, որմէ լաւը չկարենայ կատարուիլ:
17. Քաղաքակրթութիւնը արուեստի միջոցաւ բնութեան նուաճումն է, մարդկութեան օգտին համար:
18. Չարգացումը երբեմն կը քշէ մարդիկը, երբեմն ալ կը քաշէ գանոնք:
19. Երէկուան ազատականը այսօրուան պահպանողականն է. այսօրուան ազատականն ալ վաղուան պահպանողականը պիտի ըլլայ:
20. Սխալ է այն գաղափարը թէ անցեալը միշտ լաւ է ներկայէն: «Երջանի՛կ հին օրեր» ասացուածը զգացական բացազանչութիւն մըն է լոկ:
21. Յառաջդիմականը ծանր սխալ կը գործէ եթէ անցեալը արհամարհէ:
22. Յառաջդիմութիւնը ցած ու ստորին չափանիշները թողուլ եւ բարձր ու վսեմ չափանիշները որդեգրել է:

23. Մարդ սխալ գործելով կը յառաջդիմէ. գիտութեան պատմութիւնը կը ցուցնէ թէ գիտութեան ճամբան սխալ վարկածներու աներակներու մէջէն կ'անցնի:

24. Այն որ ձեռքը մաճիկ վրայ կը դնէ ու ետելը կը նայի, արժանի չէ Աստուծոյ թագաւորութեան:

## 72. ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ

1. Յարատեւութեան բառարանին մէջ «նահանջ» բառը չկայ:

2. Յարատեւութիւնը կանգ կ'առնէ, միայն շունչ առնելու համար:

3. Յարատեւութիւնը կ'ընկրկի անելի լաւ ցատկելու համար:

4. Առաջին օրերը միայն յոգնութիւն եւ ցաւ կը պատճառեն. յաղթ՝ անոնց, ու մնացածը դիւրին է:

5. Յարատեւող մարդիկ իրենց յաջողութիւնը կը սկսին ուրիշներու թողուցած տեղէն:

6. Յարատեւութիւնը իր արդիւնքներով հանճարի կը հաւասարի երբեմն:

7. Առանց յարատեւութեան յաջողութիւն չկայ: Մի քանի թեթեւ ջանքեր, քանի մը օրուան յոգնութիւն, մէկ-երկու շաբթուան աշխատանք բաւական չեն յաջողութեան ճամբան հարթելու:

8. Գուլճի վկայականն ու բարձր նիշերը չեն կրնար յարատեւութեան տեղը բռնել:

9. Յարատեւող մարդը ետելը չի նայիր տեսնելու համար թէ կը յաջողի՞ թէ ոչ: Ան կը խորհի թէ ի՞նչ կրնայ ընել քայլ մը անելի մօտենալու իր նպատակին:

10. Արուեստի բոլոր արտադրութիւնները՝ որոնց մարդիկ կը հիանան, յարատեւութեան եւ տքնաջան աշխատութեան պտուղներն են:

11. Գիտակից յարատեւութիւնը չի վրիպիր բնաւ:

12. Նշանաւոր հնարիչներու կեանքը յարատեւութեան օրինակներ են:

13. Յարատեւութիւնը անելի զօրաւոր է քան ոյժը:

14. Հաստատակամ մարդուն ձեռնարկը կ'ես յաջողած է:

15. Գլորուող քարը հիմ չի բռնէր:

16. Յարատևող մարդը կրնայ եօթն անգամ իյնալ, եօթն անգամին ալ ոտքի կ'ելլէ եւ կը շարունակէ իր ճամբան:

### 73. ՅԵՏԱԶԳՈՒՄ

1. Անորոշութիւնը հիւանդութիւն մըն է, եւ ձգձգումը անոր առաջին քայլը:

2. Այսօրուան գործը վաղուան մի' թողուր:

3. Այսօրուան ոսկի առիթը մի' փախցնէր. վաղը այնպէս առիթ կրնայ չգալ:

4. Առտուն ժամավաճառ մի' ըլլար, ըսելով թէ իրիկունը կրնաս կորսուած ժամանակին տեղը լեցնել:

5. Յետաձգումը ամէն գործը վաղուան կը թողու:

6. Կորսուած ժամանակը անդարմանելի կորուստ է:

7. Եթէ մանուկներու թոյլ տրուի յետաձգել իրենց պարտականութիւնները, յետաձգումը ունակութիւն կը դառնայ:

8. Ընդհանրապէս ծոյլերն են՝ որ կը գանգատին թէ ժամանակ չեն կրնար գտնել իրենց գործերը կատարելու:

9. Եթէ տակաւին ձախորդութեան դպրոցին մէջն ես, պատճառը այն է որ աւաղելով ժամանակ կը վատնես, փոխանակ դասերդ սորվելու:

10. Կանուխէն պէտք է սորվիս թէ կեանքի պայքարին մէջ տնտնացողները կորսուած են:

11. Թոյլ եւ դանդաղ գործին պատճառներէն մէկն է՝ եականը մոռնալ եւ մանրամասնութիւններով զբաղիլ:

12. Մինչ կը խորհիս թէ ուսկի'ց պիտի սկսիս, յաճախ կը կորսնցնես գործելու ժամանակը:

13. Ժամանակը է՛ն թանկագին բանն է. հետեւաբար ժամավաճառութիւնը է՛ն մեծ շռայլութիւնն է:

14. Գործելու ժամանակը այսօր է. վաղը կրնայ շատ ուշ ըլլալ:

### 74. ՅՈՅՍ

1. Յոյսը մեծ գործերու ներշնչարանն է:

2. Յոյսը իմաստութենէ կը բխի. այն որ հաստատ յոյս ունի, հրաշքի ձիրք ունի:



3. Ո՛չ մէկ բան կրնայ յոյսի տեղը բռնել. յուսահատը կենդանի մեռեալ է:
4. Աշխարհը շարժող ոյժը երիտասարդութեան յոյսն է:
5. Յոյսը ճշմարիտ բարեկամ է. ան մինչեւ մահ հաւատարիմ կը մնայ:
6. Առանց յոյսի միսիթարութեան՝ աղքատութիւնն ու թշուառութիւնը անտանելի պիտի ըլլային:
7. Յոյսը որքան ալ խաբեբայ ըլլայ, գոնէ հաճելի ճամբաներէ կը տանի քեզ մինչեւ գերեզման:
8. Ճշմարիտ յոյսը նկարագրի ոյժին վրայ հաստատուած է:
9. Այն որ առողջութիւն ունի, յոյս ունի. այն որ յոյս ունի, ամէն բան ունի:
10. Յոյսը մարդկային գործունեութեան աղբիւրն է. առանց յաջողութեան յոյսին ո՛չ ոք կը գործէ:
11. Յոյսը հաճելի կ'ընծայէ աշխատանքը, եւ կը զօրացնէ յոգնած ջիղերը:
12. Ստքին թռիչքը վայելքէ վայելք չէ, հապա՝ յոյսէ յոյս:
13. Յոյսը կ'արթնցնէ մարդուն քնացած ոյժերը, արթուն կը պահէ միտքը, եռանդ կու տայ սրտին, եւ գործի կը մղէ կամքը:
14. Յուսացող մարդը մելամաղձոտ չ'ըլլար. ընդհակառակը՝ զուարթ ու լաւատես կ'ըլլայ միշտ:
15. Յուսահատ մարդը միշտ կը տրտնջայ եւ կ'ողբայ իր ճակատագիրը. ասանկով սակայն ան չի կրնար փոխել իր վիճակը:
16. Չօրաւոր միտքը միշտ կը յուսայ, զի գիտէ թէ կեանքը փոփոխական է, եւ թէ չնչին դէպք մը կրնայ փոխել գործերու ընթացքը:
17. Յոյսը ճառագայթի կը փոխէ ստուերը եւ լոյսի կը փոխէ խաւարը:
18. Յոյսը այն անտեսանելի մեքենան է, որ աշխարհը կը շարժէ, եւ գայն շարժումի մէջ կը պահէ:
19. Յոյսը հարուստին եւ աղքատին բարեկամն է. անիկա թէ՛ պալատը կը յաճախէ եւ թէ՛ խրճիթը. ամէն մարդու կը ժպտի, եւ ամէն տառապողի ձեռք կը կարկառէ:
20. Լաւին յուսա՛, գէշին պատրաստուէ, եւ արդիւնքին յոյսով սպասէ՛:
21. Այն որ միայն յոյսով կը սնանի, անօթի կը մեռնի:

## 75. ՆԱԽԱՆՁ

1. Նախանձոտ մարդը ապերջանիկ է միշտ:
2. Նախանձոտը չի կրնար բարեկամ ունենալ, զի բարեկամությունը փոխադարձ զոհողության վրայ հիմնուած է, եւ զոհողությունը նախանձոտին անծանօթ բան է:
3. Հարցուփորձ ընող մարդիկ ընդհանրապէս նախանձոտ կ'ըլլան:
4. Անարժէք մարդն է որ ուրիշին արժանիքին կը նախանձի:
5. Մեռնելէ առաջ առանց նախանձի գովեստ մի' ակնկալեր:
6. Աւելի լաւ է որ քու դիրքիդ տեր ըլլաս, քան թէ ուրիշին դիրքին ցանկաս:
7. Աւելի լաւ է որ քու մէկ սխալդ գտնես, քան թէ ուրիշին տասը սխալը:
8. Գործունեայ մարդը ուրիշին նախանձը կը գրգռէ միշտ:
9. Այն որ չափահաս եղած է եւ թշնամի չունի, որոշ արժանիքի տեր մէկը չէ:
10. Է՛ն վտանգաւոր թշնամիները շողոքորթներն են:
11. Մէկը՝ որուն դէմ ոչինչ ըսուած է, նկատի առնուելիք մէկը չէ:
12. Այն որ ուրիշներուն թերութիւններով կը զբաղի միշտ, իր թերութիւնները կը մոռնայ:
13. Կասկածը առաքինութեան բարեկամ չէ, եւ երջանկութեան ալ թշնամի է:
14. Չրպարտութիւնը չի կրնար տեսական վնաս հասցնել լաւ մարդու մը անունին:
15. Չրպարտիչը հայելի մըն է որ կը ցոլացնէ այն սխալները, որոնց դէմ կը գանգատի:
16. Ուրիշին կասկածողը ավելի կասկածելի մէկն է:

## 76. ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆ

1. Կառավարելը նախատեսել է:
2. Նախատեսությունը յաջողութեան բանալին է:
3. Այն որ կրնայ նախատեսել կեանքի ընթացքը եւ կը պատրաստուի անոր, անպատճառ կը յաջողի:

4. Յաջող մարդիկը անոնք են՝ որ կանուխեն տեսած են իրենց յարմար ասպարեզը եւ պատրաստուած են անոր:
5. Առիթներու մի՛ սպասեր, անոնք ամեն տեղ են. այն որ տեսնելու աչք ունի, կը տեսնէ զանոնք:
6. Կեանքի ծրագիրը շիտակ պատրաստելը շատ փափուկ եւ դժուար գործ է:
7. Շատեր նախատեսութիւնը չափազանցութեան կը տանին եւ կը հաշուեն թէ ի՞նչ կրնայ պատահիլ, բայց չեն տեսներ իրենց աչքերուն առջեւ պատահող բաները:
8. Եթէ ընելիքիդ վրայ յստակ գաղափար ունենաս, շատ դիւրութեամբ կրնաս կատարել զայն:
9. Ապագան կրնաս դիմագրաւել առաջ նայելով, ո՛չ թէ ետ նայելով:
10. Նախատեսուած փոթորիկները կէս մը յաղթուած են:
11. Ծրագրելու ատեն լաւ է վտանգները տեսնել, իսկ գործադրելու ատեն լաւ է զանոնք անտեսել՝ եթէ շատ մեծ չեն:
12. Նախատեսելը նախագիտուիլ է:
13. Ա՛յն մարդը կը յաջողի՝ որ կը նախատեսէ ժամանակի փոփոխութիւնները, եւ ըստ այնմ կը կարգադրէ իր գործերը:
14. Այն որ կը տեսնէ իր թերութիւնները, մեծ յոյս կայ որ յաղթէ անոնց:
15. Կանխատեսութիւնն ու կանխամտածումը անհրաժեշտ են յաջող ծրագիր մը կազմելու եւ զայն իրագործելու համար:
16. Փոխանակ երեւակայելու՝ իրերը զննել սորվէ:
17. Դաստիարակութիւնը մարդուն աչքերը կը բանայ, եւ սրատեսութիւն ու իրատեսութիւն կը սորվեցնէ անոր:
18. Ուսեալ մարդը այն է՝ որ ուրիշներու չտեսածը կը տեսնէ:
19. Զանճարեղ մարդը կը զննէ, միջակ մարդը՝ կը ճառէ:
20. Խելացի մարդը անխելքներէն ալ բան կը սորվի:
21. Ամեն մարդ կը նայի, բայց քիչերը կը տեսնեն:

## 77. Ն Ե Ր Ո Ւ Մ

1. Ներումը վրեժէ հրաժարիլ է:
2. Բաջե՛րը միայն ներել գիտեն:

3. Այն որ ուրիշին չի ներեր, պետք չէ որ ուրիշէն ներում ակնկալէ:
4. Ներումը առաքինութեանց վստմագոյնն է:
5. Պետք է որ ներես քու մտքիդ հանդարտութեան համար, եթէ ոչ ուրիշ պատճառի համար:
6. Անարգ ու անազնիւ մարդիկ ո՛չ կը ներեն, ո՛չ ալ կը մոռնան:
7. Կամքով եւ ուզելով սխալ ճամբան ընտրողին համար ներումի դուռը գոց է:
8. Ներողամիտ ըլլալու ես ուրիշին, զի դուն ալ սխալելու ենթակայ ես միշտ:
9. Ներելով միայն կրնաս ցուցնել թէ քաղցր բնաւորութեան տէր ես:
10. Ընտանեկան շրջանակի մէջ փոխադարձ ներողամտութեան ոգին կը քաղցրացնէ ընտանեկան մթնոլորտը:
11. Չղջացողը պետք է վերահաստատուի իր նախկին վիճակին մէջ:
12. Կինը կրնայ ներել մարդուն ամէն բանին, բացի տկարութենէ եւ երկչոտութենէ:
13. Ուրիշին ներելու ես, դուն քեզի՝ երբե՛ք:
14. Մոռնալու արուեստը օրհնեալ արուեստ մըն է, ինչպէս նաեւ անտես ընելու արուեստը:
15. Լաւ մարդիկ կրնան գէշ կողմեր ունենալ, եւ գէշ մարդիկ՝ լաւ կողմեր:
16. Ուրիշին յանցանքներուն հեռադիտակով նայէ, բայց քու յանցանքներուդ՝ խոշորացոյցով:
17. Մենք սիրելով կը շահինք, ներելով կը յաղթենք:
18. Մեզի ներէ մեր պարտքերը, ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտականներուն:

## 78. ՆԿԱՐԱԳԻՐ

1. Ստեղծագործութեան պսակը մարդն է. մարդուն պսակը՝ նկարագի՛րը:
2. Ո՛չ ոք կրնայ իր յուսացած դիրքին հասնիլ, եթէ անբիծ նկարագիր մը չունենայ:
3. Լաւագոյն նկարագիրը այն է՝ որ ո՛չ մէկ յատկութիւն ստուեր կը ձգէ միւսին վրայ, այլ մէկը միւսին լրացուցիչն է:

4. Նկարագիրը ստացուածք է, եւ լաւագոյն ստացուածքը՝ որ մարդ կրնայ ունենալ:

5. Նկարագիրը դրամագլուխ է, թէեւ այդ դրամագլուխը կրնայ քեզ հարուստ չընել, բայց հարստութենէ աւելի թանկագին բաներ կը պարգեւէ քեզի — յարգ, պատիւ, համբաւ, վստահութիւն, եւ ասոնց նմանը, որ դրամով չեն գնուիր:

6. Նկարագիրը ոյժ է. ան բարեկամներ կը շինէ, դրամագլուխ կը ստեղծէ եւ ճամբայ կը բանայ յաջողութեան, հարստութեան եւ երջանկութեան:

7. Զո՛ւ գործերդ միայն կրնան վնասել քու նկարագրիդ, ո՛չ թէ ուրիշինը:

8. Նկարագիրը՝ մարդուն մարմինին պէս՝ աննշմարելի կերպով կ'աճի:

9. Անկործանելի մէկ բան կայ. մէկ բան՝ որուն ձախորդութիւնն ու վիատութիւնը չեն կրնար յաղթել — նկարագի՛րն է այն:

10. Իրաւ է թէ միջավայրն է՝ որ կը կազմէ նկարագիրդ, սակայն դուն կրնաս մեծապէս ազդել միջավայրիդ:

11. Չես կրնար երազելով նկարագիր կազմել. պետք է կռես ու դարբնես զայն:

12. Միտքդ կրնաս ժառանգել, բայց նկարագիրդ դո՛ւն պետք է կազմես:

13. Նկարագիրը առաքինութեան պահապան հրեշտակն է:

14. Ամէն մտածում, ամէն խօսք եւ ամէն գործ, որքան ալ աննշան ըլլան, իրենց տպաւորութիւնը կը թողուն վրայ. նկարագիրը այդ տպաւորութեանց ընդհանուր գումարն է:

15. Մարդ ինչպէս որ կը գնահատէ իր նկարագիրը, այնպէս է ինքը:

16. Կեանքի է՛ն կարելոր գործը նկարագիր կազմել է:

17. Գործ մը ցանէ, ունակութիւն մը պիտի հնձես. ունակութիւն մը ցանէ, նկարագիր մը պիտի հնձես. նկարագիր մը ցանէ, ճակատագիր մը պիտի հնձես:

## 79. ՆՊԱՏԱԿ

1. Նպատակը կեանքի դէկն է. աննպատակ մարդը անդէկ նաւու կը նմանի:

2. Մեկ նպատակ ընտրե, եւ բոլոր ոյժերդ անոր վրայ կեդրոնացուր:
3. Այն որ յաջողիլ կ'ուզէ պետք է որ մեկ նպատակի ծառայէ, եւ բարձր նպատակի ծառայէ:
4. Երկու նպատակի ետեւէն վազողը ո՛չ մեկը կրնայ բռնել:
5. Նպատակը մեծապէս կ'ազդէ նկարագրի վրայ. ստորին նպատակներու ծառայողը չի կրնար ազնիւ նկարագիր ունենալ:
6. Մեծ բաներ յուսա՛ Աստուծմէ, եւ մեծ բաներու ձեռնարկէ Աստուծմով:
7. Չես կրնար իտեալէդ անելի վերը բարձրանալ:
8. Ձեռքերը չեն կրնար գործ տեսնել, եթէ սիրտը չներշնչէ զանոնք:
9. Վսեմ նպատակը աննպատակ կեանքի բոլոր ցաւերուն դարմանն է:
10. Աննպատակ մարդը մղեղի պէս է. է՛ն թեթեւ հովն իսկ կը քշէ կը տանի զայն, եւ մարդ չի գիտեր թէ ո՛ւր:
11. Բարձր նպատակը մարդուն դեմքին վրայ կը փայլի, եւ կը փոխէ անոր նայուածքը, ձայնը, հագուստը եւ բոլոր շարժումները:
12. Այն որ վարը կը նայի չի կրնար ներշնչուիլ. ներշնչումը վերէ՛ն կու գայ. վե՛ր նայէ միշտ:
13. Կեանքիդ կառքը աստղերուն կապէ:
14. Իտեալները կը վճռեն մարդուն ճակատագիրը:
15. Իտեալներն են որ կը փոխեն պատմութիւնը դէպի լաւ կամ դէպի գէշ:
16. Այն որ թռչելու համար ծնած է, չի կրնար սողալ, եւ փոխադարձաբար:

## 80. ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

1. Ունակութիւնը պարան մըն է. ամէն օր անոր մէկ թելը կը հիւսես, ու վերջապէս չես կրնար կտրել զայն:
2. Մարդ նախ չի զգար ունակութեան շղթան, ու երբ զգայ, ա՛լ անկարելի կ'ըլլայ կտրել զայն, ու ազատուիլ անկէ:

3. Իրարու ետեւ կրկնուած արարքները ունակութիւն կը դառնան, եւ մարդուն սկարագիրը կը կազմեն ու անոր ճակատագիրը կը վճռեն:

4. Մարդ իր ունակութեանց գերին է. հակառակ իր տկարացած կամքի բողոքներուն, շիղերը կը շարունակեն կրկնել նոյնիսկ իր չուզած արարքները:

5. Սկարագիրը ունակութեանց արդիւնք է. եթէ առօրեայ գործերը ազնիւ չըլլան, սկարագիրը չի կրնար ազնիւ ըլլալ:

6. Եթէ դուն կը կառավարես ունակութիւններդ, լաւ է. եթէ անոնք քեզ կը կառավարեն, գէշ է:

7. Մանուկին նախնական կրթութիւնը ունակութիւն կազմելէ կը բաղկանայ, ո՛չ թէ տրամաբանելէ. պէտք է օրինակով կրթել զայն, ո՛չ թէ պատուէրներով:

8. Ունակութիւնները ստացական են, եւ կրնան ուսուցուիլ ուրիշ ոեւէ նիւթի պէս:

9. Մանուկ հասակին ստացուած բնաւորութիւնը կը բնորոշէ մարդը:

10. Եթէ գէշ մտածումները անգամ մը ոտք դնեն մտքիդ մէջ, չափազանց դժուար կ'ըլլայ զանոնք դուրս ընել, չըսելու համար անկարելի:

11. Բարոյական կրթութեան գլխաւոր նպատակն է ստեղծել մտքի ոյժ մը, որ կարենայ իշխել ունակութեանց վրայ:

12. Կամքի գործածութիւնը կրնայ շատ շուտ ունակութիւն դառնալ:

13. Բնութեան շատ լաւ մէկ կարգադրութիւնը այն է՝ որ նախ իբր պարտականութիւն կատարուած գործ մը կրկնուելով ունակութիւն կը դառնայ:

## 81. ՈՒՍՈՒՄ

1. Անուս մարդը անտաշ քարի կը նմանի:

2. Ուսումի բուրգը ծանօթութեան մանր աւազներէն կազմուած է:

3. Ուսումը մնայուն արժէք ունի. անոր ստացումը շատ կենսական է:

4. Լաւ խիղճը բացառելով, ուսումի ճոխ պաշարը կեանքի է՛ն թանկագին ստացուածքն է:

5. Ուսումի բնական աղբիւրը գիրքերը չեն, հապա՝ կեանքը, բնութիւնը եւ փորձառութիւնը:
6. Ուսումի արժէքը իր քանակին մէջը չէ, այլ իր գործնական կիրառութեան մէջ:
7. Ուսումը հարստութեան կը նմանի. ո՛րքան դիզես, ա՛յնքան կ'աւելնայ դիզելու փափաքը:
8. Կեանքի առաջին տասը տարիներուն մէջ կարելոր բանը ուսումի քանակը չէ, այլ լաւ ուսանելու ունակութիւնը:
9. Գիտութեան յառաջդիմութիւնը քաղաքակրթութեան յառաջդիմութիւնն է:
10. Չանա՛ բան մը գիտնալ ամէն բանի մասին, եւ ամէն բան՝ բանի մը մասին:
11. Ստաւորական պաշարը այն նիւթն է՝ որով հանճարը կը կառուցանէ իր շէնքը:
12. Զգիտնալը ամօթ չէ, չսորվիլը ամօթ է:
13. Ուսուցանելով աւելի կը սորվիս քան թէ ուսանելով:
14. Եթէ ուսումդ քեզ օգտակար, բարի եւ երջանիկ մէկը չէ ըրած, ո՛րքէ արժէք չունի ան:
15. Ուսումը հարուստին զարդն է, եւ աղքատին՝ հարստութիւնը:
16. Կերակուրի պէս՝ ուսումն ալ պէտք է մարսուի, որպէսզի ոյժի վերածուի:
17. Շատ ապրողը չի գիտեր, շատ ճամբորդողը գիտէ:
18. Կան բաներ՝ որ ոյժով կամ դրամով կը ստացուին, բայց ուսումը սերտողութեամբ միայն կը ստացուի:
19. Ուսումը անանկ հարստութիւն մըն է՝ որ ո՛չ կը կորսուի, ո՛չ ալ կը գողցուի:
20. Գիտութիւնը հմտութիւն կու տայ, բայց փիլիսոփայութիւնն է որ իմաստութիւն կը պարգեւէ:
21. Ուսումը անկողոպտելի ոյժ եւ դրամագլուխ է:
22. Չարգացած մարդը այն է՝ որ մտքի վայելքը կը նախընտրէ մարմնի վայելքէն:
23. Ամէն գիտութիւն իբր փիլիսոփայութիւն կը սկսի, եւ իբր արուեստ կը վերջանայ: Փիլիսոփայութիւնը ճշմարտութեան պաշարման գիծն է, գիտութիւնը գրաւուած հողամասը:



**82. ՊԱՏԵՐԱԶՄ**

1. Պատերազմը մարդկության մեծագոյն յիմարութիւնն է:
2. Պատերազմը քաղաքակրթութեան մեծագոյն թշնամին է:
3. Եսամոլութիւնն ու շահամոլութիւնը պատերազմի դայեակներն են:
4. Պատերազմի պտուղներն են արիւն, արցունք, աւեր, սով, անօթութիւն, թշուառութիւն, որբեր, այրիներ, հաշմանդամներ, քանդուած տուներ, եւ ասոնց նմանը:
5. Մեծ ազգերը պատերազմելով հպատակեցուցած են պզտիկ ազգերը, եւ այնպէս պատճառ եղած՝ որ պզտիկ ազգերը իրենց անկախութեան համար կռուին: Ահա՛ թէ ինչպէս պատերազմը պատերազմ կը ծնի:
6. Մարդ միա՛կ կենդանին է՝ որ իր տեսակին դէմ կը պատերազմի. վայրի գազանները իրենց տեսակին դէմ չեն կռուիր. գայլերը գայլ չեն որսար:
7. Պատերազմը կ'ապականէ մարդկային նկարագիրը, գրգռելով անոր անասնական կիրքերը, որպիսիք են քէն, ոխ, վրեժ, ատելութիւն եւ թշնամութիւն:
8. Պատերազմը չի կրնար լուծել ո՛րէւէ հարց. եւ եթէ լուծէ իսկ, արդարութեամբ չի լուծեր գայն:
9. Պատերազմը իր լուծած հարցերէն՝ աւելի հարցեր կը ստեղծէ:
10. Սուրը սով կը տարածէ, խոփը՝ առատութիւն:
11. Սուր վերցնողը սուրով պիտի իյնայ:
12. Շիտակ է թէ պատերազմը շատ ազգերու ազատութիւն բերած է, բայց չէ՞ որ զանոնք նախապէս գերողը պատերազմը եղած է:
13. Միջազգային խաղաղութեան մեծագոյն թշնամին է պատերազմը. անիկա ժողովուրդները իրարու դէմ կը գրգռէ, սերմանելով անոնց մէջ վրեժ, քէն, ոխ, ատելութիւն, թշնամութիւն, հակառակութիւն, նախանձ, եւն.:
14. Եթէ պատերազմը շատ մը ժողովուրդներ չգերեր, անոնք անկախութեան պատերազմներու պետք պիտի չունենային:
15. Յաղթական պետութիւնները պարտեալներու հետ կը վարուին սա սկզբունքներուն համաձայն — «Իրաւունքը

գորաւորին է», «Վա՛յ յաղթուողներուն», ինչ որ շա՛տ հեռու է արդար ըլլալէ:

16. Փորձը հերքած է սա քաղաքականութիւնը — «Եթէ խաղաղութիւն կ'ուզես, պատերազմի պատրաստուէ»: Պատերազմի պատրաստուողը պատերազմի պատրուակ կը ստեղծէ, եւ կը պատերազմի:

17. Պատերազմը չ'ապրեցներ յարմարագոյնը, այլ կը մեռցնէ գայն: Ամեն պետութիւն պատերազմի դաշտը կը դրկէ իր յարմարագոյն գաւակները, իսկ տուն կը մնան անյարմարները, այսինքն՝ տկարները, հիւանդոտները, կոյրերը, կաղերը, խենդերը, ապուշները, խելագարները, գաճաճները, որոնք իրենց պէս անյարմար սերունդ կ'արտադրեն:

18. Ի՞նչ պիտի ըլլար աշխարհի վիճակը եթէ պատերազմի գոհ գացած ըլլային Սոկրատ, Պղատոն, Արիստոտել, Կոպեռնիկոս, Գալիլէոս, Լուտեր, Նեւտոն, Զանթ, Բասթօր, Տարվին, Էտիսըն, Մարգոնի, Այնշթայն, եւն.: Ո՛վ գիտէ քանի երիտասարդներ կրնային ասոնց պէս ըլլալ, եթէ «պատուոյ դաշտը» չ'իյնային:

19. Մարդ իր գոյութենէն ի վեր մէկ ձեռքով շինած է եւ միւս ձեռքով քանդած:

20. Սո՛ւրը գրած է աշխարհի պատմութիւնը, մարդկային արիւնը իբր մելան գործածելով:

21. Պատերազմը մարդոց բարոյականին աւելի կը վնասէ քան անոնց անձին կամ ինչքին:

22. Կորսուած պատերազմէ վերջ է՛ն ահաւոր բանը շահուած պատերազմն է:

23. Մարդը մարդու գայլ է:

### 83. ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

1. Ո՛եւէ ասպարեզի համար պատրաստութիւնը անհրաժեշտ է:

2. Ասպարեզիդ լաւ պատրաստուէ, եթէ ոչ չես կրնար յաջողիլ:

3. Եթէ անպատրաստ ես, չես կրնար առիթէն օգտուիլ:

4. Շէնքը որքան բարձր ըլլայ, հիմը այնքան խորունկ պէտք է ըլլայ:

5. Եթե լաւ տիրացած չես արհեստիդ, չես կրնար անով ապրուստ շահիլ:
6. Դժուարութեան մը յաղթելը, ուրիշ յաղթութիւններու կ'օգնէ:
7. Ամէն յաջող մարդ պատրաստ գտնուած է երբոր բախտը իր դուռը զարկած է:
8. Երբոր բախտը դուռդ զարնէ, չես կրնար ըսել. «Սպասէ՛, կը պատրաստուիմ»: Եթէ պատրաստ չգտնէ քեզ, ան կ'անցնի կ'երթայ, զի սպասել չի գիտեր:
9. Մեծ գործերը լայն պատրաստութեան պտուղ են:
10. Գործի մը պատրաստուիլ զայն կատարելու սկսիլ է:
11. Մեծ առիթէ այնքան միայն կրնաս օգտուիլ, որքան որ պատրաստուած ես անոր:
12. Այն որ գործ մը նախ իր մտքին մէջ կը կատարէ ու յետոյ կը սկսի անոր, անպատճառ կը յաջողի:
13. Այն որ պահեստի մեծ ոյժ ունի, մեծ գործեր կը կատարէ: Պահեստի բանակն է որ պատերազմը կը շահի:
14. Երկար պատրաստութիւնը յաջողութեան ճամբան կը կարճեցնէ:
15. Շատեր ձախողած են, որովհետեւ չեն պատրաստուած յաջողութեան:
16. Պատրաստուիլը նախատեսել է եւ միանգամայն նախագիտուիլ՝ ամէն տեսակ պատահականութեանց դէմ:

#### 84. ՊԱՐԶՈՒԹԻՒՆ

1. Պարզութիւնն եւ վսեմութիւնը շատ մօտ ազգականներ են:
2. Բնութիւնը պարզ է. իր վսեմութիւնը իր պարզութեան մէջն է:
3. Պարզութիւնը պերճանքի հականիշն է:
4. Բոլոր մեծ ճշմարտութիւնները պարզ են:
5. Պարզութիւնը կեանքի կանոն ըրէ քեզի՝ ու մեծ պիտի ըլլաս, հոգ չէ թէ հարուստ կամ համբաւաւոր չըլլաս:
6. Պարզութիւնը լաւագոյնին վերապրումն է. ան արմատախիլ կ'ընէ մոլութեանց անպէտ խոտերը, որպէսզի առաքիւնութեան ծաղիկները աճին:
7. Պարզութիւնը կեղծել դժուար է. անիկա ինքնաբոլիս ըլլալու է:

8. Պարզութիւնը տկարութիւն կամ տգիտութիւն ըսել է:
9. Նկարագրի պարզութիւնը խոր մտածողութեան արդիւնք է:
10. Պարզութիւնն ու խոնարհութիւնը մեծութեան գրքին առաջին էջին վրայ գրուած են:
11. Կեանքի ամեն մարգերուն մէջ՝ պարզ մեթոտները լաւագոյն մեթոտներն են:
12. Պարզութիւնը ներքին մաքուր կեանքի արտափայլող լոյսն է. հանրային կարծիքին հետեւելու ամեն փորձ կը մարտ գայն:
13. Մի՛ գրկեր անձո՛ղ ունէ անհրաժեշտ պէտքէ, բայց պարզ եւ ժուժկալ ապրէ:
14. Նկարագրի պարզութիւնը՝ կողմացոյցի պէս՝ միայն մէկ ուղղութիւն գիտէ, որ է իր իտեալը:
15. Ճշմարիտ պարզութեան համար՝ ճշմարտութիւն մը տեսնել՝ գայն ապրիլ է. պարտականութիւն մը տեսնել՝ գայն կատարել է:
16. Պարզ մարդու մտքին մէջ ո՛չ մէկ գաղափար կրնայ լոկ իբր տեսութիւն մնալ. անիկա անպատճառ կը յայտնուի գործնական կեանքի մէջ:
17. Խօսքի եւ գրչի մէջ պարզութիւնը կանոն ըրէ քեզի:
18. Նկարագրի գրաւիչ մէկ յատկութիւնն է բնական պարզութիւնն ու համարձակութիւնը, զերծ ամեն կեղծիքէ:
19. Չարդ վարդին է պարզ տերեւ.  
Սիրէ դու գպարզութիւն,  
Եթէ վարդ ես արդարեւ:

## 85. ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ

1. Պարկեշտ մարդը Աստուծոյ Է՛ն վստմ գործն է:
2. Պարկեշտութիւնը բացակայութիւնն է կեղծիքի եւ յաւակնոտութեան, որ աւելի երեւնալ կ'ուզեն քան ինչ որ են:
3. Թող պարկեշտութիւնը կեանքիդ օրէնքն ըլլայ. յարգէ՛ գայն իր սիրոյն համար, ո՛չ թէ ստիպողութեան տակ:
4. Մտածումի, խօսքի եւ գործի մէջ պարկեշտութիւնը անհրաժեշտ է կեանքի յաջողութեան համար:

5. Ամեն մարդ չի կրնար հարուստ, մեծ կամ իմաստուն ըլլալ, բայց ամեն մարդ կրնայ պարկեշտ ըլլալ, եւ պետք է ըլլայ:

6. Ամեն ասպարեզի մէջ պարկեշտութիւնը կը վարձատրուի:

7. Քաջ մարդու գործ է պարկեշտ ըլլալ, համբերելով ուրիշներու արհամարհանքին ու ատելութեան:

8. Քու անձիդ հետ բացարձակ պարկեշտութեամբ վարուէ:

9. Պարկեշտ մարդու խօսքը մուրհակի ոյժ ունի:

10. Ամեն գէշ ու հարեւանցի գործ անպարկեշտութիւն է. քանի որ գործիդ համար վարձք կը ստանաս, պետք է որ լաւ գործ կատարես:

11. Շատեր տնտեսապէս կործանած են՝ պզտիկ կարծուած բաներու մէջ անպարկեշտ ըլլալուն համար:

12. Գործ մը կա՛մ պարկեշտ է կամ ալ անպարկեշտ. միջին ճամբայ չկայ:

13. Անպարկեշտ գործի մի՛ ձեռնարկեր, ո՛չ ալ ձեռնարկողներու ընկեր եղիր:

14. Պարկեշտ մարդը անպարկեշտներու մէջ ալ կը պահէ իր պարկեշտութիւնը:

## 86. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. Պարտաճանաչութիւնը նկարագրի պսակն է:

2. Դոյզն արժէք ունի այն կեանքը՝ որ պարտականութեան չէ նուիրուած:

3. Պարտականութիւնը ամբողջ կեանքը կը պարփակէ. կեանքի ոեւէ շրջան զերծ չէ անկէ:

4. Կեանքի մեծագոյն հաճոյքը պարտականութիւնը լաւ կատարած ըլլալու գիտակցութիւնն է:

5. Պարտականութեան ճամբուն վրայ ամեն տեսակ նկատում պետք է որ մէկ կողմ նետուի:

6. Կարելոր եւ հրամայական պարտականութեան առջեւ պետք չէ վարանիլ:

7. Ամեն մարդ իր շուրջիներուն հանդէպ պարտականութիւններ ունի, մեծերու հանդէպ ու պզտիկներու հանդէպ, ազգակիցներու հանդէպ ու օտարազգիներու հանդէպ:

8. Պարտականության զգացումը կեանքի ճամբան կը հարթե եւ կ'օգնէ դժուարությանց յաղթելու եւ փորձությանց դիմադրելու:

9. Մինչեւ որ հաճելի ըլլալու պարտականութիւնդ չկատարես, բոլոր պարտականութիւններդ կատարած չես ըլլար:

10. Պարտականութիւնը զգացում չէ, այլ կեանքի սկզբունք:

11. Երկու բան կայ որ մարդուն պատկառանք կ'ազդեն. դուրսը՝ աստեղազարդ երկինքը, ներսը՝ պարտականության ձայնը:

12. Պարտականության ճամբուն վրայ հաստատ քալէ առանց ականջ դնելու չար ու բամբասող լեզուներու խօթանքներուն:

## 87. ՊԱՐՏՔ

1. Պարտք մի՛ ըներ մինչեւ որ զայն վճարելու միջոցը չապահովես:

2. Պարտքը անպարկեշտութեան անսպառ աղբիւր մըն է:

3. Աւելի լաւ է առանց պարտքի չոր հաց ուտել, քան թէ պարտքով՝ հաց ու կարագ:

4. Կարելի եղածին չափ զգուշացիր փոխ առնելէ եւ փոխ տալէ:

5. Փոխ առնողը փոխ տուողին գերին է, եւ հարուստը աղքատին կը տիրէ:

6. Պարտականը իր անձին տերը չէ. իր անձը պարտատէրին կը պատկանի:

7. Մեղքէն վերջ պա՛րտքն է որ ամենէն աւելի կ'ապականէ նկարագիրը:

8. Պարտականը՝ երբ նեղը մնայ՝ ամէն տեսակ անպարկեշտութեան կը դիմէ:

9. Չափդ գիտցիր, եւ մի՛ փորձուիր քեզմէ աւելի հարուստին հետ չափուելու:

10. Պարտքը կը կորսնցնէ մարդուն ինքնասիրութիւնը, ինչ որ շատ նուաստացուցիչ է:

11. Պարտքը փորձութիւն մըն է. պարտականին համար դժուար է ճշմարտութեան հաւատարիմ մնալ:

12. Պարտքը կը վնասէ համբաւին եւ կը կորսնցնէ վստահութիւնը:
13. Շատեր չնչին հաճոյքներու համար պարտք ըրած են, եւ ի վերջոյ փճացած տնտեսապէս:
14. Ախորժակներդ կառավարել գիտցիր, եթէ ոչ անոնք քեզ կը կառավարեն:
15. Ինքնագսպումը պարտքէ գերծ կը պահէ մարդը:
16. Եթէ ստիպուած ես պարտք ընելու՝ կարելի եղածին չափ շուտ վճարէ զայն:
17. Աւելի լաւ է որ քու դրամովդ պզտիկ խանութ մը բանաս, քան թէ ուրիշին դրամովը՝ մեծ վաճառատուն մը:
18. Էն ատելի եւ անախորժ դէմքը պարտատէրին դէմքն է:
19. Աւելի լաւ է ամուրի մնալ քան թէ պարտքով ամուսնանալ: Պարտքով ամուսնացողներուն անկողինը փշոտ կ'ըլլայ, եւ անոնց մեղրամիսը՝ քացախամիս:
20. Ոտքերդ վերմակիդ համեմատ երկնցուր:

### 88. ՊՁՏԻԿ ԲԱՆԵՐ

1. Նկարագիրը կը կազմուի պզտիկ պարտականութիւնները հաւատարմօրէն կատարելով:
2. Յարդէ ատելի թեթեւ նկատուած բաները նկարագրի կազմութեան ազդակներ են:
3. Կեանքի մէջ ո'չ մէկ գործ կամ դէպք աննշան է. Էն աննշանը կրնայ քու ճակատագիրդ վճռել:
4. Պզտիկ ծառայութիւնները հաւատարմօրէն կատարէ. կրնայ ըլլալ որ մեծ ծառայութիւններ բնա՛ւ չպահանջուին քեզմէ:
5. Պզտիկ բաները լաւ կատարէ, ու հետզհետէ մեծ բաներ պիտի ներկայանան քեզի:
6. Մեծ բաները բնականաբար կու գան անոր՝ որ պզտիկ բաները լաւ կատարած է:
7. Մեծ գործերու մի՛ սպասեր. մինչ կը սպասես, պզտիկ գործերու առիթը կրնայ փախչիլ:
8. Պզտիկ բաներու կուտակումովն է որ մեծ բաները կը կազմուին:
9. Պզտիկ մեղքին գէշ կողմը այն է որ պզտիկ չի մնար, ու շատ շուտ կը մեծնայ:

10. Պզտիկ վեճեր, պզտիկ խժբժանքներ, պզտիկ ակնարկություններ, պզտիկ մեղադրանքներ, պզտիկ կոշտություններ, դեգ բնաւորություն, գեշ տրամադրություն, եսասիրություն, անհամբերություն, աններողություն, պզտիկ բաներ են, պիտի ըսէք. բայց այս պզտիկ բաները շատ ընտանիքներու ապերջանկութեան եւ թշուառութեան պատճառ դարձած են:

11. Պզտիկ կարծուած բաներու մէջ եթէ թոյլատրես մեղքը, շատ չանցած նոյնը պիտի ընես մեծ բաներու մէջ ալ:

12. Մեծ կարողութեանց քով պզտիկ տկարություն մը, քիչ մը բարկացոտություն, քիչ մը թուլակամություն, քիչ մը անվճռականություն, պզտիկ բաներ են, պիտի ըսէք. բայց անոնք շատ ասպարեզներ կործանած են:

13. Օդի չափ թեթեւ բաները խորհող մտքերու երբեմն անանկ գաղափարներ թելադրած են՝ որ աշխարհը յեղաշրջած են, ու կը յեղաշրջեն տակաւին:

14. Աննշան դէպքեր յաճախ մեծ գիւտերու պատճառ եղած են:

15. Մարդուն պզտիկությունն է որ պզտիկ բաներու մէջ մեծություն չի տեսներ:

16. Չախողութեան մեծ պատճառներէն մէկն է պզտիկ մանրամասնութեանց անտեսումը:

17. Շատ մեծ մարդիկ վկայած են թէ իրենց ամբողջ կեանքը ազդուած է իրենց մանկութեան ատենը եղած միակ թելադրութենէ մը:

18. Կարելի եղածին չափ մաքուր պահէ անձը, սենեակը, խանութը, եւ ամէն ինչ՝ որուն հետ գործ ունիս:

19. Կոկիկությունը կեանքի է՛ն մեծ պզտիկ բանն է յաշտողութեան համար:

20. Ճշմարտապէս մեծ մտքերու համար պզտիկ բան չկայ:

## 89. ՊԵՏՔԸ

1. Պետքը գիտութեան եւ քաղաքակրթութեան մայրն է:

2. Որոշ է թէ նշանաւոր մարդոցմէ շատերը ոչինչ պիտի ընէին իրենց անունը անմահացնելու համար, եթէ հարկը չստիպէր գիրենք գործելու:



3. Պատասխանատուությունը միայն կը մղէ մարդը տքնելու եւ ի յայտ բերելու իր լաւագոյն ձիրքերը:
4. Բնութիւնը մարդը կատարելագործելու համար յաճախ կը զոհէ անոր հանգիստն ու հաճոյքը, զի անիկա մա՛րդը նկատի կ'առնէ, ո՛չ թէ անոր հանգիստը:
5. Առանց նպատակի չէ որ Արարիչը դժուարութիւններու տակ ծածկած է մարդուն գերագոյն բարիքն ու բարձրագոյն երջանկութիւնը, ու գոյութեան պայքարը պայման դրած՝ զանոնք ձեռք անցընելու համար:
6. Պէտքը կրնայ կասկածելի գործ մը անմեղ նկատել, բայց չի կրնար գովելի ընծայել գայն:
7. Պէտքը կը սրէ խելքը եւ կը ստեղծէ միջոցը:
8. Գործելու պէտքը մարդկային յառաջդիմութեան աղբիւրն է:
9. Պէտքը խիստ ուսուցիչ մըն է, բայց լաւագոյն ուսուցիչը:
10. Ո՛չ ոք գիտէ թէ ի՞նչ կրնայ ընել ինքը՝ մինչեւ որ չփորձէ, եւ քիչեր կը փորձեն, մինչեւ որ չստիպուին:
11. Աշխարհի պատմութեան մէջ պէ՛տքն է որ մարդիկը մղած է մեծագործութեանց:
12. Մարդու համար յաճախ շահաւոր է աղքատութեան դեմ պայքարիլը եւ անոր յաղթելը:
13. Շատեր աշխատելու համար խթանի պէտք ունին, ու պէտքը լաւագոյն խթանն է:
14. Մարդոց մեծամասնութիւնը ապրելու համար ստիպուած է ձեռքով գործելու, բայց բոլորն ալ կերպով մը պէտք է աշխատին՝ կեանքը վայելել կարենալու համար:
15. Աղքատութիւնն ու զրկանքը ցեղին մեծ ուսուցիչները եղած են եւ նշանաւոր ըրած շատերը, որոնք աննշան պիտի մնային առանց այդ մեծ ուսուցիչներուն:
16. Հարկը օրէնք չի ճանչնար:

## 90. ՍԷՐ

1. Աստուած սեր է. այն որ շատ կը սիրէ, շատ կը նմանի Աստուծոյ:
2. Սերը տիեզերքի մեծագոյն բանն է:
3. Սիրել ու սիրուիլ կեանքի մեծագոյն երջանկութիւնն է:

4. Աշխարհի բոլոր մեծ բաներուն մէջ սերէն աւելի մեծ բան չկայ:

5. Աշխարհի մէջ ոչինչ կրնայ սիրոյ հետ բաղդատուիլ. ուրիշ ո՛չ մէկ բան կրնայ ինքնին այնքան անխառն երջանկութիւն պարգեւել, որքան սերը:

6. Սերը այն միա՛կ բառն է, որ իր մէջ կ'ամփոփէ քու բոլոր պարտականութիւններդ, ամէն տեսակ ապրող արարածներու հանդէպ:

7. Սերը բարիին տիեզերական սկզբունքն է, եւ գերագոյն բարիքը:

8. Սերը մարդկային բոլոր տառապանքներուն միա՛կ դարմանն է:

9. Սերը պատուիրանք չունի. ան արտաքին մղումի պէտք չունի, զի ան ինքնաբերաբար կ'ընէ ամէն բան:

10. Սերը մեծ լուծիչն է բարկութեան, նախանձի, ատելութեան, եւ ամէն տեսակ դառնութիւններու:

11. Սիրոյ առջեւ քէնն ու ատելութիւնը ձիւնի պէս կը հալին:

12. Սերը հաճոյքի կը վերածէ պարտականութիւնը:

13. Սերը իր մէջ կը պարունակէ մեծ ոյժ՝ ինչպէս հովը, մակընթացութիւնը, ալիքը, արեւն ու ճառագայթը: Ան կը տաքցնէ առանց ջերմութեան, կը կերակրէ առանց ուտեստի, կը հագուեցնէ առանց հագուստի, կը պաշտպանէ առանց պատսպարանի:

14. Սերը ներսը դրախտ մը կը ստեղծէ, մինչ դուրսը անապատի ամայութիւն կայ:

15. Սերը աստուածային ներգործութիւնն է մարդկային բնութեան մէջ՝ որ կը լուսաւորէ, կ'ազնուացնէ եւ կը մաքրէ միտքն ու հոգին:

16. Եթէ մարդոց եւ հրեշտակներու լեզուները խօսիմ, եւ սեր չունենամ, ձայն տուող պղնձի համ հնչող ծնծղաներու պէս կ'ըլլամ:

17. Եթէ մարգարէութիւն ունենամ, ու հասկնամ ամէն խորհուրդները եւ ամէն գիտութիւնը, եւ եթէ մինչեւ իսկ լեռները տեղափոխելու չափ հաւատք ունենամ, ու սեր չունենամ, ոչինչ եմ:

18. Եթէ բոլոր ստացուածքս աղքատներու բաժնեմ, ու մարմինս այրուելու տամ, եւ սեր չունենամ, օգուտ մը չ'ըներ ինծի:

19. Սերը համբերող է եւ քաղցրութեամբ կը վարուի:

20. Սերը չի նախանձիր, չի գոռոզանար, չի հպարտանար, անվայել վարմունք չ'ունենար, իրենը չի փնտռեր, բարկութեան չի գրգռուիր, չարութիւն չի խորհիր, անիրաւութեան չ'ուրախանար, հապա ճշմարտութեան կը խնդակցի:

21. Սերը ամէն բանի կը զիջանի, ամէն բանի կը հաւատայ, ամէն բանի կը յուսայ, ամէն բանի կը հաւատայ:

22. Սերը բնաւ չ'իյնար, բայց մարգարեութիւնները պիտի խափանին, լեզուները պիտի դադրին, գիտութիւնը պիտի խափանի:

23. Ուստի կը մնայ հաւատք, յոյս, սեր, այս երեքը. բայց ասոնց մեծագոյնը սերն է:

## 91. Վ Ի Շ Տ

1. Մեծահոգի մարդոց համար վիշտը գեղեցիկ է, եւ տառապանքը՝ անոյշ:

2. Վիշտը տեսական չէ. ցաւոտ օրերը ձմրան նման կու գան ու կ'երթան:

3. Չտուած ոսկիի պէս մաքուր են այն հոգիները, որոնք տառապանքի բովէն անցած են:

4. Կեանքը հաճոյք մը կը թուի երիտասարդին. բայց ժամանակի ընթացքին ան կը հասկնայ թէ աշխարհ վշտի եւ ուրախութեան վայր մըն է:

5. Չբաղումը վշտի լաւագոյն դեղթափն է:

6. Վիշտը աւելի իմաստութիւն կը սորվեցնէ մտախոհ մարդուն քան հաճոյքը:

7. Տառապանքը կը մաքրէ եւ կը քաղցրացնէ մարդուն բնութիւնը, եւ համբերութիւն ու համակերպութիւն կը սորվեցնէ անոր:

8. Մարդիկ յաճախ խեղճ ու թշուառ կ'ըլլան, որովհետեւ չեն հնազանդիր խղճի ձայնին:

9. Վիշտը աւելի կը մօտեցնէ երկու սրտերը քան երջանկութիւնը, եւ տառապանքը աւելի զօրաւոր կապ մըն է քան հաճոյքը:

10. Սրտնեղ եւ դիւրագրգիռ մարդը յաճախ աւելորդ նեղութիւն կը պատճառէ թէ՛ իրեն եւ թէ՛ շուրջիններուն:

11. Մեծ սիրողները մեծ տառապողներ եղած են:

12. Ընդհանրապես կինը աւելի կը դիմանայ ցաւի ու տառապանքի քան մարդը:
13. Յաճախ աւելորդ ու անտեղի մտահոգութիւններն են՝ որ վիշտ ու ցաւ կը պատճառեն:
14. Ուրախութիւնը յաճախ կ'ընկերանայ վշտին խորհրդաւոր կերպով մը. ահա թէ ինչո՛ւ մարդ երբեմն ուրախութեան արտասուք կը թափէ:
15. Ո՛չ ոք բան մը կը սորվի ուրիշին տառապանքէն. մարդ ինքը պէտք է տառապի իմաստութիւն սորվելու համար:
16. Ինչ որ վիշտ է մէկու մը համար, յաճախ ուրախութիւն է ուրիշի մը համար:
17. Վիշտը ինքնակոչ է. հանգիստը հրաւերի կը սպասէ. սփոփանքը անոնք կը գտնեն՝ որ կը փնտռեն զայն:
18. Տառապանքը ապահով փորձաքար մըն է մարդու մը ինքնութիւնը հասկնալու համար:
19. Սրտին խմորը արցունքով շաղուած է. ահա թէ ինչո՛ւ թախիծը կը պատէ սիրտը երբեմն:
20. Վիշտդ կը պակսի եթէ ուրիշներու պատմես զայն. իսկ ուրախութիւնդ կ'աւելնայ:
21. Կեանքը վշտի եւ հաճոյքի խառնուրդ մըն է, վիշտը հաճոյքի կը հետեւի որպէս անոր շուքը:
22. Կեանքը արցունքով կը սկսի եւ արցունքով կը վերջանայ:

## 92. ՎՅԱՏՈՒԹԻՒՆ

1. Վհատութիւնը առնականութեան հիմը կը խախտէ:
2. Յուսախաբութեան մէկ պատճառը չափազանց փափաքներն են:
3. Յաղթուած չի նկատուիր այն մարդը՝ որ չէ վհատած:
4. Վհատութեան աղբիւրը կեանքը սխալ տեսնելն է. կեանքի լաւ կողմերուն նայէ, ու պիտի չվհատիս:
5. Վհատութեան գլխաւոր պատճառը մարմնական տկարութիւնն է. երբ կեանքի բերդը եղող մարմինը ինկած է, վհատութիւնը կը պատէ հոգին:

6. Վհատութեան նուպաները կը կասեցնեն յառաջդիմութիւնը, բայց յիշէ թէ շատ մեծ մարդիկ ունեցած են նման նուպաներ:

7. Դժգոհ մարդը միշտ կը տրտնջայ, եւ այսպիսով կը ձանձրացնէ ուրիշները:

8. Յուսահատութիւնը կը կորսնցնէ աշխատելու ախորժակը, ու վհատութիւնը կը ջլատէ կամքի ոյժը:

9. Դժուարութեանց պատճառաւ մի՛ փոխեր գործը. ամէն ասպարեզ ունի իր լաւ եւ գէշ կողմերը:

10. Պատմութիւնը մեծ մասամբ յուսախաբութեանց շարք մըն է:

11. Արհասիրտ մարդը յուսախաբութիւններէ ալ կ'օգտուի:

12. Այն որ շատ հաճոյքներու ետեւէ կ'իյնայ, շատ յուսախաբութիւններ կ'ունենայ:

13. Շատերու վարդագոյն երազները չեն իրականացած երբեք:

14. Այն որ ամպերէ կը գանգատի, արժանի չէ արեւի:

15. Վհատութիւնը քեզի վնաս կը պատճառէ, բարեկամներուդ՝ վիշտ, թշնամիներուդ՝ ուրախութիւն:

16. Թոյլ մի՛ տար որ կեանքի հոգերը վհատեցնեն քեզ. արիութեամբ դիմաւորէ գանոնք, ու անոնք պիտի փարատին:

17. Բարձր կատարներու ճամբան օձապտոյտ եւ գառիվեր կ'ըլլայ:

### 93. ՏԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Տգիտութիւնը մարդկութեան մեծագոյն անեծքն է:

2. Տգիտութիւնը խաւար է, գիտութիւնը՝ լոյս:

3. Տգիտութիւնը գիտութեան հականիշը չէ, սխալ գիտութիւնն ալ տգիտութիւն է:

4. Ուսումը ապրուստ շահելու համար չէ միայն, այլ նաեւ կեանքը վայելելու համար:

5. Երբեմն Է՛ն տգետը ինքզինքը Է՛ն իմաստուն կը կարծէ, եւ Է՛ն փոփոխամիտը՝ ժայռի պէս հաստատամիտ:

6. Տգիտութիւնը դատարանի մէջ իբր արդարացում չ'ընդունուիր:

7. Գիտցածդ չգիտցածիդ հետ բաղդատելով շատ չնչին բան է. է՛ն գիտունը գիտութեան ովկիանոսին եզերքը խաղացող մանուկի մը պէս է:

8. Տգիտութիւնը մտքի գիշերն է. գիշե՛ր, առանց լուսնի եւ աստղերու:

9. Անուսը կ'արհամարհուի, իսկ ուսեալը կը յարգուի ամէն տեղ:

10. Մտքի աղքատութիւնը է՛ն ողբալի աղքատութիւնն է:

11. Ուսեալ միտքը կրնայ ծածկել մարմինին թերութիւնները, բայց մարմնի կատարելութիւնը չի կրնար ծածկել մտքի թերութիւնները:

12. Իմաստունը յիմարին սխալներէն կրնայ բան սորվիլ, բայց յիմարը քիչ անգամ բան կը սորվի իմաստունին խելքէն:

13. Յիմարները խնջոյք կը պատրաստեն, բայց իմաստունները կ'ուտեն գայլ:

14. Գիտնալու եւ հասկնալու հաճոյքին հետ ո՛չ մէկ հաճոյք կրնայ բաղդատուիլ:

15. Փորձառութիւնը սուղ դպրոց մըն է, սակայն յիմարները ուրիշ դպրոցի մէջ չեն սորվիր:

16. Այն որ գիտէ եւ չի գիտեր թէ գիտէ, քնացած է. արթնցո՛ւր գայլ:

Այն որ չի գիտեր եւ գիտէ թէ չի գիտեր, պարզամիտ է. սորվեցո՛ւր անոր:

Այն որ չի գիտեր եւ չի գիտեր թէ չի գիտեր, յիմար է. փախի՛ր անկէ:

Այն որ գիտէ եւ գիտէ թէ գիտէ, իմաստուն է, հետեւէ՛ անոր:

#### 94. ՓԱՌԱՍԻՐՈՒԹԻՒՆ

1. Փառասիրութիւնը ճակատագրի հետ պայքարելու կամքն է:

2. Երկու տեսակ փառասիրութիւն կայ. մէկը՝ ուրիշները գերազանցելու փափաքն է՝ պարզապէս ուրիշներէն բարձր երեւնալու համար. ասիկա հպարտութիւն է: Միւսն է ուրիշները գերազանցելու փափաքը՝ զանոնք ալ բարձրացնելու համար. ասիկա՛ է ճշմարիտ փառասիրութիւնը:

Առաջին պարագային փառասիրութիւնը նպատակ է, երկրորդին՝ միջոց:

3. Ուշ կամ կանուխ ամէն մարդ տեսակ մը փառասիրութիւն կ'ունենայ:

4. Այն որ կը թերանայ զարգանալու՝ իր աղքատութիւնը արգելք նկատելով, նկարագրի ոյժ չունի:

5. Զու հասողութենէդ չափազանց բարձր փառասիրութեամբ մի՛ չարչարեր միտքդ. փառասիրութեանդ նպատակը կարողութիւններուդ սահմանին մէջ ըլլալու է:

6. Փառասիրութիւն չունեցողը անողնայար մէկն է:

7. Շատեր նշանաւոր եղած են իրենց փառասիրութեան շնորհիւ:

8. Այն փառասիրութիւնը՝ որ ուղիղ շարժառիթներ ունի, ո՛չ ոքի կը վնասէ:

9. Գովելի է այն փառասիրութիւնը, որուն նպատակն է կարողութիւնները զարգացնել բարիք գործելու համար:

10. Դժգոհութիւնը առանց փառասիրութեան վատառողջ բան է:

11. Սրտին փափաքածը գլուխը կրնայ ձեռք անցընել ընդհանրապէս:

12. Ապրելու արժանի չէ այն մարդը՝ որ բանի մը չի ցանկար, եւ բան մը չի սորվիր:

13. Կեանքի յաջողութիւնը փափաքներու տեսակէն կախում ունի:

14. Մարդիկ իրենց նպատակակետը ա՛յնչափ բարձր կը դնեն յաճախ, որուն հազիւ թէ հասնին, եւ երբոր հասնին՝ կը ցաւին որ աւելի բարձր չեն դրած զայն:

15. Փառասիրութիւնը կը զօրացնէ տկարը, եւ քաջութիւն կու տայ երկչոտին:

16. Տենչը ի վերջոյ ներշնչումի կը փոխուի, եւ կ'ազնուացնէ կեանքը:

17. Պէտք է քաջալերել հարստանալու պատուաւոր ջանքը:

18. Կեանքի է՛ն անոյշ բանն է երազ ունենալ եւ երազելով մեռնիլ:

### 95. ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ

1. Կեանքը փորձառության դպրոց մըն է, եւ մարդիկ անոր աշակերտները:
2. Գործնական իմաստութիւնը փորձառության դպրոցի մէջ միայն կարելի է սորվիլ:
3. Փորձառութիւնը դառն է յաճախ, բայց շատ առողջարար:
4. Փորձառու մարդը ժամանակը իրեն օգնական կը նկատէ:
5. Առիթներէն փորձառութիւն սորվէ:
6. Պատմութիւնը անցեալի փորձառութեան արձանագրութիւնն է:
7. Փորձառութիւնը ո՛րքան լայն ըլլայ, դատողութիւնն ալ ա՛յնքան ուղիղ կ'ըլլայ:
8. Անցեալի սխալներուն նայէ միմիայն անոնցմէ փորձառութիւն սորվելու համար:
9. Եթէ փորձառութիւնդ անելցնել կ'ուզես, քեզմէ անելի փորձառու մարդոց հետ ընկերակցութիւն ըրէ:
10. Ուսումդ փորձառութենէդ անդին չի կրնար անցնիլ:
11. Է՛ն փորձառու մարդն իսկ կրնայ ուրիշէն օգտուիլ:
12. Ընթերցանութիւնը չի կրնար փորձառութեան տեղը բռնել:
13. Տխուր իրականութիւն մըն է թէ փորձառութիւնը չի կրնար ուրիշին փոխանցուիլ. ամէն մարդ ի՛նքը պետք է փորձառութիւն ստանայ կեանքի դասերէն:
14. Իմաստուն մարդը այն է՝ որ թէ՛ իր սխալներէն կ'օգտուի, եւ թէ՛ ուրիշին սխալներէն:
15. Իմաստուն մարդը այն է՝ որ իր թշնամիէն իսկ օգտուիլ գիտէ:
16. Երիտասարդէն փորձառութիւն եւ դատողութիւն մի՛ ակնկալէր:
17. Սխալները սուղ ուսուցիչներ են, բայց լաւ ուսուցիչներ են:
18. Փորձառութիւնը դառն արմատ մըն է, բայց իր պտուղը քաղցր է:

### 96. ՓՈՐՁՈՒԹԻՒՆ

1. Արթուն կեցեք որպէսզի փորձութեան մէջ չիյնաք:



2. Առօրեայ փորձութիւններ են ծուլութիւնն ու անհոգութիւնը:
3. Գեղեցիկ կին մը՝ եթէ աղքատ է՝ պետք է շատ արթուն ըլլայ, որովհետեւ իր գեղեցկութիւնը ուրիշը կը փորձէ, եւ իր աղքատութիւնը՝ զինքը:
4. Այն որ փորձութեան ժամանակ «ո՛չ» ըսել չի գիտեր, կործանումի ճամբուն վրայ կը գտնուի:
5. Ձնջէ՛ փորձութիւնը, եւ դուն սրբած կ'ըլլաս մեղքի սեւ ցանկը:
6. Ամէն տարիք ունի իր փորձութիւնը, բայց երիտասարդութիւնը փորձութեան տարիքն է:
7. Պարապ ձեռքն ու պարապ միտքը շատ ենթակայ են փորձութեան:
8. Աշխարհ կը յարգէ զանոնք՝ որոնք գիտեն փորձութեան դիմադրել:
9. Մեծ ոյժերը — ֆիզիքական, իմացական, քաղաքական եւ տնտեսական — մեծ փորձութիւններ են միշտ, եթէ առաքիլութիւնը չկառավարէ զանոնք:
10. Ո՛չ ոք կրնայ փորձութենէ ազատուիլ, եթէ չդիմադրէ անոր:
11. Զու ձախողութիւնդ քեզ կը փորձէ, քու յաջողութիւնդ՝ ուրիշը:
12. Փորձութեան հետ մի՛ խաղար, կը յաղթուիս անպատճառ:
13. Չփորձուելու լաւագոյն ճամբան փորձութեան չմօտենալ է: Եւս մօտեցաւ արգիլուած պտուղին, ու փորձուեցաւ ուտել անկէ:
14. Սատանային դիմադրեցէ՛ք, եւ ան պիտի փախչի ձեզմէ:
15. Փորձութիւնը քաղցր արմատ մըն է, բայց իր պտուղը դառն է:
16. Մեզ փորձութեան մի՛ տանիր, հապա չարէն ազատէ:

## 97. ԶԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

1. Զաղաքավարութիւնը նկարագրի զարդն է:
2. Մանուկը կանուխէն վարժեցնելու է քաղաքավարութեան, որպէսզի ան ունակութիւն դառնայ իրեն:

3. Քաղաքավարությունը այն է մարդուն համար, ինչ որ է գեղեցկությունը կնոջ համար:
4. Քաղաքավարությունը իրական զարդ մըն է, եւ գեղեցիկ հագուստ մը:
5. Բարեկրթությունը միա՛կ կերպն է կրթեալին հետ վարուելու, եւ լաւագոյն կերպը անկիրթին հետ վարուելու:
6. Պզտիկ մեծարանքները երբեմն խիստ մեծ են, մեծ՝ իրենց արդիւնքներով:
7. Մաքրությունը քաղաքավարութեան առաջին նշանն է:
8. Քաղաքավարական պզտիկ ձեւերն իսկ քու նկարագրիդ մասին ասելի բան կը յայտնեն քան շատ տարտամ խօսքեր:
9. Կնոջ հանդէպ քաղաքավարությունը միշտ եւ ամէն տեղ ստիպողական է:
10. Հպարտ ու եսասեր մարդիկ չեն կրնար քաղաքավար ըլլալ, որովհետեւ ուրիշներուն վրայ արհամարհանքով կը նային, եւ մարդու տեղ չեն դներ զանոնք:
11. Քաղաքավարությունը՝ որպէս առեւտուրի յատկութիւն, ոսկիի հաւասար արժէք ունի: Կոշտ մարդը առեւտուրի համար ծնած չէ:
12. Զեզ ճանչցողները կրնան քու թերութիւններդ ներել, բայց աշխարհ կը ճանչնայ քեզ այնպէս՝ ինչպէս կը տեսնէ քեզ:
13. Մարդու մը պզտիկ մէկ խօսքը կամ գործը կրնայ երբեմն իր ճակատագիրը վճռել:
14. Իմաստուն մարդը բնա՛ն չի բռնաբարեր քաղաքավարութեան կանոնները:
15. Յաջողությունը կեանքի ո՛րեւէ ասպարեզի մէջ քաղաքավարութեան տեղը չի կրնար բռնել:
16. Անոյշ լեզուն օձը ծակէն կը հանէ:

### 98. ՔԱԶՈՒԹԻՒՆ

1. Ճշմարիտ քաջությունը ֆիզիքական եւ բարոյական յատկութեանց միացումն է:
2. Ֆիզիքական քաջությունը՝ որ ամէն վտանգ կ'արհամարհէ, պատերազմի մէջ պետք է. բարոյական քաջությունը՝

որ ամեն կարծիք կ'արհամարհե, ընկերության մեջ պետք է քայց մեծ մարդոց համար երկուքն ալ պետք են:

3. Բարոյական քաջութիւն է ճշմարտութիւնը խօսիլ, արդար ըլլալ, պարկեշտ ըլլալ, փորձութեան դիմադրել, եւ պարտականութիւնը կատարել:

4. Եթէ մեկը քաջութեան առաքինութիւնը չունի, ուրիշ առաքինութիւն չի կրնար ունենալ:

5. Բարոյական հերոսութիւնը Է՛ն ընտիր մարդոց գործն է:

6. Վախը կ'աղաչէ, քաջութիւնը կը մտածէ. վախը բարբարոսութիւն է, քաջութիւնը՝ քաղաքակրթութիւն:

7. Քաջութիւն է պարտականութեան ճամբուն մեջ քալել լուռ ու մունջ, մինչ ուրիշները կը յաջողին ու կը փայլին, ոտնակոխելով բարոյական օրէնքները:

8. Սովորական կեանքի մեջ այնչափ քաջութիւն պետք է, որչափ որ պետք է մասնաւոր պարագաներու մեջ:

9. Կնոջ քաջութիւնը կրաւորական տեսակէ ըլլալուն համար նուազ իրական չէ. անիկա չի ծափահարուիր, որովհետեւ անոր քաջութիւնները յաճախ ընտանեկան կեանքի մեջ տեղի կ'ունենան:

10. Լուռ հերոսութիւն մը կայ՝ որ յաճախ խոնարհ խաւերու եւ աննշմար անկիւններու մեջ տեղի կ'ունենայ, եւ որու մասին շատ քիչ կը խօսուի. ահա՛ այս է մեծագոյն հերոսութիւնը:

11. Քաջութեան ոգին մարդուն ամբողջ էութիւնը կը փոխակերպէ:

12. Առնական քաջութիւնը վեհ է եւ պատկառելի:

13. Փափկութիւնն ու քաղցրութիւնը քաջութեան հակառակ չեն. քաջ մեկը կրնայ քաղցր ու քնքոյշ բնաւորութեան տէր ըլլալ:

14. Ճշմարտապէս քաջ մարդու համար անհրաժեշտ բաներ են մաքուր խիղճ, յստակ միտք, եւ զօրաւոր մարմին:

15. Կ'արժէ ունենալ այն քաջութիւնը, որ անվարան կը շարունակէ իր ճամբան՝ ի հեճուկս ամեն խժբժանքներու, եւ չի կասկածիր իր յաջողութեան:

16. Ճշմարիտ քաջութեան փորձաքարն է՝ ամեն պարագայի տակ ուղիղ գործելու համարձակութիւնը:

17. Քաջութիւնը՝ առանց իմաստութեան՝ յանդգնութիւն է պարզապէս:

18. Ճշմարիտ հերոսը եւ իտեալ զինուորը այն է, որ քաջաբար կը դիմաւորէ վտանգը անոր դէմ կռուելու համար:
19. Արդար դատը քաջութիւն կը ներշնչէ:
20. Քաջաբար գրաւէ քու տեղդ աշխարհի մէջ. ամէն ինչ քաջերու կը պատկանի:
21. Համարձակ մարդիկ աշխարհը կը շարժեն:
22. Հերոսական գործերը տարափոխիկ են, եւ վեհ կեանքերը հեռահաս ազդեցութիւն ունին:
23. Քաջե՛րը կը ժառանգեն Աստուծոյ թագաւորութիւնը:
24. Յաղթութիւնը քաջին է, երկինքը՝ առաքինի մարդուն:

### 99. ԲՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

1. Բննադատութիւնը պտուղն է խոր հմտութեան եւ լայն փորձառութեան:
2. Լաւ քննադատը՝ լաւ դատաւորի պէս՝ պետք է որ օրէնքով եւ փաստով գործէ:
3. Բննադատութեան նպատակը վարկաբեկել չէ, այլ ճշմարտութիւնը երեւան հանել:
4. Բննադատը պետք է որ առաւելութիւնները գնահատէ, ինչպէս որ կը ձաղկէ թերութիւնները:
5. Անկողմակալութիւնը քննադատութեան մեծագոյն զարդն է:
6. Այն որ յաջողիլ կ'ուզէ պետք է որ դիմանայ քննադատութեան:
7. Մի՛ քննադատեր գործ տեսնող մարդը. ատիկա քալող ձիուն գլխուն զարնել է:
8. Վախկոտները կը վախնան քննադատութենէ, եւ չեն համարձակիր իրենց համոզումները անկեղծօրէն արտայայտելու:
9. Մանուկները օրինակի պետք ունին, ո՛չ թէ քննադատութեան:
10. Առողջ քննադատութիւնը օգտակար է միայն այն ատեն, երբ որ ըլլայ յարմար ժամանակին, յարմար տեղը, եւ յարմար եղանակով:
11. Աւելի լաւ է որ բոլոր խօսքերուդ վրայ մտածես, քան թէ բոլոր մտածածներդ խօսիս:

12. Երիտասարդ կիները քննադատել ազնիւ մարդու գործ չէ:
13. Իտեալ մարդը ո՛չ գովեստ կը հպարտանայ, ո՛չ ալ քննադատութենէ կը վշտանայ:
14. Քաջ մարդու գործ է գովեստ ու պարսաւէ վեր բարձրանալ:
15. Երբոր գործը անթերի է, շարժառիթները մի՛ խօթօժեր:
16. Երկար ու մանրակրկիտ քննութենէ առաջ ո՛չ քննադատ, ո՛չ ալ գովաբանէ:
17. Մարդը պէտք է գնահատուի իր առաւելութիւններովը, ո՛չ թէ իր թերութիւններովը:
18. Մի՛ դատեր մէկը իր սխալներէն եթէ անոնցմէ օգտուիլ գիտէ:
19. Աւելի դիրին է մարդու մը սխալները տեսնել, քան թէ անոնց աչք գոցել:
20. Եթէ ուրիշը կը ծաղրես, քու տկարութիւնդ մէջտեղ կը դնես:
21. Եթէ կ'ուզես տաղանդներդ զարգացնել, բարեկամներու քննադատութեան մի՛ վստահիր:
22. Գործ մը սխալ շարժառիթի մի՛ վերագրեր, երբ որ կրնաս ուղիղ շարժառիթ մը տեսնել:
23. Քննադատելու ատեն դուն զքեզ ուրիշին տեղը դիր:
24. Ընդհանուր սխալ մըն է թեթեւ փաստերու վրայ դատել ու դատապարտել ուրիշը:
25. Մի՛ դատէք որ չդատուիք:
26. Այն չափով որ կը չափէք, պիտի չափուի ձեզի:
27. Նախ քեզի ասեղը խօթէ, յետոյ մախաթը ուրիշին:

### 100. ՕՐԻՆԱԿ

1. Լաւ օրինակը լաւագոյն ուսուցիչն է:
2. Օրինակը շատ վարակիչ է, եւ շատ փոխանցիկ:
3. Մեծ մարդոց կենսագրութիւնը շինիչ է, եւ օգտակար:
4. Ընտանիքի մէջ կատարուած բաները շատ աւելի թօժն եւ ուղղութիւն կու տան նկարագրին, քան խրատները, քարոզներն ու գիրքերը:

5. Կենսագրութեան գլխաւոր օգուտն է ազնիւ նկարագրի օրինակներ տալ:
6. Գործը աւելի ազդեցիկ է քան խօսքը:
7. Աւելի լաւ է օրինակի հետեւիլ, քան թէ խրատի:
8. Լաւ խրատը իր ոյժն ունի, բայց եթէ լաւ օրինակը չընկերանայ անոր, կը կորսնցնէ իր ոյժը:
9. Երբոր չես կրնար ընելիքդ որոշել, փորձառու մարդոց օրինակին հետեւէ:
10. Լաւ օրինակը լաւ պտուղ կու տայ միշտ:
11. Ազնիւ օրինակները ազնիւ գործերու կը մղեն:
12. Օրինակը գործով կրթել է, փոխանակ խօսքով:
13. Պատուէրը ճամբան կը ցուցնէ, օրինակը կ'առաջնորդէ:
14. Գործնական կրօնը աւելի շինիչ է, քան վարդապետական հատորները:
15. Միա՛կ առաքինի գործ մը կրցած է բարձրացնել ամբողջ գիւղ մը, քաղաք մը, եւ ազգ մը:
16. Բարոյական ոյժերը՝ բնութեան ոյժերուն պէս՝ լուռ եւ անշշուկ կը գործեն:
17. Օրինակը կենսական դեր ունի մանուկին նկարագրին կազմութեան մէջ:
18. Սխալ գործ մը կրնայ ստուեր ձգել ամբողջ կեանքի մը վրայ:
19. Գործը աւելի պերճախօս է քան խօսքը:
20. Յաջողութիւնը յաճախ ձեռք կը բերուի յաջող մարդոց օրինակին հետեւելով:
21. Սխալ է միշտ ընդօրինակել ուրիշները:
22. Գործդ այնքան բարձր կը խօսի, որ չեմ լսեր խօսքերդ:
23. Մարդս ոչինչ է. գործն է ամէն ինչ:
24. Ինչ որ կը ցանես նոյնը կը հնձես:

## Վ Ե Ր Ձ